



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1012

398

200 -

Многократное использование  
книжки для хранения  
1/2 страницы сургучной печати  
используя.

McLarty

1901 р.

13 7/8.


Английский.

№ 1355

2003







Հայ  
398



# ԼԵՒՈՆԻ ՎԻՅՏԸ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Տ Վ Է Գ Է

ԶՈՐՍ ԳԼՈՒԽ ԲԱԺԱՆԱԺ

ԵՒ ԶԱՆԱԶԱՆ

ԲԱՆԱՍՑԵՂԹՈՒԹԻՒՆՆԵՐ



Ազնիւ ընկեր, չը մոռանաս.  
Քաւաւձան, ջերմ սիրով  
Ես սիրել եմ իմ Հայրենիք, —  
Գնա՛ւ Գու՛նոյ՛ն շաւղով :

(Երգ մեռ. Հայրենասիրի, 220 երես.)

Տպագրութիւնը Հեղինակի ծախքով .

Шахазизин Следовит  
Скорбь Левона. М. 1865 г.



լամ  
398

# ԼԵՒՈՆԻ ՎԻՇՏԸ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ Վ Է Պ Բ

ՉՈՐՍ ԳԼՈՒԽ ԲԱԺԱՆԱԺ

ԵՒ ՋԱՆԱՋԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԹՈՒԹԻՒՆՆԵՐ



Ազնիւ ընկեր, չը մոռանաս .

Քիչ աւաճան, ջերմ սիրով  
Ես սիրել եմ իմ հայրենիք, —  
Գնա՛ւ և դու նոյ՛ն շաւղով :

(Երգ մեռ. Հայրենասիրի, 220 երես.)

Տպագրութիւնը Հեղինակի ծախքով .

ANTONIO M. BERNAL  
ANTONIO M. BERNAL  
1897

2823 № 1355

ՍՄՐԱՅԱՅ ՇԱՀԱԶԻԶՆԱՆ

# ԼԵԻՈՆԻ ՎԻՉՏԸ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԻՊԲ

ԶՈՐՍ ԳԼՈՒԻ ԲԵՃԱՆՈՒԱՆ

ԵՒ ԶԱՆԱԶԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԺՈՒԹԻՒՆՆԵՐ

566

ՄՈՍԿՈՒԱ

ТИПОГР. ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТ. ЯЗЫКОВЪ (А. МАМОНТОВЪ).

1865 .

№ 1827

5852

Одобрено Ценсурю. Москва 3 Декабря 1864 г.



398-2004



1008  
37965 / 9

**ՆՈՐԵՐՈՐՄ Է**

**ՏՕՆԱԽՄՐՈՒԹԵԱՆ ՅԻՄՆԱՄԵԱՆ ՅՈՐԵԼԵԱՆԻ**

**ԼԵՂԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԷ**

**ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՂՈՒԱՅ,**

**ՈՐ ԼԻՆԵԼՈՒ Է 1865 ԹՈՒՆԿ. Մ ԱՅԻՍ ԱՄՍԻՆ**



## ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂԸ

Թէ ծանր պիտոյքն հասարակութեան  
Գարձաւ քո համար նիւթ մտածութեան,

Թէ սրտիդ վերայ ծանրացաւ ներկայ,  
Որպէս քո կեանքի մի մեծ առարկայ —

Քեզ, ազգի անդամ և ազգի որդի,  
ԼԵՒՈՆԻ ՎԻՇՏԸ առաջարկեցի:





## Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Довольно людей кормили сладостями; у нихъ отъ этого испортился желудокъ: нужны горькія лекарства, Вд-кія истины.

Дермонтовъ.  
(Гер. наш. вр.)

1.

**Մ**անանակակից գրումեմ լեզուով ,  
Որ ամենայն մարդ կարգայ , Հասկանայ ,  
Որ նա շնայէ այլ ակնոցներով ,  
Որ իւր սիւսիհանքն ընու թիւնը տայ . —  
Կեանքը ինձ ասաց . Մանուկ , քեզ դափնի ,  
Գնա՛ նոր խօսքով բան մի գրուցել ,  
Եւ լարիրին թոս մու թ գրուածների  
Յանցանք Համարիր ազգիդ նուիրել :

## II.

Եւ ես հնազանդ այդ առողջ ձայնին,  
 Չկամիմ նմանիլ անառակ որդուն,  
 Չօհումեմ գրիչս կենդանի լեզուին,  
 Որքան ձեռնհաս իմ կարողութիւն:  
 Մանուկ հրաշագեղ, թո՛թով ոգելից,  
 Գու աշխարհաբառ մեր սրտի թարգման;  
 Գո՛ւ մեզ հարազատ ծննդեան օրից,  
 Թո՛ղ քեզ նախատեն մարդիկ հնութեան:

## III.

Նորա տեսնումեն միայն թերութիւն,  
 Միայն դեռ անհիւթ, մանուկ խակութիւն.  
 Չեն լսում ձայնը մարգարէական  
 Նորա ապագայ ներդաշնակութեան. —  
 Նա ևս կը բացուի, կ'աճէ զուարթագին,  
 Կը ծանրաբեռնի որպէս պերճ ամառ,  
 Եւ քնքուշաշարժ սրտի լարերին  
 Կը գտնէ և խօսք և հնչիւն յարմար:

## IV.

Չկամիմ հարկ տալ անպէտք ապրանքին,  
 Այն ոլորածոյ ճարտասանութեան,  
 Ես համարել եմ նորան մահի դին, —  
 Ամենամեծ գործ բթամտութեան.  
 Նորա մէջ տեսայ մնայլը հնութեան,  
 Բայց երբէք չտեսայ ներկայի հոգին;

Խորամանկահիւս բաներ խօսեցան, —  
 Ես հետեւեցի պարզ լողիկային . . .

V.

Եւ օդ սղոցել կացնէ բառերով,  
 Եւ միջնադարեան տարածել փոշին,  
 Բողոքումէ Խիղճս երկսայրի սրով .  
 Այդ սեփհական չէ մեր ժամանակին, —  
 Ալեկոծուեցան ձերերն հասակը,  
 Փրփուրը ժայթքեց մօրուքի վերայ .  
 «Ա՛հ, անմիտ կարծիք, վա՛հ, անմիտ խօսքեր,  
 Հէ՛, անտես առնենք լեզուն Ադամայ» .

VI.

Որդեր եռացին և լայն բացուեցան  
 Նոցա առաջև դժոխքի դռներ,  
 Եւ, ո՛վ կատաղի մոլեռանդութեան,  
 Եկան, կիտուեցան նախանձի լեռներ .  
 Լեզո՛ւ սրեցին, աղէ՛ղ լարեցին,  
 Իր առատ առատ նետեր արձակեն .  
 Գատապարտելի գործ ձեռնարկեցին —  
 Ի՞նչու — որ աղգին խաւար ժողովեն . . .

VII.

«Սեւքրդ ցնդել է, լեզուազար լակոտ,  
 Անպէտ ապրանք է ճարտասանութիւն» .

Եւ նոցա գոռը զըզըզումէ օգ,  
 Որպէս մրմնող քամու սօսափիւն . . .  
 «Բժամտութիւն», գոչումեն Ծերեր, —  
 Անէծք է վիժում անդուռն բերանից .  
 Եւ մօրուքների մի կանգուն ձարեր  
 Գողումեն որպէս ահագին հողմից . .

## VIII.

Անխոով եմ ես, եթէ իմ վերայ  
 Ամբաստանութեան զան զիզուեն բեռներ .  
 Ե՞րբեն բան տեսել, ինչպէս որ նա կայ,  
 Ճշմարտութենից վշտացած աչքեր:  
 Կորիւր, Չարասէր: Լռիւր, Ամբարիշտ .  
 Ես պիտի ճեղքեմ քո նենգ մեքենան,  
 Պիտի խորտակեմ սրտիդ սատանան, —  
 Պիտի ժամանեմ ես նաւահանգիստ:

## IX.

Ո՛չ քեզ, ո՛վ մուզա, բարձր Ոլիմպից  
 Կանչումեմ այստեղ, հողանիւթ երկիր;  
 Գու ինձ մի հիւսիւր պսակ դափնիքից . —  
 Այն քնարներին կիսաթել շնորհիւր .  
 Իմաստակների ցնդած ուղեղին  
 Գեռ ունիս ազդել թուլիչ զօրութիւն;  
 Հաշիշ, ո՛վ մուզա, — թո՛ղ թեւաորուին,  
 Թո՛ղ հարսին — յետոյ ի՛նչ ճարտարութիւն:

## X.

Առասպելական կեղծեալ տիտաններ  
 Թող իսկականի ընդունին պատկեր;  
 Հրէշների շարքն երևութանան,  
 Եւ բոլոր ցնորք լայնափոր հնութեան:  
 Վեհափնա սագեր, քնար լարեցէք,  
 Ոչ ձեր պապերը Հոռմ փրկեցին.  
 Առանց հանաքի զուռնա փշեցէք,  
 Թող աշխարհ լսէ, թող փառք տայ երգչին:

## XI.

Ծաղրածուների գործերն ցաւագար,  
 Աղաչումեմ ես, ժամ մի դադարեն,  
 Որոնք համոզմունք, ուխտեալ գաղափար  
 Այսօր պնդումեն, որ էգուց հերքեն. —  
 Անտաշ մրողներ, որ գարշ քսութիւն  
 Հանապաղ ունիք ձեզ հաղորդակից,  
 Կապեցէք սակաւ ձեր սողուն լեզուն, —  
 Առաւել օգուտ ունիք դորանից:

## XII.

Անցաւ ժամանակն երևակայել  
 Աւազուտ դաշտում դալար ծաղիկներ.  
 Եւ դադարեցէք ցնորարանել  
 Հայի մեծութեան ոսկի երազներ:

Մէք խաւարի մէջ մինչ գլուխ թաղած,  
 Կամինք հասանել երկնի բարձրութիւն,  
 Մէք բարոյապէս անչափ յետ ընկած,  
 Ծխումենք մեզ խունկ և յարգոյ անուն:

## XIII.

Մէք զարմանումենք և ծափ ենք տալի,  
 Որ Հայր զարթեց իւր երկար քնից.  
 Բայց մէք չենք տեսնում այն սարսափելի  
 Փոսր, որ նորան փորումեն տակից;  
 Եւ մեզ դովելով, և մեզ խարելով,  
 Չե՞նք բացում արդեօք դուռը կորստեան;  
 Ո՞չ անմտութեամբ, ո՞չ չար ձեռներով  
 Չգումենք կամուրջ մեր թշուառութեան:

## XVI.

Մաշեցինք մեր խելքն անօգուտ գործով,  
 Գիշեր ու ցերեկ անպտուղ անցան,  
 Մէք չխրատուեցանք անցածի սխալով,  
 Եւ ձեռնարկեցինք մէք ամենայն բան;  
 Ծախեցինք գրիչ ոսկու ճաճանչին,  
 Վաճառեցինք սիրտ և ազնիւ հոգի.  
 Լռեցաւ մեր մէջ խիղճը մարդկային,  
 Եւ մնաց աւեր կեանքը հայ-ազգի...

## XV.

Եւ ազգ գոչեցինք, և օղի վերայ  
 Գրեցինք հիմքը նորա կրթութեան, —

Եւ մէք խաբեցանք, որպէս երեխայ,  
 Եւ Հայի վէրքը մնաց անդարման,  
 Խաւար գրուածներ, կաղ, կոյր, բռնադատ  
 Բանաստեղծութիւն և թարգմանութիւն  
 Տուեցինք Հային, և նա յուսահատ  
 Փակեց ականջներ և մտաւ իւր տուն:

## XVI.

Չգեցէք փետուրն աղաւձէական,  
 Մերկապարանոց եկէք դուք հանդէս, —  
 Թող լաւ ճանաչէ աշխարհ ամենայն,  
 Ար ազուաւ էք դուք կամ բու սեւատես:  
 Այս տեղ կտրումեմ իմ խօսակցութիւն, —  
 Ես շտապումեմ իմ վէպքը պատմել.  
 Մէք կը հանդիպենք մինչ ի տեսութիւն.  
 Չեր հետ հաշիւըս դեռ չէ վերջացել...

## XVII.

Ո՛վ դու Մոսկուա, քո փողոցներում  
 Արդէն խոնումէ հանդէսն շտապով;  
 Այլք ժողովումեն մագաղիններում  
 Պատրաստել տօնին ընտիր ճաշակով  
 Նորագոյն զարդեր, փողապատ, ձեռնոց,  
 Քօրոց, նուրբ բեհեզ, շալեր մետաքսի,  
 Պատմութեան, սալօպ, լոսնէտ, հովանոց,  
 Թաշկինակ բատիստ, մանեակներ ոսկի:

## XVIII.

Քօղեր մեծարուեստ ասղնէգործած ,  
 Բուռնուս գոյնդգոյն վերջաւորներով ,  
 Եւ նոր գլխարկներ օսկէթել նաշխած ,  
 Եւ բարակահիւս ժապաւէններով ;  
 Եւ ամենայն բան , և ամեն լաթեր ,  
 Որով պարասպ մարդ կարող էր պճնել ,  
 Եւ որ զեղազէտ , և 'որ նորասէր  
 Ֆրանսիացու խելքն է ստեղծել :

## XIX.

Լի են բազմութեամբ ժողովարաններ :  
 Թնդումէ թատրոն քաղցր երաժիշտով :  
 Աջ-ձախ թեքելով ճօճումէ ոտեր  
 Գերասանուհին , — և ի՛նչ արուեստով :  
 Ծափահարութիւնք ցածից , վերևից ,  
 Խլացնումեն մարդուս լսելիք ;  
 Եւ թատրոնասէրք բազկաթոռներից  
 Չօնումեն առատ սիրոյ հետ գափնիք :

## XX.

Բայց նայիր , Մօսկուա , սենեակ մտնելով ,  
 Փակումեմ դռներս երկար միջոցով .  
 Ծածկուեցէք ուրեմն , աղմուկ աշխարհի ,  
 Եւ թեթևաքայլ գերասանուհի . . .

Ողջոյն ձեզ, պատեր, ամրաշէն հիմնած,  
 Եւ ծաղկանկար թղթով զարդարած;  
 Ողջոյն ձեզ, գրիչ և թանաքաման,  
 Ողջոյն ձեզ, աթո՛ռ և գրասեղան:

XXI:

Գեպ ի գործ ուրեմն, մի՛ գուցէ հանդի  
 Սրտիս փափազը ոտեր հիւսելու.  
 Ի՞նչ պիտի անեմ, թէ աչքըդ դիպչի,  
 Եւ կիսատ գործիս ուրախանաս դու:  
 Այժմ խնդրումեմ. թէ բարեկամներ,  
 Թէ շարեացակամք, ինձ հետևեցէք.  
 Չծռէք գրածս ըստ հաճոյքին ձեր.  
 Ահա՛ և Լևոն, — հապա լսեցէք:

398-2004  
 1008 / 37965  
 [blacked out]



The first part of the paper is devoted to a description of the  
 various species of the genus *...* which have been  
 discovered in the region of the ...  
 The second part of the paper is devoted to a description of the  
 various species of the genus *...* which have been  
 discovered in the region of the ...  
 The third part of the paper is devoted to a description of the  
 various species of the genus *...* which have been  
 discovered in the region of the ...  
 The fourth part of the paper is devoted to a description of the  
 various species of the genus *...* which have been  
 discovered in the region of the ...  
 The fifth part of the paper is devoted to a description of the  
 various species of the genus *...* which have been  
 discovered in the region of the ...  
 The sixth part of the paper is devoted to a description of the  
 various species of the genus *...* which have been  
 discovered in the region of the ...  
 The seventh part of the paper is devoted to a description of the  
 various species of the genus *...* which have been  
 discovered in the region of the ...  
 The eighth part of the paper is devoted to a description of the  
 various species of the genus *...* which have been  
 discovered in the region of the ...  
 The ninth part of the paper is devoted to a description of the  
 various species of the genus *...* which have been  
 discovered in the region of the ...  
 The tenth part of the paper is devoted to a description of the  
 various species of the genus *...* which have been  
 discovered in the region of the ...



2007  
2007



Handwritten text on the right margin, possibly a date or reference number.



Faint, illegible text in the upper section of the page, possibly bleed-through from the reverse side.

# ԼԵՒՈՆԻ ՎԻՃԵԸ

Faint, illegible text in the middle section of the page, possibly bleed-through from the reverse side.

Faint, illegible text in the lower section of the page, possibly bleed-through from the reverse side.



Handwritten blue ink notes or signatures on the left margin.

ԲՈՂԱՆԳԻԱԿՈՒԹԻՒՆ I ԳԼԽԻ

Լեւոնի նկարագիրը; նորա մայրը և ծանօթների անբարեցա-  
կամութիւնը: Լեւոնի ուսման բարի հեռեանքը՝ նա նման չէ իւր  
ուսումնակիցներին: Մեք ինչպէս կարող ենք լինել հասարակարար  
ազատ և բաղդաւոր: Լեւոնի ցուրտ ախրութիւնը: Եւրօպայի ազ-  
գային քաջագործութիւնքը, և Իտալական սպառազինութիւնը,  
որպէս շարժառիթ Լեւոնի ազգասիրութեան: Լեւոնի հայ ընկե-  
րակիցքը: Նորա Սէրը; սիրոյ բնութիւնը, ախտը և հեռեանքը:  
Առաջին խօսքը Լեւոնի հայի անշարժութեան վերայ: Կենդանի  
զրոյց ազգութեան հետ և սուտ ազգասէրների: Պարսաւանք ու-  
սումնառու հայ երիտասարդութեան և ոգի լից հրաւելք ազգասի-  
րութեան: Ամենայն բան մեռանում, միայն բարի գործը չէ մեռա-  
նում: Ցաւակցարար խորհրդածութիւն ազգի վերայ, Լեւոն յօժար  
է գնալ հայրենիք: Սրտաշարժ հրաժեշտը իւր անցած Սէրի հետ,  
որ ներկայանում նորան: Լեւոն թողում Մոսկուա, և պատրաս-  
տութիւն է տեսնում այց գնալ հայրենիքին և գարման տանել  
նորա խեղճութեան:

Հեղինակի պարսաւանքը ախտաւոր ընթերցողներին:



## ԼԵՒՈՆԻ ՎԻՃՅԸ

### ԺԱՄԱՆԱԿԱԿԵՐՅ ՎԷՂՎ

#### ՓԼՈՒԽ I.

Ты хочешь знать давно — о чемъ моя печаль,  
Которой никогда я не могу забыть!  
Не спрашивай о томъ; тоску мою  
Кто можетъ излечить?

*Байронъ.*

(Շայլդը-Գարոլդը քեր. Մինաева.)

**Ա**չ ջրերի մօտ, ուր թռչունների  
Նուազումէ պարն քաղցր մեղեդիք,  
Վամ անտառներում, ուր տերևալի  
Եւ կանաչաղարդ աճումեն սօսիք, —  
Վամիմ Ղևոնի կեանքը նկարել .  
Այնտեղ սրբազան էին մեհաններ,  
Որ քերթողները հաճեցան պատուել, —  
Այժմ շնն կենում այնտեղ մուղաներ:

Այլ քաղաքի մէջ — և այն ահագին  
 Ուր կենցաղական հոգսերն եռում,  
 Ուր ամենայն մարդ տէր է իւր դործին, —  
 Ա՛յնտեղ է Լեւոն ձեզ ներկայանում :

Թէ ո՞վ էր Լեւոն, և ի՞նչ նորա ցեղ —  
 Չեղ ասելու չեմ, — այդ աւելորդ բան .  
 Մի հին հայ տանից, և այն ո՛չ շքեղ,  
 Ծագումէր Լեւոն: — Այսբան բաւական :

Ոչ թէ երկիւղ կայ, իմ բարեկամներ,  
 Որ մեր Լեւոնը մնումէ ծածուկ .  
 Ո՛չ, ի՞նչու ասեմ — երբ օգուտ չունէր,  
 Եւ խնդրումեմ ձեզ շնորհանաք դուք :

Մայր մի ունէր ծեր: Նորա տեսութեան  
 Խիստ փափագումէր Լեւոն, կարօտից  
 Քաղվումէր հոգին, և առուի նման  
 Արտասուք հարուստ թափվումէր աչքից :

Մի մայր էր միայն. ծերութեան ալիք  
 Արդէն խորչամած ճակատի վերան  
 Տպաւորել էր իւր տխուր կնիք, —  
 Մասամբ Լեւոնը պատճառեց նորան,

Եւ սիրումէր շատ այդ ալեորդ .  
 Երբեմն, ստումն, մաշուած վշտագին

Կը մեռնէր Ղևոն. — բայց պառաւ մայրը  
Իւր յիշատակով սաստումէր ցաւին :

Ունէր մի քանի և բարեկամներ,  
Որ, ինձ անյայտ է, մի կուրուժենով  
Խորտակել նորան ոտով ու գլխով  
Ջանադիր էին, — Ղևոն այդ գիտէր :

Եւ այդ վայրահաչ անառակներից  
Խիստ վշտացել էր առաքինութիւն,  
Եւ խռովել էր Աստուած դոցանից.  
Խռով էր, այո՛, և ճշմարտութիւն . . .

Մարդիկ սովոր են, մանաւանդ անկիրթ  
Եւ ասիացի նեղատես հոգով,  
Հայհոյել մի մարդ, մի անկաշառ սիրտ,  
Եւ ամեն գործին նայել չար աչքով :

Ինչ ատելի է բարեխոհ սրտին—  
Գոքա գրկումեն և համբուրումեն ;  
Ողջոյն չըտալով սուրբ հրեշտակին—  
Բանսարկու գէը նախապատվումեն :

Իմ ցաւըս այն է, որ այդ գարշելիք  
Պղտորումեն կեանքն պարզամիտների.  
Թէ և ի վերջոյ են այգանելիք,  
Պատճառ, չկայ բան, որ չըյայտնուի :

Միտ չունելով ես երկարաբանել  
 Լեոնի նախկին կրթութեան մասին,  
 Ընթերցողներից կամէի խնդրել,  
 Որ այդ պարսաւանք ինձ համարին:

Այսքան. Լեոնը նման չէր նոցա,  
 Որ մտանելով համալըսարան,  
 Կամ թէ բարձրագոյն մի ուսումնարան,  
 Չկամին դնել պարտք իւրեանց վերայ

Ողջունել հոգով մայրենի լեզուին,  
 Շնչել նորա կեանք. նորից մկրտուել,  
 Որպէս մտածող անդամ իւր ազգին, —  
 Ընդունակ անձը նորան նուիրել:

Եւ մի ազգ թշուառ, որ բարոյապէս  
 Հասել էր դրեթէ իւր անսխառք մահուան,  
 Կարող էր յուսալ դոցանից մի պէս  
 Վերանորոգիչ յարութեան նշան:

Լեոն իւր բոլոր ուսման շրջանից  
 Այսքան ինչ կարաց հետեւեցնել.  
 «Ես պիտի լինիմ մարդ ազատ, անբիծ, —  
 Եւ ես կարող եմ իմ ազգը սիրել»:

Ազատ մարդ. . . որքան սա աւետական  
 Խոստանումէ մեզ անգին հաւաստիք.

Առանց լիճեանն աշտուձեան,  
 Չիտ, լիճեան և կեանք երջանիկ:  
 Եւ աղատութիւն կարող է լինել,  
 Թէ դադարէինք երազ երազել;  
 Թէ գործելով դաշտ մտաւորական,  
 Խեղդէինք ցնորք — տգէտին սեպհական:  
 Եւ բարոյական ուղղութիւններից  
 Մինը ունէր նա հաստատուն կանոն.  
 «Բարի գործել», — այս, ասումէր կեանքից  
 է այն հազուադիւտ մեզ մավզօլէոն:  
 Բարի գործելով մէք ընդհանրաբար  
 կարող ենք գտնել բաղդը աշխարհիս.  
 Ես բաղդաւոր եմ, թէ այդ բաղդն ունիս  
 Եւ դու և հարուստ, և տնանկն անճար:  
 Ո՛վ հայրենակիցք, քանի՞ էք թրւով,  
 Որ այդ աչքերով նայէիք կեանքին;  
 Որ վայելէիք խաղաղ, անխռով  
 Այդ բարի վիճակ, այդ բարոյրագին:  
 Քանի՞ էք թրւով, որ վեհանճարար  
 Սկսէիք գործը հասարակութեան.  
 Որ ծլէր, ծաղկէր, ամուր բարձրանար  
 Ոսկէ տաճարը սուրբ բարօրութեան:

Որ լոյս և ուսում այցելու լինէր  
 Եւ քո պալատին և քո խորճութին ;  
 Որ իւր բաղդն ու կեանք առատ անձրևէր  
 Քրտնած , աշխատած ազգիդ ճակատին :

Տխուր , միակերպ անցանումէին  
 Լևոնի օրերն ; սրտառուչ զրկուած  
 Հարազատներից , տուել էր վշտին  
 Աճելով աճել , աշխարհից փախած :

Բայց և հարազատք , արժան է ասել ,  
 Չկարծեմ , որ վիշտն Լևոնի սրտի  
 Կարողանային մի օր փարատել . —

Ո՛վ , շատ կարծր է սիրտն այդպէս մարդի :

Նա կեանք չէր վարում ճգնաւորական .  
 Եւ , միշտ խնդրելով խօսք ու զրոյցներ ,  
 Պատրաստ էր մեկնել ձեռն մտերմութեան , —  
 Բայց ընդդէմ էին դորան շատ փորձեր :

Ոչ մեծ հանգէսներ , ոչ այլ խրախճանք  
 Կարող չէր նորան հաղորդել ծիծաղ .  
 Նա որոճումէր մի ներքին վարանք , —  
 Ի՞նչպէս կարող էր լինել նա ուրախ :

Եւ ցրտասառոյց խաւար դազաղի  
 Երբեմն ճակատին ալէկոծվումէր ,

Եւ կճու խայթը ներքին տանջանքի  
Խաղաղ բոսկէք թունաւորումէր:

Ոչ որ շգիտէր հարցանել նորան,  
Ի՞նչ է պատճառը այդ դառն դրութեան;  
Եւ համբը կուրծքից ոչ ձայն, ոչ հնչիւն  
Ձեր գալի վշտի բացայայտութիւն:

Բայց թէ խորամուխ հայեացք ձգէիր,  
Փոքր առ փոքր նշմարանք ցաւի  
Գուշակումէին, որ նա վշտակիր  
Սրգումէ կորուստն հարազատ ազգի.

Նա տեսանումէր, որ անօրինակ  
Ոգևորութեամբ ներշնչած ցեղեր,  
Կեանք են նուիրում որպէս նահատակ,  
Մահարեր դաշտը ծածկումեն զոհեր;

Նա տեսանումէր և խաղական  
Շաղկապեալ սիրոյ միութեամբ կնքած  
Յաջողակ գործը, և գարիբալիւան  
Ձէնքի յաղթութիւն, այնքան հռչակուած:

Փրկութեան քրիստոսն յորդորիչ ձայնով  
Ընթացաւ ահա ազգերի միջին.

Ձարթեց բեռնաւորն նորոգուած ոգով —  
Ողջունեց սիրով հասարակ գործին: —

Փայլումէ դրօշն մեծահոգութեան,  
Թափումէ արիւն հայրենասիրի;  
Իրաւունք, պատիւ, նշանք ազգութեան  
Վերականգնումեն որպէս մի կաղնի:

Ո՛վ ձայն Աստուծոյ. — և աշխատեալներ  
Գալիս են հանգչել մեծ վաստակներից;  
Երկրպագութիւնք, դափնի պսակներ  
Բերումեն նոցա ամենայն կողմից:

Լուսաւորութիւն, որպէս արեգակ  
Հարազատ հողի երկնակամարին,  
Սկսումէ սիռել ճառագայթարձակ  
Եւ ուսում, և կեանք, և բաղդ մեծագին;

Եւ բռնութիւնք — այդ վատթար դաղան,  
Անգութ կորստի գրկումէ հարուած,  
Մոլի իշխաններ և ոգեկործան  
Բարձր գահոյբից գլորվումեն ցած:

Գլորվումեն ցած, — և այդտեղ դոցա  
Պատրաստ է դամբան արհամարհանքի,  
Ազատ ճանապարհ բացվումէ ահա  
Եւ մարդու հոգու, և մարդու մտքի:

Բայց Հայոց ազգը — տխուր անապատ...  
Անբոյժ նեւերով խոցուած վիրաւոր.

Խաւար, նիւթապաշտ, երկչոտ և վհատ,  
Սիրող շարութիւն և փառք անցաւոր:

Ահա, որպիսի մտածութիւններ  
Խոր շարժումէին Լեոնի հոգին,  
Նա մինչև անգամ միջոց չգիտէր,  
Որով ձեռնտու լինէր իւր ազգին:

Եւ սորա համար առաւ նա իւր ձեռն  
Այս մինակ հնարս. որոշեց ջրել  
Թիւր սկըզբները այն կորստարեր,  
Որով Հայի կեանքն իսպա՛ռ էր խախտուել:

Լեոն համատիք ընկերներ ունէր:  
Նոցանից շատերն պարծենումէին,  
Որ Հայ են ծնել. բայց Հայի խոցեր  
Նոցա խաղաղ կեանք խանգարում չէին:

Նոցա նպատակ — սնափառութիւն:  
Նոցա խօսքերը — աննշան հնչիւն:  
Ազգ ու հայրենիք, պարծանք ու պսակ,  
Կրկնումէին որպէս մի թութակ:

Անգործ պճճասէրք, փառքից մոլորուած,  
Քան թէ երազել կանգնումը Հայի,  
Լաւ լինելու չէր, որ կոկուած, ձգուած  
Կուլ տայիք փոշին գուք մեծ աշխարհի:

Այնտեղ կարող էք գտնել սիրեկան—  
 Տասնուհինգ, տասնուվեց, տասնևօթ տարեկան,  
 Հրեշտակի լեզուով Ֆրանսիացիք,  
 Եւ Ռուս, և Լեհ և Գերմանացիք:

Նոցա կերպարանք փայլումեն սիրով,  
 Բայց միայն, ափսոս, ջահերի շնորհով;  
 Երբ օրի լոյսը դոցա ողջունեց,  
 Ախ, սէրը փախաւ, գաղտնիքը բացուեց:

Այդ ձեր բանը չէ. դուք ծառայական  
 կարող էք հարկ տալ դոցա հաճոյքին;  
 Գողգոջուն սրտով եղէգնի նման  
 Երեք տակ ճկուել և մնալ վարձին:

Յայտնի է, որ Հայք խիստ են այս մասին,  
 Եւ չեն ընդունում խնձորն փորձութեան,  
 Թէև սիրոյ ախտ դոցա ցոյց տային  
 Շքեղ առիւծքը մեծ աշխարհական:

Այսպէս սովոր ենք կոչել «մեծ աշխարհ»  
 Ուր խայտաճամուկ ամբոխը ունայն,  
 Քիթը վեր քաշած, սիրումէ տխմար  
 Պերձութեամբ փայլել, ձայն տալ մեծութեան:

Մեծ են խօսքերով, բայց վհատ հոգով,  
 Արջացած աղնիւ ձգտողութենից:

Գատարկութեան մէջ կեանքը մաշելով, —  
 Ողորմելի են թշուառականից:

Չըսիրեց Նևոն և ո՛չ իսկ մէկին, —  
 Ապաւինեցաւ լուռ առանձնութեան,  
 Փախաւ ժպիտը, և խեղճի հոգին  
 Չը գտաւ կայծ մի մխիթարութեան:

Նա զուրկ չէր սէրից. մի ժամանակ կար,  
 Երբ սիրոյ անոյշ խորհրդածութիւն,  
 Որպէս անձրևը գարնան զովարար,  
 Տալիս էր և կեանք, և նոր զօրութիւն:

Ո՛վ սէր, ո՛ւմ արդեօք, որի մէջ մատաղ  
 Գեռ եռ է զալի մանկական արիւն,  
 Քնքուշ պատրանքով, ո՛վ ողի չքնաղ,  
 Չես դրել թակարդ դէպ ի գերութիւն:

Եւ պոյէտական երևոյթներով  
 Ո՛ւմ շրջակայքը չես լուսաւորել,  
 Որ կենդանութեանդ վառուած նշոյլով  
 Քեզ սրտի խորքում սեղան է կանգնել:

Սան է այս դարը, — և ես աւելի,  
 Քան թէ մի այլ ոք, արհամարհումեմ  
 Նիւթապաշտութիւնն նորա անհոգի, —  
 Հակառակ դարիս, Սէր, քեզ երգումեմ:

Երգումեմ թոյնը դառն հարուածներիդ,  
 Որից ծաղկումէ բաժակը կեանքի,  
 Եւ քո, որպէս օձ, գալարուն ժպիտ,  
 Եւ դժոխք, և դրախտ հրապուրանքի:

Սիրելով միայն ես ճանաչումեմ  
 Զարդարողն աշխարհ, Ստեղծողն երկնի,  
 Սիրելով միայն ես բարձրանումեմ  
 Դէպ ի վեհաւայրն Արարչապետի:

Եւ ես մտաստհ կուսի աշքերում  
 Գտանումեմ այն, որ դիրք մի դեռ ևս,  
 Որ ոչ իմաստուն իւր գրուածներում,  
 Ո՛չ պոյէտն երգով չաւանդեցին մեզ:

Թէ ցուրտ կանոնը Նիւթապաշտների  
 Սուրբ շեմիդ վերայ ոտք կոխէր, ո՛վ Սէր,  
 Մեզ կը կաշկանդէր ձմեռ սոսկալի,  
 Եւ հետքըդ անգամ երևելու չէր:

Այլ ես ուրախ եմ. դու ենթակայ չես  
 Ոչինչ իմաստակ եղբայրակութեան;  
 Եւ դաւանումեմ քեզ առաջուայ պէս.  
 Կանոնը չունի մուտք քո աւազան:

Բայց ներողութիւն, որ ես այս անգամ  
 Ընդմիջեցի խօսքս և թելը դրուցիս.

Ինքը մտածիր, ազնիւ բարեկամ,  
 Չեմ կարող լռել, ի՛նչ թանգ է սրտիս:

Եւ ես մի մարդ եմ ո՛չ առանց մեղքի,  
 Եւ ես սիրել եմ առանց հանաքի,  
 Սիրել եմ մենակ, և բաղդն անարդար  
 Չէ զարդարել իմ սիրոյ ճանապարհ:

Թէ և Լևոնը սիրեց անյաջող,  
 (Գուք այդ կիմանաք — այլ ևս երկու տուն.)  
 Բայց այս դիպուածից չկարծես, ընթերցող,  
 Որ Լևոն և ես — նոյն ենք, մի արիւն:

Լսիր, առնումեմ թելը պատմութեան,  
 Թո՛ղ նստի ախտը քո ինքնահաւան;  
 Այդ ներելու չէ երբէք քեզ Աստուած. —  
 Խորթ է սիրոյ հուրն սրտիդ քարացած:

Լևոն սիրումէր մանկութեան օրին,  
 Այն մի նազելի պարկեշտ աղջիկ էր;  
 Փոքրիկ, փափկամորթ ունէր նա ձեռներ,  
 Նորան շուտ թողուց հոգով վրդովուած,  
 Երբ նախանձն ձգեց նորա մէջ կասկած, —  
 Եւ այս է սիրոյ ընկեր անմեկին:

Իսկոյն նկատեց աչքը սրատես,  
 Որ գիշեր ցերեկ, որպէս մի ստուեր,

Յաճումեն ախտոտ այն դժոխերես  
Նորա հետքերով երիտասարդներ:

Որքան ջերմեռանդ սիրումենք մեկին,  
Նոյնչափ հետամուտ ենք նորա սրտին;  
Ամեն մի կասկած, խօսք վատահամբաւ  
Սիրուհու վերայ — պատճառումէ ցաւ:

Սպառումէ դու թ. կրակուած աչքեր  
Թափումեն նախանձ վրէժխնդրութեան;  
Եւ պատահումէ, ո՛վ ախտ մահարեր,  
Որ զո՛հ է գնում քնքուշ առարկան:

Արիւնաշաղախ անկաւ Գէղղէմոն  
Կատաղութենից սիրող ամուսնու;  
Բայց մեղաւոր էր կրակոտ Օթէլլոն, —  
Նախանձը խռովեց կուրծքն Ափրիկեցու:

Թէ և դժուար է, որ մեր ժամանակ  
Մի երիտասարդ, գրգռած նախանձից,  
Խեղդէր ամուսին իւր բարձերի տակ,  
Եւ ինքը խեղդուէր ահագին ցաւից:

Այժմ տղամարդիք ըստ մեծի մասին  
Մեր կանանց համար երկիւղալի չեն.  
Նորա հետևում չեն այն սև Մաւրին,  
Թէ անսրբութեան հետք ինչ նշմարեն:

Բայց միայն նորա մի այլ կին կ'ընտրեն,  
 Առնելով լոկ ինչ հաւատարմութիւն.  
 Եթէ սա խաբեց — և նորա նորէն,  
 Կը գտնեն իւրեանց բաղդաւորութիւն:

Արդէն մանուկ այդն արձակվեցաւ վառ. —  
 Փայլեց արեւէք. օրի հոգսերով  
 Լցուեցաւ աշխարհ, Քաղցր դայլալիկով  
 Ողջունեցին օր թռչունների պար:

Անգործ ժողովուրդն արդէն կառքերով  
 Խնդրումէ իւրեան ուրախութիւններ.  
 Բայց Լեօն, — Լեօն յուսահատուելով  
 Թափումէ սրտի կսկիծ ու վիշտեր:

Եւ նա քայքայուած հոգով և մարմնով  
 Նման է, ասես, ծովին ալէկոծ;  
 Արտասուախառն յօնքերն կիտելով,  
 Վերջապէս հանեց մի շատ խոր հոգոց, —

«Տխուր նայումեմ ներկայի վերայ —  
 Բոլոր գոյութիւնս արիւն է կոխում,  
 Եւ Հայի կեանքը կորակոր ահա  
 Մի արտորանքի խուց է երևում:

Սրածայր նեաեր, դաշնակ և նշտար  
 Ցցվումեն սրտումս, — դեղաթափ չունին:

Խոցուած է ուղեղս, լեռնացած խաւար  
Պաշարումէ ինձ. — նոր զոհ տարտարին:

Հայն, որ կործանիչ արծաթսիրութիւն  
Պաշտումէ որպէս նոր աւետարան;

Հայն, որ ծախել է իւր ազատութիւն, —  
Կարող է հաշուիլ անդամ մարդկութեան;

Որ բարոյական ցաւի մէջ խեղդուած,

Գարշումէ գիտել խորհուրդը կեանքի,

Որ անշարժութեամբ միճակադրած, —

Կարող է յուսալ մի ապագայի:

Հայն, որ չէ ողբում իւր հայրենիքի

Հոյակապութեան փլատակները,

Որ մոռացել է իւր դիւցազների

Յիշել արիւնով կնքած գործերը;

Հայն, որ չէ ծածկում կուրծքը զրահով —

Այրել խաւարը անշէջ կրակով,

Գնալով չէ զոհ անդարձ կորստեան,

Որպէս դնացին մարդիկ աննշան:

Չկամիմ այսօր, ո՛վ սուրբ ազգութիւն,

Զրուցել քո հետ կաշառուած գրչով,

Հեռու մեզանից շողոքորթութիւն, —

Թող ողջունեն քեզ ձերերն պիղծ գրկով:

Քեզ, ազգ, սիրումեմ, բայց ոչ այն սիրով,  
 Որով սիրել ենք քեզ մինչև այսօր. —  
 Այն մեղք է եղել լի չարութեանով,  
 Եւ տգիտութեան կեղծաւոր ցնոր:

Եւ այդ նման էր այն հիւանդութեան,  
 Որից զարչեցան հմուտ բժիշկներ.  
 Չունէիր նշան դու կենդանութեան,  
 Լուծվել էր մարմնիդ զգայարաններ:

Եւ ահա ինչու, թշուառ հայրենիք,  
 Չունէիր դու բաղդ և աղատութիւն;  
 Եւ ահա ինչու քո ցաւոտ որդիք  
 Խեղդուեցան, անկան անդարձ գերութիւն:

Ա՛խ, թէ մի ժանտախտ կարէի բերել  
 Այդ հայրենասէր խելագարներին,  
 Եւ մի ահագին գերեզման գլորել,  
 Եւ նոր սկրզբունք աւետել Հային:

Ապօրինաւոր որդիք ազնիւ մօր,  
 Չեր հետ է խօսքբոս. — եկէք հրապարակ;  
 Գուք, որ պնդումէք թաղել այն հզօր,  
 Այն անթաղելին ներկայ ժամանակ:

Գո՛ւք, աղուէք, որոնք առազաստ պարզած,  
 Առատ շահվումէք յաջողակ հողմից;

Որոնք սուրբերի զգեստով ծպտած,  
Ծծումէք հիւթը խեղճ Հայի կեանքից:

Որոնց մէջ տարերքն այնպէս են խառնուած,  
Որ բնութիւնը ինքը սարսափած,  
Կարող էր գոչել, «ահա՛ ձեզ մարդիկ,  
Գնայուն մեռեալներ, գեհննի որդիք»:

Ո՛հ, խեղճ Հայ, խեղճ Հայ, քեզ պատանեցին  
Այդ ոչխարենով փաթաթուած գայլեր.  
Գլխիդ զարկեցին, գանձերդ խլեցին—  
Վա՛վաշ հարձերին տանելով նուէր:

Եւ եզիպտական դժնեայ ախտերով,  
Անբաղձ ժողովուրդ, վարակուած ես դու;  
Հարստահարող երկաթի բազկով,  
Ո՛հ, կը լափէ քեզ կորուստ կահացու:

Անգին հայրենիք, — ցաւերիս պատճառ,  
Մահ է բնթանում ճակատիդ վերայ;  
Յափշտակութեան ոգին չարաչար  
Սրումէ երկսայր գերանդին դժնեայ:

Սոսկալի տանջանք, անթաղ դիակներ,  
Հղթայք և կապանք և դառն արտասուք;  
Անդուժ կոտորած, և մրմունջ, և սուգ,  
Եւ հարազատիդ արեան առուններ, —

Գեռ այս դժոխքին դու պիտի տանես .  
 Թշնամու կողմը դարձեալ կը շարժուի ;  
 Գեռ վերջին բաժակը պիտի ըմպես , —  
 Եւ այն բաժակն է օրհասականի :

Իսկ թէ հորիզոն բացուի կրթութեան ,  
 կը բացուի և քեզ դուռը փրկութեան ;  
 Նորից կը ծաղկեն քո բուրաստաններ , —  
 Նոր կեանք կը շնչեն մեռած անդամներ ;

Եւ Հայութիւնը . . . և , ո՛վ դու ցնոր ,  
 Ի՞նչ ես ինձ տանջում . աշխարհի առջև  
 Ուրացանք Հային և Հայի արև : —  
 Ի՞նչ պիտի ասեն յետինք սրգաւոր :

Հայրենի ազգ իմ , — տխուր անապատ ,  
 Գեռ կարող էի խեղդել արտասուք ,  
 Թէ դառն անցածից քաղելով խրատ ,  
 Քո վատ սերունդը մեկնէր քեզ բազուկ :

Թէ այդ քո թշուառ վիճակի վիշտը ,  
 Մերկացած դէմքով իւր դժոխային ,  
 Ուտէր , թափանցէր թոռներիդ սիրտը —  
 Բոպէ քեզանով գոնեայ ցաւէին :

Որդիք մոլորեալ , դուք պիտ' հասկանաք  
 Այդ նախատիները հայրենի անուան :

Պիտի յես բերէք ազգութեան պսակ,  
Թէ չկամիր դուք գնալ գերեզման:

Նոր ազգ, ո՛վ նոր ազգ, դու չես խոստանում  
Հայութեան լինել պատուար և նեցուկ,  
Հայն հառաչումէ, — դու չես նուիրում  
Համազգացութեան նորան արտասուք:

Նոր ազգ, անխառք է կեանքիդ ասպարէզ,  
Թէ ազգիդ համար քրտինք չը թափես;  
Մեռած էիր դու որպէս գերեզման,  
Թէ չգնացիր մշակ ազգութեան:

Ա՛խ, դուք զգացէք ձեր մօր խիստ կապանք, —  
Գորան կարօտ է թշուառ հայրենիք;  
Ապա եթէ ոչ — անջինջ անարգանք  
Ազգը կը դընէ ձեր վերայ կնիք:

Թո՛ղ քաղաքական մեծամեծ գործեր  
Այսօր չանցանեն ձեր համար ունայն;  
Թո՛ղ ծաղկեն այսօր քաջառողջ սերմեր  
Անգին շինուածի ազգասիրութեան:

Թո՛ղ տխուր անցեալ մեր համար փոխուի  
Մի պայծառազարդ փառաւոր ներկայ,  
Որ վերաճելով ազգութեան ծիլեր,  
Երևան հանէ ոսկէ ապագայ:

Եւ այն ժամանակ, ո՞վ օղոկելից,  
 Որոտալու է ձայն աղաաութեան,  
 Զախջախուած, փշրուած անարգութենից  
 Փշիփողելու է դրօշն աղգութեան . . .

Փառաւոր ճակատ հայրենասիրի  
 Զարդարելու են դափնիք փառաւոր;  
 Որ նահատակ է փրկութեան աղգի,  
 Արձան կը տնկեն մշտնջենաւոր:

Դարեր են գնում, դարեր են գալի —  
 Աւանդութիւնքը անհետանումեն,  
 Միայն արդասիք աղգաշէն գործի  
 Հասարակ երգով անմահանումեն:

Ես մեռանումեմ որպէս շնչաւոր,  
 Բայց բարի գործերս մեռնել կարող չեն,  
 Նշքա անմահ են, որպէս երկնաւոր  
 Արարչի տիեզերք, թէ և դարք սահեն:

Այսօր ծնել ենք, որ էգուց մեռնենք,  
 Որ մեր հողիցը նոր աղգեր դուրս գան;  
 Մեք, որպէս ալիք, միմեանց փոխումենք, —  
 Այսպէս է վճիռն մարդկեղէն կոչման:

Եւ նորա համար իմ կեանքն ունի գին,  
 Որ պիտի ջնջուի և ոչնչանայ,

Որպէս ծաղիկը աշնան միջոցին, —  
Շնչեց փոթորիկ — և ահա չըկայ,

Եւ նորա համար ես բանաւոր եմ,  
Որ մինչ յետին շունչ պիտի մշակեմ;  
Միշտ մտածելով և բարձրանալով,  
Գիտութեան շօրը ձեռներբս պարզեմ:

Ո՛վ սուրբ հայրենիք, այդ ի՞նչ զօրութիւն,  
Որ կապ է քո հետ սէրը մեր սրտի:  
Իսչո՞ւ մէք պայծառ, երբ բարօրութիւն  
Արտերիդ վերայ զեղումէ ոսկի:

Ինչո՞ւ մէք ամպած, երբ խոնարհումես  
Փառաւոր ճակատ, — մէք մրրկալից  
Չարի առաջև կանգնումենք, որպէս  
Գարևոր կաղնին անշարժ նետերից»:

Մի՞թէ, ընթերցո՛ղ, դու չես նկատում,  
Որ վառ է Լևոն որպէս մի հրնոց.  
Տես ի՞նչ հոսանքով է նա ծաւալում  
Ազգասիրութեան այն սրբազան բոց:

Այդ հառաչանք է հոգով խոցուածի,  
Մի խորին կակիժ վշտալի սրտի. —  
Սիրտ, որ պատրաստ է իսպառ պատարուել  
Եւ հիւանդ եղբօր փրկութիւն գնել.

«Յերեկ մրրկուած, գիշեր դիւական . . .  
Ցուրտ երանգ . . . բժժանք . . . և քունը աչքիս  
Յափշտակվումէ — վշտի ուրուականն: —  
Ո՛չ վերջ, ո՛չ հանգիստ ալէկոծ մտքիս:

Ես չարագործ չեմ, ինչո՞ւ կապուտակ  
Չէ ժպտում երկինք: Ո՞ւր օրեր վարդի,  
Աւանդ, վաղ ընկան տարտարի յատակ, —  
Աշխարհ Աստուծոյ, բանտ ես զղուելի:

Թարշամումէ սիրտս — ականջ դրեցէք .  
Այնտեղ կը լսէք մի տխուր շրշիւն,  
Որպէս տերևը ծառից կիսաբեկ  
Տալիս է մահին հիւանդոտ աշուն:

Թւեր տուեցէք և մի ժամ պարապ, —  
Դէպ ի արևելք կանաչազգեցիկ,  
Ահպարանոց, որպէս մի կարապ,  
Ուրախ կը թռչեմ անգին հայրենիք;

Կը թողում հիւսիս, բնութեան դագաղ,  
Եւ յիշատակներ պատանեկութեան,  
Եւ բարեկամներ, և կոյս մի չքնաղ,  
Որ սէր շնչեց ինձ պղատոնական:

Այո՛, այն կոյսը, որ իմ սրտիս մէջ  
Ծաւալեց և սէր և խաղաղութիւն,

Երբ ցնորների քաղցր ելևէջ  
Բացեց ինձ դրախտ և անմահութիւն» . . . . .

Եւ յիշատակը հեռու անցեալի  
Յիշեց Լևոնին երջանիկ օրեր,  
Երբ ոգեզմայլիչ և հրաշալի  
Առաջին սիրոյ փայլումէր լապտեր:

Եւ ներկայացաւ նորա առաջև  
Մաքուր առազաստն հրեշտակ վեղեցկի,  
Եւ մէզի տակից նշմարեց արև, —  
Երգեց ահամայ այսպէս մեղեդի.

1.

Թող չըսահեն ցողոտ շիթեր, —  
Ժայռ է, որ առողումն.  
Ո՛չ մանուշակ և ոչ վարդեր  
Այդ շիթերից կը բսնեն.

2.

Ո՛չ սէր իմ մէջ մշտածաղիկ  
Կը նորոգեն քաղցրագին.  
Ա՛խ, դժօխք և վիշտ չարարաստիկ  
Արդէն դոքա շարժեցին:

3.

Որպէս Հրէայ թափառական  
Ամեն տեղ եմ, — ո՛չ մի տեղ.

Ո՛ւր է վարում՝ բաղդիս ուռկան,  
Մի՛ հարցանիր, կոյս անմեղ :

4.

Ես չկամիմ, որ խանգարուի  
Ոսկի դրախտը մանկութեան,  
Որ քո աչերդ ցաւով լցուի,  
Կամ թէ հայեացք սիրարժան :

5.

Դու տեսել ես ալէկոծ ծով,  
Երբ փոթորիկ մի ուժգին  
Տարբերվումէ մրմնալով . —  
Այդպէս է և իմ հոգին . . .

6.

Իմ կեանքը ինձ բերը դարձաւ,  
Վերահասաւ սև գիշեր;  
Անոյշ ժպիտը հոգուս փախաւ, —  
Աստուած օրհնէ քո օրեր .

7.

Ծիածանի խաղարկութիւն  
Թող փայլէ քո երեսին;  
Եւ սոխակի նուագածութիւն  
Միշտ հնչէ քո ականջին :

8.

Ես քեզ մի օր փայտայեցի,  
 Որպէս պայծառ աղաւնեակ;  
 Սիրոյ ծոցին քեզ կոչեցի  
 Եւ երկնային և հրեշտակ:

9.

Այլ այժմ ներիր. ճակատադիր  
 Վերաս դրեց լուծ սաստիկ.  
 Ես պիտ' շրջեմ երկրից երկիր—  
 Մինչև գտնեմ հայրենիք:

10.

Եւ հայրենիք . . . բայց ո՛ւր է նա .  
 Քանի՛ գնաց արտասուք—  
 Երբեք նորան ես չտեսայ . . .  
 Գէթ երազում վաղանցուկ:

11.

Եւ հայրենիք . . . բայց ո՛ւր է նա .  
 Ահա սարեր ծածկուեցան,  
 Եւ արեգակն, և ծով ահա  
 Մեր աչքերից հեռացան:

12.

Ա՞յն հայրենիք, որ կապարեայ  
 Շղթաներով կապկպած,

Անբոյժ խոցեր կուրծքի վերայ, —  
 — Բնաւ դարձել է աւերած:

13.

Սիրտ իմ, , սիրտ իմ, վշտի յատակ, —  
 Պարտէզ թունոտ բոյսերի, —  
 Զգացիր ցաւդ և այդ վիճակ. —  
 Գուցէ վերջը է բարի:

14.

Գուցէ, գուցէ մի օր կը գայ,  
 Մի թանգազին ժամանակ,  
 Երբ Հայի բեռն կը հեշտանայ.  
 Ա՛րմազէ կը թու թեան բաժակ:

15.

Մնաս բարեաւ, մաքուր հրեշտակ,  
 Թնդ քո սիրտը չմարմաքէ.  
 Թէև մեռնենք այլ աստղի տակ, —  
 Բայց մա՛հը մեզ կը զուգէ:

Պէտք է նկատել, իմ ընթերցողներ,  
 Որ Լևոն յաջող գիտէր, շներտած  
 Գրքերից, տողել ոգելից երգեր. —  
 Ազգու էր քնարն, լարերը վարժուած:

Երբ առանձնու թիւն տիրումէր նորան,  
 Երբ յարձակվումէր դէր վիշտերի, —  
 Ճապուկ մատներով ներդաշնակաձայն  
 Զարկումէր քնարին, խիստ ախորժելի  
 Տարածվումէին դաշնն աղօրդներ;  
 Եւ գիշերային անդորրու թիւնը  
 Նորա կախարդիչ կեանքով լցվումէր, —  
 Քամումէր Նւոն իւր տաղտկու թիւնը:

Երբ կենցաղական փոթորիկներից  
 Ալէկոծվումենք երկար միջոցով,  
 Երբ ներքին ծանր պատերազմներից  
 Խռովումենք մէք կամքով և հոգով, —  
 Մէք զօրանալով յիշումենք օրեր,  
 Ամենապայծառ բոսէք մեր կեանքում, —  
 Մանկութեան դուստրը — այն առաջին սէր —  
 Մեր մնայլ մտքում է կենդանանում,  
 Մեզ մի անգամից շնն թողում հրճուանք,  
 Յանկարծ չէ գնում և վառ մանկութիւն,  
 Եւ մէք զգալու չէինք մեծ զրկանք,  
 Թէ և ուրանար մեզ ուրախութիւն;  
 Բայց անմահ դրախտան այն նուիրական,  
 Որ նախկին սէրը յառաջ է բերել,  
 Բայց ոգևորեալ ժամերն դիւթական  
 Երբէք շնք կարող մեր մտքից հանել:

Արդարև այդ սէրն կարող էր թագչել  
 կամ թէ խաւարել, բայց ոչ թէ հանգչել,  
 Այսպէս երկինքը, ծածկուած ամպերով,  
 Իւր յստակ կապոյտ գիտէ պահպանել:  
 Որ գիտէ սիրել, և որի սիրտը  
 Բերել է իւր հարկ սիրոյ տաճարին, —  
 Չէ մոռանալու այդ քաղցր վիշտը,  
 Թէ և ծերանար ծերութիւն խորին;  
 Եւ ոչինչ չկայ այնքան ցաւալի,  
 Երբ մէք կտրու մենք, հրաժարուելով,  
 Յիշողութիւնքը և կապը սրտի,  
 Անհրաժեշտին հնազանդելով:  
 Գեռ երխտասարդ է, իմ բարեկամ,  
 Լևոն, քո միտն է, որ նա սիրումէր;  
 Ի՞նչ զարմանք բան է, թէ վերջին անգամ  
 Յաւիտեան նորան հրաժեշտ ասէր. . . .

Լևոն տխուր էր. շրջումէր մենակ,  
 Սիրտը ճնշումէր վիշտ և տաղտկութիւն.  
 Եւ թէ կատարուած էր իւր նպատակ —  
 Խնայելու չէր կեանքի դոյութիւն:

Եւ բարոյապէս իւր կոչման վերայ  
 Խորհրդածելով, որոշեց ձգել  
 Ռուսաստանի մայր քաղաք Մոսկուա,  
 Յետ շնայելով փախչել և փախչել:

Առաջին գլուխը Լեւոնի Աշտի  
Խնդրումէ այստեղ ճաշակել վախճան;  
Իսկ մնացորդը կը շարունակուի, —  
Այն իրաւունք է ոգեւորութեան:

Նա հարաւ կ'երթայ, հիւսիս կը թողնէ,  
Հատ բան կը տեսնէ կովկասեան կողմեր,  
Նորան Աովկասը ժամ ինչ կը գրաւէ,  
Որ վարդեայ քաղէ նորանից փուշեր . . .

Որ զգայակից է խեղճ Լեւոնի,  
Գիտեմ, այդ ազնիւն կը ցաւէ նորան,  
Բայց որ գրկել է նախանձը չարի,  
Նոր վարմ կը լարէ կատակերգութեան:

Եւ այդպէս են միշտ ընթացել Հայեր,  
Խոթը է նոցա ձայն սրտի համոզման.  
Նախանձ ու նախանձ — խաւարի սերմեր —  
Առատ, լիաձեռն վիժել են միայն:

Թո՛ղ կոծուի կուրծքը խաւարասիրի.  
Նորա վաստակը նորան կը ծածկէ,  
Եւ արդարութեան թարմ արմաւենի  
Անարուեստ վաստակն միշտ կը սպակէ:

Թո՛ղ բառահիւսր, բզղալով անբուն,  
Մրէ իւր տողերն, որ քանի դաժան,

Նոյնչափ գրուածի և արժողութիւն ,  
 Նոյնչափ քերթողը հաճ և բաւական :


Իմ ընթերցողներ , պարծանք Ղևոնին .  
 Նորան չէ դիպչում պատրանքը փառքի ;  
 Թէ պիտ' սպասէք դեռ դատաստանին  
 Հրապարակ հանած կատակերգակի :

Երեկեան տգէտք , որոնց պիտոյ էր ,  
 Որպէս խարտուիլակ պահ դրան դնել ,  
 Այժմ , իմ Աստուած , առատ զովեստներ  
 Չեղած տաղանդով կարծումն հնձել . . .

Այո՛ , խմբագիր մի խելացնոր ,  
 Քուցէ , ձեր գործին կը ծափահարէ ;  
 Բայց կրիտիկոսն — այդ սուրբ դատաւոր ,  
 Ի՞նչ վարձ կամ վճիռ պիտի հատանէ :

Ի՞նչ է ցանկութիւնդ , անբաղդ իմաստակ ,  
 Արդէն քեզ խեղդեց հնութեան փոշին ;  
 Գալոց սերնդի , թշուառ նշաւակ ,  
 Ինչո՞ւ դու ծնար . — վայ այդպէս կեանքին . . .





# ԼԵՒՈՆԻ ՎԻՇՏԸ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ II ԳԼԽԻ

Ներածութիւն: Հայի կեանքի առհասարակ խանդարումը:  
Աղբիւրը այդ խանդարման: Դպրոցների պակասութիւնը: Հայ վար-  
ժապետները, նոցա յետամնաց ուղղութիւնը: Հայ կրօնուսոյցը:  
Արօնի մեծութիւնը: Արօնի թիւր դասատուութիւնը: Աւանի վիշաբ  
բացայայտումը: Աւան, շատ դրբեր իւր հետ առած, ճանապարհէ  
լնկնում գէտ ի Աուկատ: Ճանապարհին պատահում նորան հայ  
քաղաք. այստեղ ժողովուրդը քարկոծում իւր հովիւը: Հովիւը:  
Աւան գնում յառաջ: Աաղբէկ սարի արծիւը: Նկարագիր բնու-  
թեան: Աւան առժամանակ ինչ կամի մտանալ իւր վիշաբ:  
Խօսակցութիւնը քնարի հետ: Հայի ընչասիրութիւնը: Տխուր  
մտածմունք աղգասիրութեան մասին:

Հեղինակի արհամարհանքը անազնիւ տաղաչափին.

ԼԵՒՈՆԻ ՎԻՇՏԸ.

ՔԱՐԱՆԱԳԱԳԵԼՅ ՎԷՊՔ.

ԳԼՈՒԽ II.

Люди привыкають къ злу до такой степени, что считают жалобы неразуміемъ, если не преступленіемъ.

Дж. Ст. Милль.

Երանի՛ նորան, որ նախապաշար  
Մերժելով կարծիք, սիրել է լսել  
Սրտի համոզման, և անյիշաչար  
Սուրբ ճշմարտութեան կողմն է համբուրել:

Երանի՛ նորան, որ նախամեծար  
Առնելով պատիւ սնտաի փառքին,  
Ազատ գնում է կեանքի ճանապարհ,  
Չեւր պարզելով իւր նպատակին:

Որ բացել է սիրտն ուսման առաջը,  
 Զրահաւորուած ընդդէմ չարութեան,  
 Որ ներշնչելով գիտութեան անձրև,  
 Պտղագործել է հոգու անդաստան:

Իցէ՞ թէ և Հայն, մի օր սթափուած  
 Խաւարի գրկից, նախանձող լինէր  
 Այս մեծ խրատին, և, պայծառացած,  
 Իւր մեռելութիւն լուսով փարատէր:

Իցէ՞ թէ, Աստուած, Հայն խոստովանէր  
 Իւր անօրամիտ առաջնորդների  
 Վարդապետութիւն, իւր մտքի վէրքեր, —  
 Եւ թափէր դոցա որպէս թոյն իժի:

Հայն զօսացել է, վայ նորա օրին,  
 Անդու՞թ խաւարի գաւազանի տակ.  
 Եւ խեղճի կեանքը և խեղճի հոգին  
 Ապականուելով դարձել է փլատակ:

Խաւարն է Հային ճակատագրել  
 Կապոյտ երկնի տակ հրանիւթ շանթեր,  
 Եթէ ոչ այդպէս, պիտոյ էր կարծել.  
 Հայը կը փայլէր, Հայը կը տիրէր...

Ո՞վ են վարժապետք այդ անբաղդ աղգի:  
 Ո՞վ քարոզիչներ լուսաւորութեան:

Ուր են դպրոցներ գիտութիւնների ;  
Քանի՞ աշակերտ ուսումնառութեան .

Հայ ազգ, ինձ ասա՛, ի՞նչ վարժապետներ\*  
Ունիս դու քո մէջ դաստիարակիչ ,  
Որ հատանէին խաւարի սերմեր  
Քո բարօրութեան այնքան խափանիչ :

Հայ ազգ, ինձ ասա՛, ի՞նչ ես ինձ տանջում , —  
Եւ լռումէ ազգ, չունի պատասխան .  
Նա իւր արտասուքն է միայն սրբում ,  
Եւ ցոյց է տալիս վէրքը խեղճութեան :

Նա կամի ասել , որ անապատ եմ ,  
Ուր շատ վարժապետ մտաւ և ելաւ ;  
Շատ բաներ խօսեց լոկ և անխոհեմ —  
Եւ դորանով ցաւս չըթեթեացաւ :

(\* Ոչ ոք թող կողմնակի մեկնութիւն չ'տայ մեր խօսքին, իբրև թէ մէք յարձակվում էինք յայանի անձին վերայ. այդպէս մտածողը ամենևին չէ հասկացել մեր գործի ներքին կապը ու խորհուրդը: Վարժապետ և ի վերջոյ ազգասէր, կրօնուսոյց ասելով, ունինք ապացոյց ոչ թէ մի Մարկոս, մի Աիրակոս, մի Մարտիրոս, այլ, համարեա, ընդհանուր ազգային վարժապետութիւնը: Եթէ մեզ ներքէր մեր գործի չափը ու պատշաճը — մէք կարող էինք մեծարելի փաստերով համոզել այդ բանի մէջ և նոյն իսկ ինքնահաւան հակառակորդքը մեր: Բայց թողնենք այժմ. մի այլ ժամանակ դուցէ ձեռնարկենք:

Այն մարդիկ էին անբարոյական,  
 Ճշմարիտ լուսից միշտ արսորական,  
 Անկեանք, անպտուղ, ծերութեամբ ճ'նշուած,  
 Հնութեան փոշով համարեա մեռած:

Այն Փարիսեցիք, որ տրտնջալով  
 Խաչեցին Քրիստոսն առողջ կրթութեան,  
 Եւ յօժարասիրտ խաւար գնալով, —  
 Որդեր նոցա մէջ միայն շատացան:

Նա կամի ասել. չունիմ ազգասէր.  
 Ս'ւտ է ամենայն ազգասիրութիւն,  
 Որ գղժգեց օդ որպէս մի հնչիւն,  
 Որ չբերեց կեանք, ո՛չ նիւթ, ո՛չ գանձեր:

Գորա Հայասէր, և ոչ Ազգասէր.  
 Մէկը անցաւոր, միւսը հաստատուն.  
 Մինը կոյր պարծանք, միւսն կենսարեր,  
 Եւ մեծակշիռ առաքինութիւն:

Այսպէս է խօսում Հայն անմխիթար,  
 Ս'ւր է ամեն բառ, որպէս թէ նշտար.  
 «Չունիմ վարժապետ, չունիմ ազգասէր».  
 Ո՛վ իմ սիրելիք, դատարկ շին խօսքեր:

Հայ վարժապետներ խելօք են միայն,  
 Որ Սաղմոս, Նարեկ սերտել են բերան,

Որ գիտեն Չամչեան քերականութիւն  
Եւ ասիեղ-ցիեղ ճարտասանութիւն:

Որ աշակերտի գիտեն կամք ճ'նշել;  
Նորա մատաղ կեանքն անապատ դարձնել;  
Եւ թէ այդ խեղճը օգնութիւն կանչէր, —  
Ապտակ, փալախա, և գա՛ն հարկանել:

Չայն տուր, պեղագօգ, թէ կենդանի ես,  
Ընդդէմ շարութեան զրահաւորվիր:

Մարդկութեան որդիքն, տես, անասնի պէս  
Բեռնաւորուած են լծով մահակիր:

Հայ վարժապետներ խելօք են միայն,  
Որ խիստ դահիճ են դասատուութեան;  
Որ շատ են ապրել երկրիս երեսին,  
Եւ դորա համար մեծ յարգանք ունին,

Որ ծերութիւնը հիւանդոտ գունով  
Խլել է վերջին զօրութեան նշան,  
Եւ հոգարարձու հայրական ձայնով  
Կանչումէ դոցա փոսը հանգստեան:

Ինձ դուք ասացէք, ո՞րքան դոցա մեջ  
Ծաղկած է հողին դաստիարակչութեան.  
Չգիտեն ուսման դեռ —, ք, քէն, ք—, Է, —  
Եւ ահա արժող վարժապետութեան:

Որքան հայ զաւակն ուսումնարանից  
 կարող էր քաղել կրօն և հոգի:  
 Չէ՛, յոյս չկայ այդ վարժապետներից,  
 չին է շինուածը — պէտքէ նորոգուի:

Գորքա ամբարիշտ և շատ չարարար,  
 Ա՛հ, ուրիշի սիրտն կամին բարւոքել;  
 Գորքա հնասէր, — կրօնի տաճար  
 Ի՞նչպէս կարող են մեր մէջ հաստատել:

Գիտութեան մէջ է Աստուծոյ տաճար,  
 Եւ մեծութիւնը ճարտարապետի:  
 Ով չէ ըմբռնել այն վերին շանճար,  
 Որով ենթարկուեց տիեզերք օրէնքի, —

Չէ կարող այսօր իւր խղճի առջև  
 Ուսուցանել մեզ գործը Արարչի —  
 Եւ աղօթումենք, որ այսուհետև  
 Այդ կրօնուսոյցն որպէս կայծ հանգչի:

Կրօնն է վերջին ըզգացողութիւն,  
 Այն զգացմունք է անեզրահանի;  
 Կրօնը նոյն է, թէ ճշմարտութիւն,  
 Արի թարգմանը — միտքը է սրտի:

Կրօնը չունի որոշեալ տաճար,  
 Նորա տաճարն է ընդհանուր աշխարհ:

Կրօնի համար սահման հատանել,  
 Նշն է, թէ նորան լիովին ժխտել:

Բայց դուք, ո՛վ խեղճեր, փակած աչքերով  
 կամիք տեսանել կրօնի մեծութիւն. —

Եւ ահա՛ ինչու մեռած էք սրտով,  
 Երբէք ձեզ չկայ մի խաղաղութիւն:

Եւ ահա՛ ինչու մեք ձեր բերանից  
 Չենք լսում մի խօսք, որ մխիթարէր  
 Կեանքիս տրտունջը: — Ո՛ւր են ոգելից  
 Կրօնի ուսմունք, ո՛ւր այն մաքուր Սէր:

Ո՛ւր է այն հզօր քրիստոնէութիւն,  
 Որ կամէր բերել մեզ արքայութիւն;  
 Որ կամէր մեր բնօն թեթևացնել,  
 Եւ բոլոր աշխարհ լուսով ծաւալել:

Ով կրօնուսոյց, ծանօթ է այս քեզ;  
 Հասկանումես դու, ինչ եմ խօսում ես.  
 Բացատրել ես դու այս ըսկզբներ,  
 Որ սէր խօսէին քո աշակերտներ:

Գու վարժապետ ես, ասա՛ մեզ արձակ;  
 Գու աստուածայի՛ն տառերի թարգման.  
 Կրթեցիր սրտեր, որ մի պատարագ  
 Խնկէին անկեղծ կրօնասիրութեան:

Կակաղ է լեզուդ, և հաղիւ ահա  
 Հնչումէ խօսքբս, որ արդարանայ .  
 Թէ Քրո բանը չէ, դու աշխարհական,  
 Ուրեմն չունիս մասըն քննութեան» :

Ո՛հ, իմ հայ եղբայր, ես ցաւումեմ քեզ,  
 Ցաւումեմ հոգով և ոչ խօսքերով .  
 Անապատ քո սիրտ — եղբայր իմ, խեղճ ես,  
 Անապատ ես դու ցամաք աւազով :

Դու չունիս քո մէջ ոչինչ ուսուցիչ, —  
 Թէ ունիս — գայլ են ոչխարի մորթով .  
 Ո՛վ պէտք է լինի սրտիդ սիրտիչ,  
 Երբ մեք չափումենք մեր օգտի չափով :

Եւ մի՛թէ Լեոն իրաւունք չունէր  
 Ցանջուել ծովի մէջ յուսահատ վշտի ;  
 Եւ մի՛թէ Լեոն գոչել կարող չէր,  
 Որ Հոյի կեանքն է ինչ ասորանքի :

Բաւական է այս մի այլ ժամանակ  
 Զոհելու եւմ այդ մեծագնի գործին .  
 Բայց այժմ, խնդրեմ, եկէք և գնանք,  
 Հետեւենք սակաւ ծանօթ Լեոնին :

Ի՞նչ եղաւ Լեոն, տարակուսելով  
 Ինձ հարցանումէ ընթերցասիրողն :

Կամիս որ լսենք, — սկսիր շուտով :  
 Տար Լեոնե Կաւկաս. յառաջ տար, քերթող : —  
 Այդպէս է. ուրեմն թող հիւսիս օտար,  
 Թող քո սիրածը. գնանք միասին,  
 Ուր բարձրանումէ Կաղբէկ մեծափառ, —  
 Եւ այն ժամանակ ողջոյն Կաւկասին ;  
 Իսկ թէ սա ծածկուի — ողջոյն դաշտերին,  
 Փրփրածաւալ գետերին ողջոյն,  
 Ուր յառաջ կը գայ քեզ նոր բնութիւն :

Ներիր ինձ, Մոսկուա .

Արկին տեսութեան քեզ խօսքըս տալով,  
 Երկար միջոցով կամիմ բաժանուել,  
 Եւ սրտիս յուզման հնազանգելով,  
 Իմ Լեոնի հետ ճանապարհորդել .  
 Պատրաստ կամ : — Ահա

Սիրած գրքերից մեծ պաշար առած. —  
 Տխուր մեղեդիք Հէյնէ պոյէտի,  
 Գեօտէ'ի Ֆուստա, այս անմահ քերթուած,  
 Թափառաշրջիկ վէպը Չայլ-Հարօլդի :

Երգիծանիչ գործը Յօրենալի,  
 Եւ Բեռանժէ'ի ոգելից երգեր ;  
 Եւ պատմութիւնը լրջամիտ Բեօքի,  
 Եւ Շաքսպիրի ողբերգութիւններ :

Մի քանի համար Մեղուից Պօլիսի,  
 Մի քանի երգեր մեզ ծանօթ Աոմսի, —  
 Եւ այս բոլորը ամուր կապկալած,  
 Ա՛հա Լեւոն թերթերով փաթթած, —

Գնումէ Լեոն: Խոտորնակ որպէս  
 Իւր սլացման մէջ ծիծառը դարնան  
 Թռչումէ Լեոն հեռու ասպարէզ, —  
 Գիւթիչ արևելք — ճնշուած Հայաստան,

Արձակ ձգումէ իւրեան ճանապարհ  
 Օգում սաւառնող արծուի թռիչքով,  
 Նա հատանումէ դաշտեր ծաղկաւառ,  
 Հայրենի երկիր ուղիղ դիմելով:

Եւ ահա քաղաք . . . և այն հայ քաղաք .  
 Այստեղ խռոված ժողովրդականք,  
 Պախարակումեն վարքը անառակ,  
 Ամբարիշտ հովուի անբարոյական . . .

Խաւար բռնաւոր և ծնունդ դահճի,  
 Գահճիճ արարքով և դահճիճ հոգով,  
 Հովւումէ հօտը մեր Լուսաւորչի,  
 Անուղղայ բարքով, թիւր քարոզներով,

Մեծ արուեստ ունի հրապուրանքի,  
 Եւ խորամանկ է այդ շարի հոգին.

Որպէս անդունդը ուկկիանոսի  
Գիտէ բանտարկել իւր ահեղ գաղտնին :

Որպէս գիշերի թանձրամած խաւար  
Նորա կուրծքի մէջ անձոռնի միտքեր  
Ալէկոծվումեն . նա ստրկարար  
Լսումէ նոցա , պարզումէ ձեռներ . . .

Եւ ամբողջ դժոխքն ամբարշտութեան  
Ճնշումէ Հովիւն . նա գաղտագողի ,  
Պղծելով կնիքն ձեռնադրութեան ,  
Նա դաւաճան է իւր Հայրապետի :

Ար ճնշուես բաղդից , եղու իտ ինքնիշխան ,  
Եւ կը ճնշէ քեզ առաքինութիւն :  
Եւ այս քո պատիժ . խորամանկ շղթան ,  
Որ ծնանումէ քո մէջ ցանկութիւն .

Շղթայել կամքը խեղճ ժողովրդի ,  
Բարօրութիւնը ստնակոխ առնել , —  
Ճնշելու է քեզ , Լայօլլի որդի . —  
Պատրաստ է քեզ փոսն , որ դու ես փորել :

Այն գործը միայն փառք է պահանջում ,  
Որ քաղաքացու փայլումէ կեանքով ;  
Որ ազգի վիճակն է բարեկարգում ,  
Որ զարգարումէ աշխարհս շնորհով :

Գու չար ես գործում և կամիս, որ այդ  
Յանգանքի իժը մեք բանի հաշուենք,  
Եւ ճշմարտութեան լարել որոգայթ  
Գու խիստ յօժար ես, մի՞թէ չգիտենք:

Ընկեր քո գործին—դժոխք սևամած,  
Եւ բոլոր դէեր քո հետ զինւորուած;  
Ուր չարագործ է մատնիչ մի տղեղ,  
Գու տասնապատիկ Յուդայ ես այնտեղ:

Պատասխանիր մեզ, ո՞ւր է արգասիք  
Քո վաստակների. ինչո՞վ կարացաւ  
Քո անբաղդ հօտը լինել երջանիկ;  
Գու գիտես, Հովիւ, քանի վշտացաւ...

Մի՞թին ախտերով զբաղուած է նա.  
Կամի գրաւել սիրտը քաղաքի,  
Որ իւր յանգանքը անպատիժ մնայ,  
Որ նա առաւել հասանէ փառքի:

Բայց ժողովուրդը հոգով բարկացած,  
Հատ վշտացած է գաւազանի տակ:  
Բողոք է կարդում ձեռք ձեռքի տըւած,  
Պատրաստ է հանել նորան հրապարակ...

Կանգնում է Վեոն, կամի բան խօսել,  
Բայց լծած է կառք. Հովիւն շտապով

Դիմումէ Հիւսիս. կամի զանդատել,  
 Որ օրէնքն լինի նորան ջատագով:

«Անմիտ սև եղբայր», գոչումէ Լևոն,  
 «Դառն է քո գալոցք, ուր ես շտապում,  
 Ահա միժնեցաւ կեանքիդ հորիզոն.  
 Ինքը օրէնքը քեզ մահ է վճռում» . . .

Եւ յառաջ Լևոն: Սարեր, հովիտներ  
 Անհետանումեն նորա աչքերից.

Մի շնաշխարհիկ բացվումէ պատկեր  
 Սպիտակափառ Աազրէկի գլխից:

Սպիտակ կատարն բարձր լեռների,  
 Կարծես, երկնքի դիպչումեն ամպին;  
 Եւ ձիւնից հիւսած թագ անդամանդի  
 Պճ'նումեն նոցա հպարտ գաղաթին:

Եւ քարանձաւից արծիւ մենաւոր,  
 Թևերը լայնած, գիտէ սաւառնել  
 Այնքան անթափանց և այնքան հզօր,  
 Մինչև հետամուխ աչքերից կորչել:

Ով արծիւ, արծիւ, քանի օղապար  
 Վերացել ես դու կապուտակ սահման.  
 Ախ, եթէ Հայի դրօշը բարձրանար  
 Անարգ կապանքից մինչ այդ աստիճան. . .

Այս, եթէ Հայի ուսերը ճեղքէր  
 Ոսերիմ լուծը իւր բռնաւորի,  
 Որպէս ճեղքումես դու արձակ եթեր  
 Հքեղ կազմութեամբ կարող թւերի:

Ինչ գեղեցկութեամբ փռւումեն դաշտեր  
 Հայեացքի առջև նորատես մարդի,  
 Ոսկի հոսանքով գոյն գոյն ծաղիկներ  
 Ճօճւումեն, որպէս խաղացքն առուակի:

Բայց, ախո՛ս, ինչպէս շտապ քայլերով  
 Ճանապարհորդը ոտքը է կոխում,  
 Նա սկսումէ անիծել հոգով  
 Այն, ինչ առաջուց դրախտ էր թրւում:

Տեղ տեղ պղծած է աւաղակների  
 Գաղանաւարոյ աւերածներից;  
 Աչքերդ լցւումեն արիւնով ցաւի,  
 Խոր արձակումես հոգոց ու կսկիծ:

Անպիտան ցեղեր, արժանի՞ էք դուք  
 Այելել բարիքն այդ պերճ երկրի.  
 Քանի՛ թափել է ձեր վայրագ բազուկ  
 Անմեղ արիւնը խեղճ անցաւորի:

Քանի՞ ծնողներ դառն արտասուքով  
 Ողբացին կորուստ հարազատների;

Քանի՞ ծովադան լացով, կակիծով  
Առագաստները նորեկ հարսների:

Ահագին ժայռեր և ապառաժներ,  
Ծաւալուած լուսով նոր արշալուսի,  
Յրցուած են այս տեղ: Մարդագետիներ  
Առողուած ցողով հանդէս են գալի:

Յառաջ և յառաջ, — և ոչ մի վայրկեան  
Չէ կանգնում Վեոն: Թեքվումեն սարեր:  
Ծածկվումեն կաղնիք, — և նոր տեսարան,  
Նոր փոփոխութիւն, և նոր հրաշքներ:

Թո՛ղ մեզկ, նրբասէր որդիք բնութեան  
Չսիրեն Վեոն, որ, թափառական,  
Չափումէ վայրեր, անմարդ անապատ,  
Վերջ չգնելով ախտին յուսահատ:

Ոչինչ հաճութիւն թո՛ղ չպատճառէ  
Նոցա, որ անբաժ են կնոջ ծոցից;  
Որոնց դատարկ կեանք անհոգ սահումէ  
Ջրօսանքի մէջ աղաղակալից:

Վեոնի հոգին, որ այնքան ցաւով  
Ատումէ հանգիստ, նման է կեանքին  
Հարազատ աղգի, որ լի բաժակով  
Ճաշակումէ թոյն դազաղի կողքին:

Ջմրխտեայ գաշտեր, այստեղ համասփիւռ,  
Մանուշակ, յասմիկ — գարուն սիրելի —  
Գալար հովիտից փչումէ զեփիւռ,  
Քաղցր որպէս շունչ գեռարոյս կուսի:

Տես, ահանակիտ այստեղ ջինջ անուակ  
Հեղիկ վազումէ ծաղիկների տակ,  
Վայրի շուշանը գլխիկը կախած,  
Գգվումէ ջուրը և է զմայլած:

Ղևոն կարծումէ, որ այդ պարզ ջրեր  
Հեռու կը տանեն կսկիծը սրտի,  
Կը ժպտայ գարուն, կը գան ծիծառներ,  
Փոքր ինչ կը զարթի վշտացած հոգի:

Ջարկումէ քնարին, — բայց նա հնչումէ  
Մի սրտասարսուռ, տխուր եղանակ:  
«Ողբա՛, պատանի», նա շնջումէ. —  
«Քեզ վաղ է ըմպել փրկութեան բաժակ:

Գու կորցրեցիր այն բազէից  
Քաղզի ժպիտը, երբ Հայաստանի  
Փշրեցաւ փառքը քո յատուկ ձեռից, —  
Եւ կը գտանես, երբ նորից կը կանգնի:

Ո՛հ, մի խնդրիր ինձ, իմ դէն — [Ժախճութիւն —  
Ուտումէ հոգիս այնպէս կատաղած,

Անմիտ պատանի ի՞նչ ուրախութիւն, —  
 Հայի սրտի մէջ դժո՛խք է ծածկուած:

Դժոխք է, ասեմ, այն տղիտութեան,  
 Որ որպէս ճճի ուտումէ նորան;

Որ խանդարելով և ուսում և լոյս,  
 Չէ թողել նորան բարօրութեան յոյս:

Նա ամենայն բան պատրաստ է գործել,  
 Հայրենիք, պարծանք թշնամուն մատնել;  
 Փո՛ղ նորան տուեցէք, նա փող է սիրում,  
 (Միայն առանց փո՛ղի դազաղ է գնում:)

Նիւթապաշտ է Հայն, ցուրտ որպէս սառուց,  
 Հաշիւների մէջ թաղուած և մեռած.

Նա արդէն սրտից մերժել է վաղուց  
 Գեղեցկի տիպը — վկայ է Աստուած:

Արծաթ — և նորան փայլեցաւ արև,  
 Վառվումեն աչքեր, թռչումէ հողով.

Ո՛վ Արծաթ, դու միշտ Հայի առաջև  
 Ներկայանումես դրախտի դէմքով:

Ով և դու լինիս, թէ չար ախտակիր,  
 Թէ պիղծ խարերայ, թէ ազնիւ հողի; —

Հայն կ'առաջարկէ քեզ միշտ մի՛ խնդիր.  
 Ի՞նչ է, հարձուստ ես, ունի՞ս շատ ոսկի:

Մեծատունն ես դու, բոլորի առջև  
Գուներդ բաց են, սեղանդ ծածկած.  
Եւ լիք են պարկերդ, մէք այսուհետեւ  
Հայր և որդի ենք, ուխտով հաստատած:

Եւ այս են նոցա օրի հոգսերը.  
Ինչ որ կարող ես, քանդիր, կործանիր;  
Ո՛վ է հարցանում, գանձ քեզ ժողովիր. —  
Թող մեռնի տնանկ, կորչի արդարը:

Գէթ մի ցաւ, մի դուժ, մի կարեկցութիւն  
Անտուն աղքատին ցոյց տային դոքա: —  
Այդպէս ես դու միշտ, ո՛վ հարստութիւն,  
Երբ քեզ տիրումեն կարողք անզգայ:

Գեղեցիկ է կեանք և հարստութիւն,  
Թէ աթոռակից է և գիտութիւն;  
Բայց թէ վերջինը, լոյսը պակասէր, —  
Լի աղտեղութեամբ կեանքը դամբան էր»:

Լռեցաւ Քնարն, արտասանելով  
Մտառութիւնքը այս նշանաւոր:  
Կանգնած է Լևոն, ցաւից խեղդուելով  
Բացադանչումէ նա կասկածաւոր.

Գիտէք, բարեկամք, ի՞նչ զգաց հոգիս. —  
Բայց ինչո՞ւ խնձորն երկպառակութեան

Չգեմ անվրդով ձեր կեանքի շրջան .  
Ա՛խ, դուք չէք կարող օգնել ցաւերիս :

Նիրհեցէք անոյշ, թո՛ղ թեատարած  
Հսկեն ձեր վերայ անմեղ հրեշտակներ . —  
Կանխակա՛լ կարծիք, — անլոյս թանձրացած  
Խաւարում շրջող մահաթոյն դուեր :

Ծանր ընկան վերաս անգութ շղթաներ,  
Եւ այն ժամանակ ես ստուգեցի .  
Քանի խաւար են հայրենի աստղեր,  
Խաւար է և սիրան հայրենասիրի :

Եւ չը շնչել օդ սարերի ազատ —  
Նոյն է, թէ չկայ և երանութիւն ;  
Եւ չ'արտիւն հոսանք կեանքի հարազատ —  
Հիւ՛նդ է, հիւ՛անդ և մահկանացուն :

Եւ երբ գիտութեան կը փայլի դրօշակ  
Իմ անբաղդ եղբօր Հայի ճակատին,  
Ես այն ժամանակ, ես այն ժամանակ  
Կը տեսանեմ կեանք իմ ազգի ծոցին :

Ասաց այս Աւոն . աչքերը ձգեց  
Գէպ ի արևելք ; մի խոր ախ քաշեց .  
Այն կայծակնահար վերքի նշան էր,  
Որ գէպ Հայաստան նորան գիաւումէր :

Նա վշտանումէ, բայց վշտի հարուած  
 Ոչ որի աչքին տեսանելի չէ;  
 Եւ այդ գաղտնի դէն, աղեղը լարած,  
 Հանապաղ նորան առաջնորդումէ.

Նորա ներքին կեանք — թախիժ տրտմութեան:  
 Մտքի շարժումները — ալէկո՛ծ մի ծով:  
 Աւախութեան դուռն, կնքած յաւիտեան,  
 Այլ փչելու չէ՛ նորան գարնան հով:

Նորա մատաղ սիրտ, որ երբեմն պայծառ  
 Ծաղկումէր որպէս պարտէզ նազելի,  
 Խեղդուած կուրծքի մէջ, քամումէ իսպառ  
 Փորձութեան բաժակ, որ նորից լցնի:

Մնձումէ ճակատն և դողդողալով  
 Բացումէ Հարուստն գանձերը պարկի.  
 Նա ոսկի ունի և նա դորանով  
 Կարող է գնել սիրտն հեղինակի:

Վառուեցաւ Զոյլին, նայեց դէպ ի վեր.  
 «Պիտ՛ կորչի Չարը, պիտ՛ կորչի Ղևոն».  
 Գոչեց սաստկութեամբ; թօթափեց թևեր,  
 Թռաւ, ոտք դրեց բարձր Գելիկոն:

Ներիր դու երգիչ, անշարժ աշխարհի,  
 Գերեզմանատան ուրուականների. —  
 Կոխումեմ անէծքդ հաստատ քայլերով,  
 Խորին նախատինք քեզ նուիրելով:

— Ասա՛, ո՛վ Ջոյիլ, ի՛նչ ես մտածում;  
 Ի՞նչ ծածուկ թակարթ ես ինձ պատրաստում;  
 Դու կարմրումես, հրէ՛շ անհեթեթ;  
 Կապուել է լեզուդ, — է՛հ, Աստուած քո հետ:

Թշուա՛ն ծաղրածու, մահապարտ գազան,  
 Քերթիր ճաշակը բանաստեղծութեան;  
 Բայց մեծ է քո մեղք և աններելի.  
 Մեր պարսաւանքը քո վերայ լինի:

Սև գործի հետքը, կնքած ճակատիդ,  
 Քեզ խոստանումէ վարձ մի խայտառակ,  
 Եւ, կամիմ կարծել, անպարծանք գլխիդ  
 Նա կ'իջուցանէ մի դժնեայ պսակ:

Ո՛ւր է զգացմունք մարդկեղէն պատուի,  
 Ո՛ւր ազնւութիւն; ո՛ւր է դրօշակ  
 Այն սուրբ վաստակի: Ա՛խ, թէ կործանուի  
 Քո վերայ, երգիչ, մեղքիդ աշտարակ:

Թո՛ղ կատաղի Չարն, — բայց ես հանգիստ եմ.  
 Ինձ հասկանումեն մարդիկ բանագէտ:

Իսկ երկրորդ գլխին, բարեկամք, կարծեմ,  
Արժան է դնել այստեղ վերջակէտ:

Այո՛, այստեղ վերջ. — միւս արկածներ  
Յետոյ կը պատմեմ. չկայ զօրութիւն;

Ա՛խ, արժան մուղայք, ա՛խ, ե՛թէր քոյրեր—  
Գէթ մինք ձեզնից գար ինձ օգնութիւն...



Handwritten text at the top of the page, possibly a title or header.

Handwritten text in the upper middle section of the page.

# ԼԵՒՈՆԻ ՎԻՃԵԸ

Main body of handwritten text, appearing to be a letter or a detailed note.



### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ III ԳԼԽԻ:

Արեգակը, դուրս փայլելով, փախստական է առնում գի-  
շերը: Համառօտ նկարագիր բնութեան: Առն օխուր և արաւում  
մտանումէ զաւկաս: Նորան երևումէ մի նոր քաղաք: Աիրակի է:  
Անգործ և պերճասէր հարստականքը: Հայ աղջիկները: Առն  
հաւանումէ նոցա գեղեցկութեան, բայց, ի վերջոյ չգանելով նոցա  
վերայ ազգութեան նշան, մեղադրումէ յանգիմանելով: Առնի  
ազգասիրական զրոյցը դոցա հետ: Եղիչէ: — Հինգերորդ դարի  
օրիորդները և մեղադրած աղջիկների պատասխանը: Հայ ծնողների  
անհոգութիւնը դատախարակութեան մասին: Վանանց ազատութիւնը  
(émancipation) որպէս շարժառիթ ազգային լուսաւորութեան:  
Պախարականք Հայ ծնողներին: Առնի վսեմ երգիծարանութիւնը:  
Տխուր մտածմունք ազգի խեղճութեան: Շքանշանից կաշառուած  
Մեծատունքը:

Խօսք անկող քերթողների և մատենագրների հետ:

## ԼԵՒՈՆԻ ՎԻՇՏԸ

### ՃԱՄԱՆԱԿԱԿԵՐՏ ԳԼԳԹ

#### ԳԼՈՒԽ III.

Ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին:

Ա-Ի-Դ-Ի-Ն.

Гласность не препятствует злу и не побуждает къ добру, если общество не обращает вниманія на самое дѣло; но безъ гласности, какъ препятствовать злу, какъ поощрить добро, если и видѣть то ихъ нельзя?—

Дж. Ст. Милль.

**Գ**իշերը փախաւ: Երկնակամարից  
Նուրը և թափանցիկ վարագոյրն ընկաւ,  
Ծածկուեցաւ լուսին: Եթերն աստղալից  
Քրքում-ծիրանի հանդերձ զգեցաւ:

Վարդեայ այգածին

Սևտումէ օր: Որպէս զուտ ոսկի,

Սփռելով նշոյլ նիրհող լեռներին,

Հանդէս է գալի Սկայն երկնքի:

Եւ Տա թռչուններն եղանակումեն  
 Մի եղեմային երաժշտութիւն;  
 Եւ լոյս Տըւողին նորա կարդումեն  
 Բացատրական օրհնարանութիւն:

Եւ կրօնասէրն երկիւղած սրտով  
 Չայնումէ Աստուած տաք արտասուքով,  
 Եւ բարձրանումէ նորա օթեան  
 Աղօթքը, որպէս ցօղն առաւօտեան:

Ջարթումէ Լեւոն: — Ահա աշխարհ նոր  
 Շատ խայտաճամուկ բնակիչներով: —  
 Հայ, Թուրք, Օսեան, Չերքեզ ահաւոր,  
 Հրէայ խորամանկ, Ռուս ինքնագով:

Եւ թեթեամիտ ազգը Վրացի,  
 Անտես առնելով փառքը հայրենի,  
 Միշտ դատարկաձեռն, շոր շունի հագին,  
 Անգամ կարօտ է օտար փշրանքին:

Ասելու բան կայ և լսելու բան,  
 Շատ հետաքրքիր վէպք ու զրոյցներ...  
 Եւ շատ ցաւումեմ, որ ես չեմ իշխան,  
 Ար արձակ խօսել կարելի լինէր:

Ինչ ձայն, դղրդոց: Լայն մէյտաններում  
 Խռնումէ ամբոխ: — Եւ ի՞նչ պերճութիւն: —

Չըլի՞նի Մաման օսկէվառ կառքում  
Տօնախմբումէ իւր իշխանութիւն:

Ա՛զգ, մի՛ խարիր քեզ սնուի յոյսերով,  
Երբ սոված, ծարաւ մօտեցար մահին,  
Որ այդ մարդիկը քո խեղճ վիճակով  
Վայրկեան մի գոնէ, ասեմ, շարժվէին:

Թէ շորերդ ճոթուած, թէ մերկ քո մարմին,  
Թէ մուրացկութիւն ծանրացաւ վերադ, —  
Խաղալի՛կ դարձար անզգամներին.  
Ցեխով ծեփեցին քո անմեղ ճակատ:

Մեք գնահատել չ'գիտենք ազգութիւն,  
Նորա ցաւերին դեղ - դարման անել.  
Ահա՛, ինչո՛ւ մեք սովոր ենք ատել,  
Որ ատու մեն — — — — — րիւն:

Տեսէք, նանրասէր, դատարկաշրջիկ,  
Փայլումէ խումբը հարստականների;  
Ո՛ւր էք շտապում, մեղկացած որդիք, —  
Խլել սրբութիւն, ո՞ւմ ոչ այդ յայտնի:

Միայն Համբարն է, որ համեստ բարքով  
Սիրումէ վաստակ, հեռու վատ կեանքից;  
Հպարտ է Համբարն, պարզերես դէմքով,  
Ոչինչ ահ չունի զեղխտտ հարստից:

Եւ նա սիրումէ իւր ազգի պարծանք,  
 Բայց ո՛չ գիտակից, կոյր է այդ սէրը;  
 Նա հայատեացին բերումէ զըկանք . . .  
 Երբեմն փայլումէ նորա սուսերը . . .

Օր է եօթերորդ: Ժպիտ շրթունքին  
 Ճեմումեն այստեղ ընկերք մուզայի.  
 Ստուեր է անկեանք սոցա առաջին  
 Գունաթափ, դեղնած աղջիկն շիւսիսի:

Մազերը սանրած, գեղեցիկ հասակ —  
 Հաւանելի են շրջայած աչքին . . .

Ո՛վ երիտասարդ, բե՛ր դոցա պսակ,  
 Թո՛ղ տայ իւր հարկը քո մատաղ հոգին:

Կերպարանք զլուարթ, խոշոր, սև աչքեր,  
 Գիշեր հաղորդող ցերեկի լոյսին;  
 Ճղած վարդի պէս վառվումեն թշեր,  
 Բո՛ց ու կրակ է դոցա երեսին:

Բնական է այդ, ո՛չ արուեստակած,  
 Բայց ահա՛ շինծու ներկն Եւրոպայի  
 Բերումէ դոցա մի սաստիկ հերձուած —  
 Իւր մեռած փայլը, — Աստուած այդ չանի:

Ո՛ւր է այն պոյէտ, որ լացայայտիչ  
 Խօսքերով պատմէր շարժուածք գծերի;

Ո՛ւր այն բանաստեղծ, և ո՛ւր նկարիչ,  
Գէթ իրագործէր կէսն այդ հայեացքի:

Ո՛վ դու ելլազա, ուր անդրանիկ  
Վաղուց հռչակուած է գեղեցկութիւն,  
Այստեղ ճանաչիր ամէներջանիկ  
Կախարդիչ սիրոյ կատարելութիւն:

Եւ շնաշխարհիկ դու Իտալիա,  
Ոսկէշող ցնորք բանաստեղծների,  
Խլեցի՛ն դափնիդ այստեղ սեւաչեայ  
Օրիորդները նիրհող Վաւկասի:

Մշտագեղ գարնան ձօնումն յոյսեր, —  
Թէ այդ առ աչօք երանգ խարուսիկ;  
Ասաուածատիպ էք մրայօն կոյսեր,  
Ա՛խ, եթէ երբէք չ'թառամէիք:

Բայց ծարաւի սիրտս, սիրոյ ցնորը  
Անտես առնելով, միշտ որոնումէ  
Գոցա մէջ գտնել հայութեան տարրը, —  
Երբէք չեմ հասնում փափագիս — զո՛ւր է:

Օտարի բարբառ, օտարի լեզուն  
Հայ օրիորդներ, ինձ չէ գրաւում.  
Ինչո՞ւ չունիք Հայ դաստիարակութիւն,  
Ինչո՞ւ Հայ խօսքը ձեզ չէ զարդարում:

Թէ կարծողներ դուք, որ նա չէ կարող  
Յայտնել ձեր սրտի և ցանն և հրճուանք.  
Ո՛վ, և նորա մէջ կան շատ կախարդող  
Եւ սիրոյ խօսքեր և մեղմ թոթովանք:

Եւ ձեր շրթունքը մեղր են ծորում,  
Եւ ձեր աչքերը կրակ են ցայտում, —  
Հրաշալի կաւկաս, քեզ անգիւտ աւեր.  
Ազգի համար չէք, Արմենուհիներ:

Ծաղկեցէք որպէս ծիծաղող դարուն, —  
Բայց ծաղկելու չէ հայրենի այգին.  
Կ'ծաղկի կաւկաս, ձեզ կամ Արացին,  
Կամ Ռուս, կամ Թուրք կ'տանեն կնութիւն:

Ձեր դատարկ կեանքը կ'անցանէ ունայն...  
Երբէք բաղդատոր լինել կարող չէք.  
Ձեզ կ'նախատէ աշխարհ ամենայն:  
Դուք ձեր ծնունդը անիծել կ'սկսէք:

Արդան ձեր դուռը Երզնէներ անտուն,  
Կ'ասեն. Տիկիներ, մայր մեր Հայաստան,  
Հիւանդ է, մերկ է, — հասէք օղնութիւն, —  
«Ձերնք ճանաչում ձեզ, — այս ձեր պատասխան:

Ո՛չ դառն արտասուք, ոչ ձայն դողդոջիւն,  
Ոչ հայրենիքի անարգ պղծութիւն,

Կարող չեն ձեր մէջ առաքինական  
Արծարծել գութ մի բեկուած հայութեան:

Բայց այդպէս չէին ձեր անցեալ քոյրեր:

Նոքա սիրեցին անուն ազգութեան;

Նոքա սրբեցին մայրենի վերքեր

Անմեղ արիւնով և անմահացան:

Քաղցրաձայն Բամբիոն մի ձեռն առնելով, \*

Զինավառեցան Հայոց աղջիկներ;

Եւ մատաղ կուրծքը խաչակնքելով,

Պատերազմական հնչեցին տաղեր:

Աին էին ծնել, բայց երբ հայ ազգին

Աւեր ուղարկեց Պարսիկն այն գոռոզ \*\*,

«Կորո՛ւստ», գոռացին և սուրը ձեռին

Երկվար հեծան որպէս մի հերոս:

Սուրբ առաքաստը մոռացան նոքա,

Եւ չժիշեցին խնջոյքն հարսնութեան;

Աչք -- հարե՛նք շրթունքի վերայ,

Փռուեցան դաշտում, — ո՛վ մեծ քաջութեան

\* Նուագարան կամ գործի, որով մեր նախնիքը երգումէին  
ազգային հերոսների արարքը ու քաջագործութիւնը:

\*\* Յազկերտ երկրորդ:

Եւ փոշոտեցան, և ծխոտեցան  
 Անկողինները նորեկ հարսների;  
 Տրամեցան նորա և աչքով տեսան  
 Անողորմ տանջանք սիրող ամուսնի:

Գարունը հասաւ: Եկան ծիծառներ,  
 Վարդը բացուեցաւ: Եւ անհոգ մարդիկ  
 Տեսան, խնդացին, — Բայց նորա, խնդներ,  
 Երբէք չ'տեսան իւրեանց սիրելիք:

Շատ տարիք անցան. . . . Լացով, կսկիծով  
 Անոջ հայրենիք յիշատակեցին. . . .  
 Եւ նորա համար մեռան անխռով, —  
 Եւ այսպէս իւրեանց սէրը ցոյց տրւին:

Սպիտակութիւնք սուրբ ոսկրների  
 Խնկով սրսկեցին դաշտն Աւարայրի.  
 Զարմացան ազգեր, եկան և տեսան.  
 Մանուշակ, շուշան նոցանից բուսան:

Գափնիք անթառամ թո՛ղ ձեզ պսակն;  
 Թո՛ղ ձեր ոսկերքը ջերմ արտասուքով  
 Հայրենասիրի աչքերը թացեն: —  
 Խաղաղութի՛ւն ձեզ սուրբ սաղմոսներով:

Մինչ դեռ հայկական ծաւալումէ ցօղ  
 Աշխարհիս վերայ — Հայն ձեզ կը յիշէ;

Եւ քեզ , ո՛վ անցքիս կենդանագրող ,  
Ո՛վ ողևորուած չքնաղ Եղիշէ :

Անմահ է վաստակն , որ աւանդել ես  
Հարազատ ազգիդ գրականութան .  
Հայ լսելիքը դու կախարդումես ,  
Որպէս հանձարեղ մի պատկերահան :

Ո՛վ մեծ Եղիշէ , որպիսի՞ լեզուով  
Նկարումես դու անցքը աշխարհիս . . . .  
Ոգելից ես դու . զիրքըդ կարգալով  
Ես մկրտվումեմ սուրբ անդամ ազգիս :

Բայց դուք , ո՛վ պայծառ և շնորհալի  
Հինգերորդ դարի Հայոց աղջիկներ ,  
Քանի՛ օրհնութիւն խոստովան սրտի  
Չեղ անկեղծարար բերել եմ նրւէր :

Դուք Չեղ կանգնեցիք շիրիմ անմոռաց ,  
Ազգասիրութեան գործով պսակուած ;  
Բայց վայ անարժան թոռներիս օրին ,  
Որքան ցած ենք մեք , — հո՛ղը մեր գլխին ,

Դուք ձեզ զոհեցիք Հայի պարծանքին ,  
Բայց ձեր քոյրերը , — ո՛հ , արտասուքից  
Խեղդվումէ ձայնըս . . . անպէտք են ազգին . . .  
Յանդիմանեցէք դոցա շիրիմից :

Արդար չէ արդեօք, ինչ զրուցումեմ ;  
 Ո՛վ հայ աղջիկներ, ստոյգ շեմ խօսել :  
 Բայց ներեցէք ինձ, եթէ հարցանեմ .  
 Գիտէք Հայերէն կարդալ և գրել :

«Մեք մեղաւոր չենք, ազնիւ աղգասէր,  
 Շշնջումէ ինձ մի կանացի ձայն, —  
 Մեք կը բռնէինք դրօշն աղգութեան .  
 Այդ արգելեցին մեզ մեր ծնողներ :

Մեք կ'կապէինք մայրենի խոցեր,  
 Նորան կ'տայինք բոլոր մեր զարդեր ;  
 Մեք Հայի վիշտով կ'վշտանայինք,  
 Եւ թշնամու դէմ սո՛ւր կ'հանէինք :

Վկայ է Աստուած . ոչ որ նոցանից  
 Ո՛չ խրատեց մեզ և ո՛չ կշտամբեց,  
 Երբ սիրտս, սթափուած անհոգ օրերից,  
 Առաջին ծնունդն օտարին նուիրեց :»

— Աւրե՛մն ծնողներ, ուրե՛մըն հայր, մայր,  
 Պատճառ են այսչափ աղգասպանութեան .  
 Բայց ո՞ւր է ամօթ, — Ո՛վ անառակ դար,  
 Ո՛վ անջնջելի խայտառակութեան :

Հայր կորչումէ — նաքա անհոգ են,  
 Խեղդուած ծովի մէջ շահրստացութեան :

Սուրբ ազգութիւնը արհամարհումն  
Որպէս անպիտան կոտորած մի աման . »

Այսպէս, ման գալով լայն փողոցներում,  
Լեռն տեսնումէր մի անառակ կեանք,  
Որ սիրելի էր հին Ասիայում; —  
Մի բթացած կեանք և անընդունակ:

Այդ դատարկ կեանքը, ուր լոկ պերճութիւն,  
Խառն ունայնասէր հրապուրանքով,  
Ուր արևելեան անկարգ յղիութիւն  
Գոռողանումէ իւր լկտի դէմքով; —

Այդ նանիր կեանքը թափումէ իւր թոյն  
Բոլոր շրջակայ բնութեան վերայ .  
Հողի, հաւատ, կամք, ուսում, կրթութիւն, —  
Սորա մի խօսքով մնումեն անզգայ:

Աղջիկը չ'ունի դաստիարակութիւն,  
Ո՛չ ազգի հոգով և ո՛չ օտարի .  
Արտաքին պչրանք և փայլողութիւն,  
Ա՛յս է հոգևոր կերակուր կեանքի:

Նորա մանուկ սիրտ չէ ընդունարան  
Այն անախտ սիրոյ և զգացմունքի,  
Որ Տեսչութիւնը զարդարեց նորան,  
Տալով մի նեցուկ դէմ բռնաւորի:

Թարչամած է վարդ, վարդ քնքուշութեան,  
 Անգործ է ուղեղն անբաղդ աղջկան;  
 Այդ բարձր ճակատ, այդ մաքուր աչեր  
 Չունին ներքին հուր, ո՛չ լուսոյ կայծեր:

Եւ երանութեան չէ բացվում ձեզ ծով,  
 Երբ դուք նայումէք աղջկայ վերան.  
 Տեսէ՛ք, ի՞նչ տխուր գծագրներով  
 Ներկայանումէ քոյր մեր անպաշտպան:

Ահա ժամանակ հասաւ պսակի, —  
 Նա մտնումէ կեանք, ի՞նչ խորհուրդ ունի;  
 Ի՞նչ մայր կարող էր լինել այդ աղջիկ,  
 Երբ տղամարդին դարձաւ խաղալիկ:

Այդտեղ անօգուտ սուրբ ամուսնութիւն.  
 Նա մարմնական է միայն ցանկութիւն;  
 Այդտեղ տղամարդ կնոջ բռնաւոր. —  
 Ահնը հնազանդ, կին անձայն, անգոր:

Նա ծառայ, նա հարձ, նա ցած աղախին,  
 Նա ցաւով ճրնչուած մայր զաւակածին. —  
 Այդ ս'յն Եւան է, որ մահի կնքով  
 Ստացաւ վիճակ Մովսէսի գրչով:

Այդ ս'յն Եւան է, որ, մտնելով կեանք,  
 Պիտի վշտանայ և տանի զրկանք;

Ա՛յն Եւան, այն կին, որ հարիւրներով  
Գնացին հարեմ, մեռան տանջվելով:

Ո՛ւր է քո պատիւն, կին թրշուտական,  
Ո՛ւր է կանացի տաճարն սրբութեան.

Աստուած ստեղծեց քեզ մեզ հաւասար, —  
Բայց ի՞նչ տեղ տրւեց քեզ անարդ աշխարհ:

Ի՞նչ սկրզբունքով քեզ ջատագովեց  
Եւ օրէնստուն և իրաւարան,

Գու մի՛ շտ երեխայ — օրէնքը վճուեց,  
Եւ միշտ անձնատուր հոգարարծութեան:

Բայ սրտիդ վէրքը աշխարհիս առջև, —

Անարդարութիւն թո՛ղ այսօր մեռնի;

Թո՛ղ հորիզոն դայ փրկութեան արև.

Գեղեցկութիւնը թո՛ղ փառօք զարթնի:

Ո՛վ Հայոց հայրեր և Հայոց մայրեր,

Ինչո՞վ կարող էք ձեր խիղճը սրբել;

Ի՞նչպէս աշխարհում այդ խեղճ աղջիկներ

Կարող են իւրեանց բազդաւոր առնել:

Ծանր է ձեր գործը քան թունով թափած

Անէ՛ծք ու նզով դառն յանցաւորի.

Չեզ ներելու չէ երկնային Աստուած;

Չեր առջև դժոխք; Օ՛րն դատաստանի:

Մայր մեզ տուեցէք, որ սնուցանէր  
 Մեզ սուրբ կաթովը ազգաշինութեան,  
 Որ մի օր անբաղդ Հայն լուսաւորէր  
 Իւր խեղդուած մահով կեանքի գերեզման:

Մայր ենք պահանջում, կատարեալ մի կին, —  
 Այդ մեծ վարժապետն մարդկեղէն սրտի,  
 Այդ առողջ, քնքուշ կրթութեան որդին,  
 Որ տա՛ր ազգութիւն, որ տա՛ր մեզ հոգի:

Մէք այն ժամանակ լինելու չ'էինք  
 Եւ խորթ, և օտար, և անպէտք անգամ,  
 Որ միայն Հայի անուն պղծէինք,  
 Եւ նորա հոտը չ'տեսած անգամ:

Մէք այն ժամանակ կ'դադարէինք  
 Ամօթից խեղդուած կարմրատակել,  
 Եւ եւրոպային մէք կը յայտնէինք,  
 Որ այժմ ազգ ենք . . . մեզ պէտք է սիրել:

Այո՛, մէք ազգ ենք և Հայի որդի,  
 Մարդկութեան մշակ և գործակատար,  
 Թո՛ղ մեր առաջն անարգելք բացուի  
 Լուսաւորութեան ազատ ճանապարհ:

Այս դուք չ'կամիք, Ծնողք հայկական,  
 Թո՛ղ այստեղ Լեւոն բանայ իւր բերան;

Թող իւր պարսաւանք թափէ ձեր վերայ .  
 Լսեցէք նորան, — սկսումէ նա .

«Ա՛խ, եթէ խաւարն յուսով ծաւալէր,  
 Որ ձեր չորս կողմին թագաւորումէ,  
 Գուք կը տեսնէիք . ի՛նչ կորուստ, աւեր,  
 Այդ չար սատանան ձեզ պատրաստումէ :

Ո՛վ դուք Հայ ճնողք, հպարտ էք յուսով,  
 Թէ սրբութիւնը պղծեցիք կեղտով ; —  
 Եւ ծափ են տալի ուշաբարձ, տեսէք,  
 Երբ ձեռք բերեցին աւելորդ կոպէկ :

Եւ բարձրանումեն, առաւել ևս վեր,  
 Քան լոյս, քան Աստուած, քան հրեշտակներ ;  
 Եւ երազումեն երկնային ծաղկել  
 Երանութիւնով, — փառքով պսակվել :

Բայց երբ անողոք հարուածներ բաղդի  
 Կը քարշեն դոցա ճանկերով վշտի . —  
 Հասու կը լինեն, որ որդ են անզօր,  
 Որ տրորումէ ամէն անցաւոր :

Եռումէք յուսով, որ ուրախագին  
 Անխռով կեանքի վայելէք բարիք, —  
 Բայց այդ երջանիկ, այդ պայծառ բաղդին  
 Արժանի՞ էք դուք, դամբանի ճճիք :

Գո՛ւք, դա՛րան գործող ձեր զաւակներին,  
 Վաճառեցիք խիղճ, պատիւ ծախեցիք;  
 Եւ աչք դնելով նուազ գրպանին,  
 Անամօթաբար յափշտակեցիք:

Այդ հարստութիւն, որ դուք պաշտումէք,  
 Չեր ձեռից կը սողայ որպէս թէ ժիպակ \*;  
 Եւ անկման զանգակն այնտեղ կը լսէք, —  
 Մա՛հ կը գուշակէ այդ տխուր զանգակ . . .

Ինչ որ ծնումէ երկրիս երեսին,  
 Որս պիտի լինի լոկ ոչնչութեան;  
 Բարի գործեցէք, ս'իլ արտասուագին  
 Հողանիւթ որդիք ամբարշտութեան:

Բարի գործն է, որ մնումէ պայծառ,  
 Որպէս պարզ երկինք չըխաւարվելով;  
 Փոշի է փոխվում ամուր որձաքար,  
 Եւ կերթայ բոլորն իւր ժամանակով:

Բայց դժուարին է բան հասկացնել  
 Նոցա, որ կեղտին գերի են դառել, —  
 Եւ ահա՛, ինչո՛ւ տխուր է հոգիս  
 Եւ դժխիղճի դէմ և յոյս ծագելիս:

\* ժիպակ. ругать.

## ՀԱԿԱՌԱԿ ՉԱՅՆԵՐ

Եւ զուտ ոսկին է իշխան աշխարհի,  
 Եւ մեծ զօրութիւն նա իւր մեջ ունի;  
 Նա իւր ծանրութեամբ տիեզեցիք է կշռում,  
 Գժոխք է ծախում, զրահա է առնում:

## ԼԵՒՈՆ

Ո՛վ զուք Հայ մարդիկ, ուր ազնւութիւն,  
 Քանի՞ դիզել էք ապականութիւն;  
 Չըկամիք սակաւ սթափուել քնից,  
 Թափել ցեցերը, զարթնել զազազից:

Վերին Պատուհաս ձեզ վրէժխնդիր.  
 Երկինք է հասել բողոքն Աղքատի;  
 Գժոխք ընդդէմ ձեր, անէ՛ծք մահակիր. —  
 Ուռչումէք գանձով, բայց ո՞ր խեղճերի:

Նզովումեմ ես այդ պիղծ ճանապարհ,  
 Որով հասել էք այդ կարողութեան;  
 Որքան Աստուծոյ կանգնած է աշխարհ,  
 Յեխով լցնելու են ձեր գերեզման:

## ՀԱԿԱՌԱԿ ՉԱՅՆԵՐ

Ո՛վ կարող արծաթ, սիրտ մեր քեզ նուէր.  
 Գու մեզ տուեցիր այս պերճ պալատներ;

Եւ հանք, և ակներ, և զանձ պատուական,  
Բողորը մեր են և մե՛զ սեպհական:

## ԼԵՒՈՆ

Սո՛ւտ է այդ բողորն, և Հարստականն  
Կարող է կոչել իւրեան սեպհական

Միայն մի դազաղ, երեք թիղ գետին,  
Ուր որդ և ուտիճ կը լափեն մարմին:

Կամ թէ մեռանէք մի այնպիսի տեղ,  
Ուր խարէութեան ունէիք աղբիւր,

Վայ, առանց թաղման ձեր գէշը տգեղ  
Ազոռաներ, գայլեր կ'առնեն կերակուր:

Կ'երթայ ժամանակ . . . և ձեր դիակներ

Կը դառնան փոշի, բայց անսխառք գործեր

Կը ապականեն օդ, միշտ կը թափառեն, —

Ծնողներ իւրեանց սերընդին կը պատմեն:

Անտակութեան ճանապարհներով,

Խեղճ չքաւորի հացը կտրելով,

Գիզումէք առատ արծաթի թումբեր,

Եւ ինչո՛ւ համար, աչքածակ գայլեր:

Արձան կ'անգնեցէք, որին չըհասնի

Ոչինչ մարդկեղէն սնափառութիւն:

Որպէս արեղակ երբէք չըմենի, —  
Եւ այդ արձանն է Ազգ-ի-հի-ն:

Այդ շնաշխարհիկ է այն սուրբ արձան,  
Որին Ազնիւը գլուխ է խոնարհում,  
Որին բուրվառով խոստովանութեան  
Ազնիւ թոռները խունկեր են ծխում:

Անխարդախ պաշտօն, պատուաւոր վաստակ,  
Հասարակ օգտին անձնազոհութիւն, —  
Սոքա են կեանքի գեղեցիկ պսակ,  
Եւ սոցանից կախ բոլոր գիտութիւն:

Կարկուտ է ընկել Հայ ազգի վերայ,  
Թողէք արշինը, ժամանակը չէ;  
Թէ սիրտ չունիք դուք, մեռած անզգայ,  
Թէ կամիք, որ ևս ծանր հառաչէ:

Բայց ազգի համար աշխարհ չէք եկած,  
Կամակոր որդիք ժանգոտ Մամոնի.  
Դուք ընդունակ էք, փորերով ուռած,  
Լափլիզել աման և քամել գինի:

Եւ յետոյ, ո՛վ կեղտ, ո՛վ անմտութեան,  
Վատնել քսակը, — շոսյլո՛ղ, և ո՛ւմ.  
Մաշուած, վաճառուած այն գեղեցկութեան . .  
Փափուկ մահճի մէջ . . . Ասողակի ծոցո՛ւմ . . .

Ո՛հ, շատ շատ օրեր դեռ պիտի սահեն,  
 Երբ Հայի արևն փոշուց կը զարթնի;  
 Դեռ ամբողջ դարեր պիտի անցանեն,  
 Երբ ազատութիւն ծառի պէս կը բսնի:

Եւ ազատութիւն . . . բայց ո՞վ այդ գիտէ,  
 Ներկայի մէջ է գալոցքի հողին.

Լաւ է մեր ներկան, — թող պատասխանէ  
 Գատարկաձեռն Հայն տարակուսողին:

Սովորութիւն է այդ ժառանգական,  
 Գատարկութենով կեանքը դրոշմել,  
 Եւ անպատուութեամբ լցնելով գրպան,  
 Մի մի աննշան գերեզման մտնել:

Այսպէս են նորա կեանքը հասկանում,  
 Անրան կենդանուն հաւասարելով.  
 Նորա կորչումեն գիծին անկողնում  
 Որպէս Սուլթանը իւր պիղծ հարեմով:

Ո՛չ գիրք, ո՛չ ուսում, և ո՛չ կրթութիւն  
 Զունին նոցա հետ հաղորդակցութիւն;  
 Սորա և գիւտերն լուսաւորութեան, —  
 Որպէս դաշտի մէջ ղողանջող մի ձայն:

Բայց բոլոր կեանքը անօգուտ ապրել,  
 Եւ ոչնչանալ որպէս որդ կամ ցեց;

Եւ այս աշխարհից նախատինք տանել, —  
Հայեր, ո՞վ այդպէս ձեզ ծանր պատժեց:

Ջեշտեց վերջին խօսք, և շեշտեց կրկին;  
Աւարտեց զրոյց Աւոն աղգասէր;  
Հատ կծու բաներ պատմեց Հարստին,  
Բայց խուլ և համր էր նորա ականջներ:

Ճեմուսէ Հարուստն նոյնպէս փառաւոր,  
Նոյն ազահու թեամբ նա երազումէ  
Մթերել զանձեր միլիոնաւոր—  
Նորա ի՞նչ բանն է, որ Հայր մերկ է:

Նա սողալ գիտէ Առիւծի դրան,  
Խնդրելով ճնշող կնուտից ապաւէն;  
Արծաթով գնել գողակից իշխան,  
Կաշառող կուրծքին ձգել ժապաւէն:

Մեր մէջ սահումէ մեծ թշուառութիւն,  
Ոչ որ չէ կարող մտածել իւր պէս;  
Ոչ որ չէ յայտնում իւր դատողութիւն,  
Որ չ'ասեն նորան. ա՛խ, դու սևերես:

Ի՛նչպէս սիրումեմ, ի՛նչպէս յարգումեմ  
Առողջ զրոյցներ անկեղծ Աւոնի;  
Ի՛նչ ազատութեամբ և ի՛նչպէս խոհեմ  
Բացատրումէ գաղտնիքը սրտի:

Շապլ շարստին չ'գիտէ խունկ ծխել ,  
 Անաղնիւ գործի ծախելով գրիչ .  
 Նա ճշմարտութեան ուխտել է լինել  
 Պարկեշտ առաքեալ , համեստ քարոզիչ :

Լուռ սենեկիս մէջ ձանձրացաւ հողիս ,  
 Արձակ օդի մէջ ճեմել է խնդրում ;  
 Եւ ժամանակ է հանգիստ տալ գրչիս ,  
 Նա արդէն ճրո . . ճրո . . ոչինչ չէ գրում :

Գուք տեսանումէք , որ ոճրս աղքատ ,  
 Չունի ներքին կապ , ներքին քաղցրութիւն ;  
 Շատտեղ խորթ դարձուած և անհարազատ ,  
 Ներիր շայկարան , — եռամե՛ծ գիտուն :

Արդէն դպրութեան արհեստաւորի  
 Շարժումէ գրիչն անսանձ ախտերով ;  
 Խեղճ մարդ . չըզիտէ ինչ բանն է բարի ,  
 Ճշմարտութեան հետ պատերազմելով :

Ճշմարտութիւնը լոյս է կենդանի .  
 Ոչինչ երեսպաշտ մրող կամ գրող  
 Նորա ճառագայթ ծածկել չէ կարող , —  
 Եւ այդ ձիր է մեր անկողոպտելի :

Ներեցէք . գրիչս չէ հպատակում  
 Խրթին , խորիմաստ բանաստեղծներին :

Նա, քար ձգելով, ահանջ չէ դնում  
Ճարտասանութեան պատուիրանքներին:

Թէ և երբեմն սիրարս գրաւեց  
Խրթին կանոնքը խրթին արուեստի,  
Բայց զարդանալով խելքըս չընդունեց,  
Յետ ուղարկեցի, — ապերախտ որդի:

Խոստովանումեմ ճարտասանարար,  
Չըգիտեմ գրել ես ոտանաւոր.  
Դորա համար է, որ շքեղափառ  
Պառնասի վերայ չունիմ ես աթոռ:

Թէ ոգևորէր ինձ նորա մուղան  
Որպէս այլ Հայոց տողաչափներին, —  
Ո՛հ, այն ժամանակ որքան զանազան  
Ա՛ղբ կը ծախէի օրագրներին:

Հայկից սկսած երկար ու բարակ  
Ես կը ճանէի; տմարդի, անտաշ  
Իթմ թխելով, և նոյնչափ արագ,  
Որպէս իմ իւր տափակ լաւաշ:

Տաղեր, առակներ և խենդուխելառ  
Ողբ, կական, երգեր կը կցկցէի,  
Եւ այնքան անմիտ, և այնքան դժուար,  
Որ ինքըս անդամ չըհասկանայի:

Եւ թարգմանութիւնք ուսասթաթար,  
 Թէ հաճելի էր, և Հայ - Չինարէն —  
 Չեղ կրնձայէի, և ևս վատթար. —  
 Այլ էրէ՛ - շէ՛ն, Հայր մեր, է շէ՛ն:

Ո՛հ, ինչ յաղթութիւն, ամբօխը դողով  
 Ծունըր կը դնէր: Ես կը փքուէի  
 Կորովի գրչով, իմ մե՛ծ հանձարով,  
 Պղտոր ջուրի մէջ շատ ձուկ կ'որսայի:

Ազատ արուեստի վարձկան-դահիճներ,  
 Ատումեմ հողով պիղծ պաշտօնը ձեր:  
 Եւ կը դայ մի օր — պրոօզով յարմար,  
 Որ ձեր հետ հաշուեմ, ձգելու եմ քնար:

Ապահանուեցէք և այսօր գոնեայ  
 Գարշ յիշոցներով ոխակալութեան.  
 Այդ է ձեր վարձը, մի ևս վարձ կայ —  
 Եւ ճաշակումէք — ջո՛ւրն մոռացութեան:

Բայց քեզ հանումեմ այս տխուր դասից,  
 Ո՛վ նոր հայախօս և աղնիւ մըշակ.  
 Քեզ կարող էի անմահ փուշերից  
 Քաջ մարտիրոսի բոլորել պսակ:

Քնարիդ լարերն ազատ շարժվումեն,  
 Երբ ազատ քո կամք, ազատ քո հողին. —

Այդպէս սոխակներ ներդաշնակումեն,  
Հեռու վանդակից, թփերի միջին:

Սրտիդ կակիծը — կակիծ է ազգի,  
Եւ ո՛չ մի դիմակ կեղծաւորութեան;  
Գրչիդ վաստակը — մեծութիւն Հայի, —  
Թէև հայասէրք են քո դաւաճան:

Ո՛վ ազգի անդամ, յաւէրժ յարգելի,  
Թո՛ղ մխիթարէ կուրծքիս հառաչանք  
Պայծառ ճակատըդ Հայրենասիրի,  
Որի վարձն եղաւ ապերախտ զրկանք:





ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆՍԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի Կոմստանսինի գրադարանի կողմից հրատարակված գրքերի ցուցակը:

## ՆՆՆՆՆՆ ՎՎՎՎՎՎ

Հայաստանի Կոմստանսինի գրադարանի կողմից հրատարակված գրքերի ցուցակը:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ IV ԳԼԽԻ.

Հրաշագեղ Գարունը և Ամառը Հայաստանի: Ախճակագրու-  
թիւնը բնակիչների և նոցա թշուառութիւնը. Հարստահարող  
իշխանքը. Ասիայի սարկութիւնը: Չայն վերանորոգութեան: Լեռն  
Հայաստանի աւերակների վերայ: Նորա ազգողական հարցութիւնը  
ձերունի Հայաստանի հետ: Լեռնի վիշտը և հայրենասիրական զեղ-  
մունքը: Սահակ, Մեսրոպ, Մովսէս Խորենացի, Ղազար Փարպեցի և  
Ներսէս Լանբրոնացի լսումեն նորա մրմունջը և երևումեն նորան. նո-  
քա յանդիմանումեն Լատին Քարոզիչները և Հայ Ազգերը. առաջինների  
պարսաւելի վարքը և երկրորդի անհոգութիւնը: Նոցա ոգելից և  
չքնաղ ճառը կրօնի մեծութեան մասին: — Ակադեմիա պահանջելը  
Մայր-Եղմիածնում: Լեռն, համոզվելով, որ գործը առաւելէ քան  
թէ խօսքը, խոստանումէ այնուհետեւ, եթէ նորից սիրտ ստանայ,  
նուիրել իւր անձը գործի և մշակութեան:

Հեղինակի վերջաբանը:

ԼԵՒՈՆԻ ՎԻՇՏԸ.

ՔԱՄԱՆԱԿԱՆՔԻ ՎԷՊԻՔ.

ՔԼՈՒԽ IV.

Իշխանք գողակիցք գողոց, ծառայից համամիտք,  
անընարողք իրաւանց:

Մ-Վ-Ի-Խ-Բ-Է-Մ-ՅԻ:

Հաւատ փաճառեալ ընդ սնտաի կենցաղոյս:

Մ-Վ-Ի-Խ-Բ-Է-Մ-ՅԻ:

Италия! Италия! о ты,  
Кому судьба наследиемъ несчастнымъ  
Даръ роковой вручила красоты!  
О лучшебъ ты была не такъ прекрасна,  
Зато сильна!..

(Собр. 1859 г.)

Ք  
Ո՛ւ իմ սիրելի, կարճ ես փոքրիկ  
ճաշակել անխռով մարուր բոսէք .  
Ստոյգ չէ, որ դու խօսքրս «Հայրենիք»,  
Շատ մեծարել ես, բայց ատել — երբէք:

Ո՛վ իմ մտերիմ, ես շատ լաւ գիտեմ,  
 Որ սպասումես, երբ ես կըսկսեմ  
 Հարազատ երկրի վիճակը նկարել,  
 Եւ ամենայն բան իսկապէս խօսել:

Արդարեւ տեսանք մէք բուն Հայաստան,  
 Եւ Լեւոնի հետ ահա՛ ճեմումեմ . . .

Բայց ե՛ղբայր, գիտե՞ս, տխուր տեսարան,  
 Ես մի խորին ցաւ իմ մէջ զգումեմ:

Որպէս ապառաժ ծանր է իմ ցաւ.  
 Նա ներգործումէ որպէս դառն լեզի;  
 Եւ համարեա՛ կեանքըս դադարեցաւ,  
 Որպէս և կեանքը անբաղդ աշխարհի . . .

Ա՛խ, աղօթք արա քո ազգի համար.  
 Նորա վիճակը նախանձելի չէ;  
 Նա անպատասխան որպէս փայտ կամ քար;  
 Նա լուռ, նա համըր . . . ա՛խ, նա մեռած է . . .

Ես ման եմ գալի իմ ցաւից խեղդուած,  
 Բայց դարնանազարդ տեսքը բնութեան  
 Փայլումէ այստեղ հրաշքով պսակուած: —  
 Գովասանե՞մ քեզ կանաչ Հայաստան:

Զմայլի՛ր, ըզմայլի՛ր, իմ միակ ընկեր,  
 Որքա՛ն շքեղ է բնակարանը Հայի, —

Ջարմանալի չէ, որ Նախնիքը մեր  
կարծեցին լինել գրախան Նդեմի:

Գիրքն Մոսկուայի քեզ գրաւելով,  
Այնպէս կարծումես, այլ երկիր չըկայ,  
Որ կարող էիր սիրել դու հոգով,  
Թեք ընկած պայծառ կանաչի վերայ:

Թէ կամիս տեսնել Արարչապետի  
Հրաշագեղ գործը ու ճարտարութիւն, —  
Ե՛կ Հայոց աշխարհ. առաջին օրի  
Նա կ'առաջարկէ քեզ գեղեցկութիւն:

Ի՛նչ ակնահաճոյ տեսարաններով  
Առատարաշխած են դաշտավայրեր;  
Ի՛նչ ոսկենկար բուսականներով  
Խնկահոտումեն այստեղ հովիտներ:

Կախում է գոհարն — ողկոյզ խաղողի;  
Ծորումէ հիւթը սաթի շիթերով,  
Եւ սիրուն թռչնակ մի գաղտագողի  
Հիւսումէ բունը այստեղ մեծ հոգսով:

Փայլումէ դեղին — կարմրագեղ ծիրան,  
Քողարկում կանաչ թփերի հովով;  
Լցում է այստեղ ներդաշնակութեան,  
Նոր այդ աւետող կարաւի երգով:

Վառվումէ շքքնաղ, ոսկեփայլ նուռը,  
 Որի նեկտարով արձակվումէ լայն  
 Թաթար խաների դրախտի դուռը,  
 Երբ անոյշ բուրմամբ ծխվումէ կալիան:

Հոյակա՛յ աշխարհ. այստեղ վառ սալոր,  
 Այնտեղ սերգէւիլ խոնարհած երկիր;  
 Տերևի տակից ժպտումէ խնձոր,  
 Մի թուշը ոսկի, միւսը կարմիր:

Ես երգ եմ երգում, գոհ է իմ հոգին.  
 Մեղմ խոխոջումեն անհոգ առուներ:  
 Ինձ նկարումէ նոցա ապակին

Վառ այգեստանի քաջառողջ բերքեր,

Եւ ձեղքում զսուրճան, և Շամա՛ն արիւնջ,  
 Եւ ոսկի Փշտ, և Գիւճէ՛ն արիւնջ,  
 Եւ ելեքարոն մեղրը քեւէն;  
 Եւ խոշոր յակինթ քաղցր Հււրօւն:

Հեռու է մահը. ես կեանք եմ շնչում,  
 Հարժվումեն վարդեր կանաչ ոստերով,  
 Եւ հոտ են բուրում, և խունկ են ծխում,  
 Չքնաղ տեսարան ինձ ընծայելով:

Թէ Եւրոպայի բոլոր մեծագնի  
 Պատրաստած խղերն և օժանելիք,

Եւ անոյշ ջրերն այն ախորժելի,  
Թափէիք այստեղ, այս շնաշխարհիկ

Վարդերի վերայ, — ո՛վ ես չեմ սրտում,  
Որ սոցա ամբրոս, սոցա վառ ոգին  
Հետք թողելու չէր մի ակնթարթում.  
Ինքը բուրվելով կը մտնէր ձեր հոգին:

Որպէս մի աղջիկ նորարոյս կեանքով,  
Կը գրաւէր նա ձեզ անոյշ հոսանքով;  
Այն պայծառ աղջիկ, որ, շատ կաթոգին,  
Ոգեշնչումէր սիրածի կողքին:

Իզո՛ւր է, իզո՛ւր, թէ խօսքով յարմար  
Ցանկայի նկարել բիւրեղ ջրուէժներ,  
Որ, աղամանդեայ կապելով կապար,  
Սրսկումեն այստեղ դալարուն մարգեր:

Բիւր պտուղների յաջողակ խառնուած:  
Բիւր ծաղիկների բիւր գունով հիւսուած:  
Թէ արձակ հովիտ, թէ ամայի ձոր —  
Եւ ամենտեղ այդ զարդեր մեղրածոր:

Պատուական աշխարհ, ես չ'ունիմ գրիչ,  
Որով գեվեց քեզ քո մեծ նկարիչ; —

Այո՛, Փարպեցի, մեծ է քո լեզուն,  
 երբ Այրարատի տեսար մեծութիւն \*:

Ո՛վ վերին Աստուած, Գու պարգևել ես  
 Առատ ձեռներով այսքան բարութիւն,  
 Բայց ինչո՞ւ, Անհաս, Գու խնայել ես  
 Պարգևել սոցա և ազատութիւն:

Ինչո՞ւ ամէն թուփ, թէև խիստ դալար,  
 Գողումէ, կարծես, ոսոխի ձեռից.  
 Խեղճիկ, ծածկուել է նորա ոսկէ դար,  
 Խեղճի՛կ, գողումէ նա արտասուքից:

Հաղիւ թէ ծաղկած այստեղ մանկութիւն,  
 Խարշամած, տուած է Թուրքի սրին.  
 Տաք դիակներից թափումէ արիւն, —  
 Թուրքը երգումէ նոր վրէժ Հային:

Քաղաքացու կեանք, այնքան հարկաւոր  
 Մեծակշիռ գործի և զբաղմունքի,  
 Երկիւղի տակ է. նա ամենայն օր  
 Ընդդէմ՝ վտանգին պէտք է զինւորուի:

\* Հաղար Փարպեցի, սա մանրամասն նկարեց Արարատ նա-  
 հանգի արգաւանդութիւնը, որ շատ ազճատուած հասել է մեր  
 ձեռք:

Թոյլ է օրէնքը, գրեթէ վերացած;  
 Հովանաւոր չէ գոյքին բնակչի.  
 Ինքը հովիւը սպառազինած  
 Պատասպարումէ հօտը ոչխարի:

Մերկ ապառաժի վերայ նա նստած,  
 Հնչումէ թուժակ տխուր եղանակ.  
 Թէ ինչպէս կնոջ, դեռ նոր հարսնացած,  
 Տարաւ գերութիւն մի թուրք աւազակ:

Մատաղ երեխայք, ձեռքը պարզելով,  
 Ճչումեն անզօր. «մեզ հայ տուր, հայրիկ.—  
 Հայրը, աչքերը երկինք ուղղելով,  
 Գոչումէ. Աստուած, ա՛ն կեանքս դժբախտիկ:

Այնտեղ, Ողորմած, ունիս օթեան.  
 Կը հանգչի մարմինս; տաղ արտասուքով  
 Կ'երգեմ սուրբ Անուանդ, և այս տրտմութեան  
 Հովիտը կ'թողնեմ, ուր լի է փշով:

Ուր իմ հարազատք մեռնումեն սովից.—  
 (Ո՛հ, ինչ կրակ է ծնողի համար.)

Մայր մեր Մարիամ, Աղաւնի անբիծ,  
 Ա՛ն սրտիս կսկիծ և Միածնիդ տար:

Խղճալի՜ աշխարհ, անճար, չքաւոր,  
 Հեծումէ, կարօտ մի կտոր հացի;

Քրտինք ճակատին, չարչարուած, անգոր  
Տանումէ հարուած վատ բռնաւորի:

Թագաւորումէ բարբարոսութիւն,  
Եւ մեծ երկիւղ է ցերեկով շըրջել;  
Ո՛չ սրտի գութը, ո՛չ կարեկցութիւն  
Կարո՛ղ չէ կեանքըդ երաշխաւորել:

Այս Ասիան է; կրօնը Մահմետի  
Սընուցանումէ պատառող գայլեր,  
Որ խմեն արիւնը քրիստոնէի.  
(Նորա կստանան մատղաշ հուրիներ:)

Այս Ասիան է; իրաւունք մարդի  
Ոտի տակ ձգուած և վիրաւորուած.  
Նորա իշխողը — խաւարը բանտի;  
Նա մեռելո՛ւթեամբ միշտ դատապարտուած:

Այստեղ Մեծաւորն քայլումէ ազատ  
Հպատակների սրտերի վերայ;  
Թշուառ ժողովուրդ, խոնարհած ճակատ,  
Սպասաւոր է հաճոյքին նորա:

Անհաս է ձայնը մարդասիրութեան  
Կեղտի մէջ սընած հին Ասիային;  
Մուտք չունի նշոյլ լուսաւորութեան,  
Եւ եւրոպայի անանց է հոգին:

Շաշումեն զէնքեր, — ընկնումեն զոհեր,  
Մահ է ընթանում թևերը բացած;  
Վառօդն անպակաս . . . արձձէ գնդակներ  
Փայլատակումեն օդի մէջ վառուած:

Ուր է օրէնքի դատակնիքը:  
Իմացէ՛ք, այստեղ օրէնքներ չըկան;  
Եւ կաշառուած է իշխանի կուրծքը,  
Թէև մեծ պատիւ չէ այդ տէրութեան:

Բարօրութիւնը հասարակ ազգի,  
Եւ վաւերականն ապահովութեան, —  
Վերին նըպատակն այս պէտք է լինի;  
Տ-դ-ն-ի Ո-ի-ն, — Տ-ը-դ-ն-ի-ն-ի-ն:

Թէ ժողովուրդը յանձնեց մեզ իւր կեանք,  
Իւր սուրբ իրաւունք, իւր կամք ու հաւատ, —  
Ո՛հ, ի՞նչ սև գործ էր, և ի՞նչ ժանտ դրժանք,  
Թէ չըպահէինք այդ ուխտն անարատ:

Այդտեղ պիտոյ էր իսկոյն կրակուէր  
Մի սարսափելի ռէակցիօն . . .

Այդտեղ մեղաւորն պէտք է խորտակուէր,  
Որ նա ձեռնարկեց գործ մի անկանոն:

Այդտեղ ժողովուրդն է այն սուրբ Աստուած,  
Որի արարքին չըկայ մի բողոք:

Նա պահանջումէ կեանքը, պահ տրւած,  
 Եւ այդ ուրանալ չէ կարող ո՛չ ոք,  
 Ուրեմըն թրեր, ուրեմըն սրեր,  
 Թո՛ղ հանդիսանան այստեղ դատաւոր;  
 Թո՛ղ թափուին անպարտ արեան առուներ,  
 Գա անմահ գործի է աւետաւոր:

Բայց, ո՛վ Ասիա, ի՞նչ է քո համար  
 Այս աղատութեան կենդանի քարող;  
 Մեռած էք, ազգեր, և ձեզ բռնարար  
 Հարստահարումէ թշնամին գոռող:

Այս վիճակի մէջ է այժմ Հայաստան,  
 Այսպէս տեսնումէ ցանկալի աշխարհ  
 Չեղ ծանօթ Լեոն, Նա թափառական  
 Ուղղումէ այս դեհ, այն դեհ ճանապարհ:

Վաստակած է նա, քրտինք երեսին;  
 Ո՛հ, ի՞նչ ցուրտ քրտինք առանց ջերմութեան;  
 Գարձնումէ երեսն անբաղդ աշխարհին,  
 Թափումէ առատ ծով կարեկցութեան:

«Գեղեցիկ աշխարհ, դու Հայոց աշխարհ,  
 Լըցուած, ողողած, դառն արտասուքով;  
 Ո՛րքան խեղճ ես դու, և ո՛րքան թշուառ,  
 Արիւնաշաղախ տեսարաններով:

Ողջոյն եմ բերել քեզ ես Հիւսիսից,  
 Գուցէ, ո՛չ առանց դառն արտասուքի;  
 Թո՛ղ տուր, ո՛վ մայր իմ, հարազատ հողից  
 Օծանեմ մարմինս — յարութիւն առնի:

Քո մէջ ծաղկումէ լիութեան պսակ,  
 Բողորն պարգևել է քեզ բնութիւն;  
 Բայց, ո՛վ քաղցրաշունչ Հայաստան հողեակ,  
 Ինչո՞ւ հիւսիսի չունիս կրթութիւն:

Ինչո՞ւ քո որդիք, այնքան կամակոր,  
 Գրկել են խաւար, որ կորուստ ունի:  
 Ինչո՞ւ չեն զարթնում քնից դարևոր,  
 Որ կենդանութեան նշոյլը ծաղի:

Ես քանի՛ անգամ երկնքից հարցրի,  
 Քանի՛ աղօթքով դէպ երկիր դարձայ. —  
 Ասացէ՛ք դուք ինձ, ո՞ր Բռնաւորի  
 Հարժեցաւ ձեռք Անպարտիդ վերայ:

Եւ չունիս արդեօք ոչինչ զօրութիւն;  
 Հիւանդ ես, ասա, կորո՞ւստ օրհասի;  
 Եւ ո՞վ խանգարեց քո վառ մանկութիւն,  
 Լուսի՞ն Մահմետի, թէ բա՞րբը Հայի:

Եւ մի՞թէ ոչ ոք քո զաւակներից  
 Փայլատակելու չէ՞ սուսեր ձեռին,

Փոթորիկ, հրդեհ վիրաւոր կուրծքից  
 Անլախ թափելով ոսոխի գնդին:

Պատկառելի կին, մայր մեր նետահար,

Այրիութեան մէջ անպատիւ եղած;

Աչքերում արիւն, մազերն անյարգար...

Ապտակակո՛ծ է, անրոյժ խոցոտուած:

Մի վեր կաց, կանգնիր աշխարհ Հայաստան;

Մի թափ տուր ուժով, թող ճեղքուին կապանք;

Ահա քեզ արիւն իմ նուիրական,

Թող ցողն դաշտերդ փրկութեան հոսանք:

Հնչեց փոթորիկ, — օտար ալիքներ

Եկան, խեղդեցին քո կեանքի տապան;

Քանի սիրելի՛, հարազատ յոյսեր

Փլատակուեցան և անդարձ կորան:

Այստեղ Հայի կեանք... չըկայ Հայի կեանք;

Այլ կայ մի կապանք, մի անվերջ կապանք...

Ո՛չ լոյս, ո՛չ ծաղիկ մի կենդանութեան...

Ցաւեցէ՛ք մարդիկ, ցաւի՛ր Հայաստան:

Այստեղ ձգվումէ, կանաչից զրկուած,

Մեծ անապատը թանձր խաւարի,

Ուր շնն դադարում մահուան աղմուկից

Սև ագռաւները գունաթափ կեանքի:

Փակումեմ աչքերս . . . ո՛վ տխուր հանդէս . . .  
 Եւ ահա՛ ցնորք հազար մի տեսակ  
 Կիտումեն մի մի սկաների պէս ;  
 Ահա՛, նոր երկիր . . . նոր հրապարակ . . .

Տաճարք , քաղաքներ աւեր ու կործան ,  
 Ցանուցի՛ր նշխարք հոյակապութեան ,  
 Եւ Ռուբենեան ջարդուած դայիսօն . . .  
 Սոքա կազմումեն մի տրտում թատրոն :

Եւ տեսանումեմ . սևազգեստ մարդիկ  
 Մօտենումեն ինձ , վառած ջահերով ;  
 Նոցա բերանից տխուր մեղեդիք  
 Հնչումեն թաղման վերջին հրաժեշտով . . .

Այդ ողիզգեաց որդիք հնութեան ,  
 Որոնք իւրեանց կեանքն աղնիւ վաստակով  
 Զոհեցին ազգին , և տաժանական  
 Աշխատութենից մեռան անխռով :

Թէ՛ օր , թէ՛ գիշեր գործի պարապած ,  
 Դոքա հասկացան խորհուրդը կեանքի ;  
 Արպէս քաջ մըշակ , գրիչ ձեռն առած ,  
 Պատրաստեցին կեանքն հարազատ ազգի :

Սիրով սիրեցին անգին հայրենիք ,  
 Եւ Հայի անուն շատ մեծարեցին ,

Մինչև մեր թախիժ և դառն մեղեդիք  
Գերեզմանների խորքից լսեցին:

Մինն այդ Ծերերից, առաւել տխուր,  
Մի ազդու, հզօր, ազնիւ աչքերով,  
Բռնումէ ձեռիցս, և, որպէս մի սուր,  
Խոցումէ սիրտըս կծու խօսքերով:

Եւ հառաչումէ որպէս փոթորիկ, —  
Եւ մի հեծեճա՛նք այնքան ցաւագին.  
Նա պարսաւումէ անարժան օրդիք,  
Որո՛նք մեծ կորուստ տուեցին ազգին:

Նա պարսաւումէ Հոռմ՝ արեղեան,  
Որ պատառեցին հօտը Քրիստոսի;  
Որ ազմըկեցին սիրտ ժողովրդեան,  
Խաւար ածելով անընդգրկելի:

Նա պարսաւումէ և ուրիշ բաներ,  
Եւ ուրիշ մարդիկ, և շատ արատներ...  
Բայց, որ ընդհանուր չը ծագի հերձուած,  
Թո՛ղ այս իմանայ ծածկագէտ Աստուած:

Եւ ահա և այլք միաւորեցան.  
Իսահակ, Մեսրոպ, Մեծ — Ներսէս, Ղազար,  
Եւ ազատախոհ Ներսէս Լամբրոնեան;  
Կարծես, հընչեցին մեղ անմաս մի ճառ:

Մի մեծ գաղափար և մի մեծ հանճար  
 Այդ խօսքերի մէջ բացայայտեցաւ;  
 Թէև չը գիտեմ կրթկենել ևս յարմար,  
 Բայց այսպէս իմ մէջ տրպաւորուեցաւ.

«Կրղեր, մի՞ թէ ձեզ մի սե պարսաւանք  
 Հասանելու չէ սեպհականութիւն.  
 Ինչո՞ւ թըշնամուն հայրենի պարծանք  
 Ծախսեց ձեր եղևուն — զէ — քէ — քէ — քէ — քէ :

Կղեր, ի՞նչ անուն ձեր գործի համար  
 Կարող են ձեզ տալ գալոց թոռները;  
 Ո՞չ անփառունակ ամօթ դարեց դար  
 Նըշաւակելու են ձեր օրերը :

Կղերիկոսի սաղմոսերգութիւն  
 Փոխանակել է քէ — քէ — քէ — քէ — քէ :  
 Մեղքի վարագոյր, սիռած վարդերով,  
 Ծածկել է նոցա ախտոտ թւերով :

Կղեր, ո՞վ Կղեր, դուք աւեր ազգին  
 Բերումէք միայն և ո՞չ փրկութիւն;  
 Եւ ուրախ է ձեր մեղաւոր հոգին,  
 Երբ պատարագ է և մեծ բազմութիւն :

— Մի՞նչ քէ — քէ — քէ — քէ — քէ . այնտեղ փառածե  
 Կախած են պատկեր Հրաշագործների, —

— Իմաստակութիւն. Աստուծոյ առջև  
Ընդունելի չէ զոհն Խառնելի:

Խառնելիք Բերե՛ք, և անդին գանձեր  
Կը պատրաստէ ձեզ օրն աւետարեր.

— Գործ քրէական, — և երեք շանթով  
Գոռումէ երկինք, բայց դուք անվարդով:

Պղծեցէք առատ, սակայն նոյն չափով  
Մեղք Խառնելիք, և ձեզ փրկութիւն.

— Մեղսապարտ դրժանք, — և ոտով գլխով  
Կը ձգէ անդունդ ձեզ արդարութիւն:

Եւ ո՛ւր տեղից այդ Հեթանոսութիւն,  
Ո՞ր դժոխք դորանց ձեզ աւանդեցին,  
Ա՞յդ է վերհամբարձ Քրիստոնէութիւն,  
Ա՞յդ ձեզ աւանդեց Արդին Միածին:

Կղեր, ո՛ւր է ձեր անըստգիտ պաշտօն,  
Ո՞ւր ծիրանածին Քրիստոնէութեան,  
Ընչասէր մարդիկ, դուք չունիք կրօն,  
Ծէս է ձեր հաւատ — պտուղ կուրութեան:

Կրօնը ծէս չէ, և ո՛չ կոյր հաւատ,  
Նա թշնամի է ամէն կուրութեան;  
Կրօնը սէր է, հողի անարատ,  
Թէ մեք շինեինք մի նիւթ գիտութեան:

Արօնք կեանք է ամբողջ մարդկութեան,  
 Որ միշտ ձգտում է դէպ ի անվախճան;  
 Դէպ այն Կութիւն անասնամանափակ,  
 Որին կոչումենք Աստուած միայնակ:

Նա իմ հոգու մէջ պէտք է դտանէ  
 Մի անխռով կեանք և խաղաղական;  
 Այդտեղ բռնաւորն նոյնքան անզօր է,  
 Թէ փականք դնէր իմ աղատութեան:

Ո՛վ աստուածաբան, ուրեմն դարձիր  
 Պարզ երկնքի տակ ճշմարիտ կրօնի;  
 Բայ սրբափղ դուռը և նոր օդ շնչիր.  
 Քո մէջ կը ծլի մի առողջ հոգի:»

Ասացին նորա և անհետացան, —  
 Դիւթող երազից ևս սթափեցայ;  
 Յիշեցի խօսքերն այն անմահական,  
 Նոր կրօն զդացի, այլապէս ուսայ:

Քանի ծաղկած է մեր մտաւոր կեանք,  
 Նոյնչափ և սերտ է մեր սէրն դէպ Աստուած;  
 Նոյնչափ բարեպաշտ հոգու աղաչանք  
 Տալիս ենք Նորան մեր համեստացած:

Բարձրացիր հոգով դու Արօնուսոյց,  
 Քեզ շրջապատող խաւարից մոլար.

Մեծ Ջոր՝ ինչն այն շխտարարաւ  
 քննելով քննիր դու յայտնարարաւ :

Եւ այն ժամանակ դու կը ճանաչես  
 Ընդհանուր կարգը բոլոր բնութեան,  
 Եւ երբէք խղճիդ մեղանշելու չես : —  
 Այսպէս թող լինի այժմ Աստուածարան :

Վարդապետ, չկայ հակառակութիւն  
 Գիտութեան մէջը և սուրբ Արօնի .  
 Գորա են մշակն այն ամենարթուն,  
 Որ բարւոքումն ներքին կեանք մարդի :

Գոցանով միայն թագաւորութիւն  
 կարող է մնալ անխախտ յաւիտեան .  
 Ըստ որում մարդուս ընչասիրութիւն  
 չերբումէ ազատ Արօնը սրբազան :

Եւ այն ժամանակ ոչ որ չէ ասում,  
 Թէ պէտք է Խիղճըդ լսէր ծէսերին .  
 Սրտիդ մէջ մաքուր Արօն ևս ըզգում,  
 Եւ դու ևս ազնիւ Աստուծոյ որդին :

Սրտակից Սէրը, կրօնի հողին,  
 Շաղկապումէ մեզ որպէս հաշտ եղբայր;  
 Բայց այն սնտախի Հոր՝ որտե՞րտե՞ին  
 Խախտումէ այդ կապ, այդ հոգու տաճար :

Եւ այդ տեսնումենք մեր մեր օրերով —  
 Մարդիկ միմեանց գայլեր ձեացած;  
 Այլ մտածողին դարան գործելով  
 Պղծումեն դոքա սուրբ սիրոյ Աստուած:

Ճշմարիտն ասեմ, այդ պարօնները  
 Չը գիտեն պաշտել և ոչ մի Աստուած;  
 Գոքա պաշտումեն իւրեանց ախտերը,  
 Եւ չունին ոչինչ սէր հասարակաց:

Ո՞ր կրօնն է լաւ, և ո՞րքան բարի  
 Պատրաստումէ նա հասարակութեան.  
 Ա՛րդեօք ա՞յն, որ Խիղճդ առանց երկիւղի  
 Թողումէ պաշտել Աստուածն անվախճան:

Որ ազատապէս քո հոգու վիճակ  
 Բարեկարգումէ և կեանք մարդկութեան,  
 Որ ուղարկումէ իւր սուրբ արեգակ  
 Բոլոր դաւանող ազգին բանական: —

Թէ ա՞յն կրօնը, որ անհաշտ ձեռով  
 Սիռումէ հերձուած և քակտիչ սերմեր,  
 Չար նպատակի գործի դառնալով,  
 Գրգռումէ մեզ, ճ՛նչում խիղճը մեր:

Ա՞յն կրօնն արդեօք, որ թափեց այնքան  
 Արեան առուներ և խեղդեց մարդիկ.

Յղացաւ իւր մէջ սաղմն ատկու թեան,  
 Որ մեզ գիշատիչ առնէ թշնամիք:

Սուրբ եկեղեցու Սեղան սրբու թեան,  
 Կարծես, փոխուել է բեմ թատրոնական;  
 Այդտեղ աչքըդ է միայն շրջ շրջում,  
 Բայց, քրիստոնեայ, սիրտդ ի՞նչ է զգում:

Տեսէք, բազմեցաւ Քարողիչն ահա,  
 Արդեօք, կամի՞նա մեզ ուսուցանել  
 Որպէս Քրիստոս սեղանի վերայ,  
 Եւ մեր սրտերը հեղու թեամբ լցնել:

Արդեօք, ճառի մէջ պիտո՞յ է փայլէ  
 Ամենագրկող սիրոյ մեծութիւն,  
 Եւ կեանքի կուռքը չը պիտի պաշտէ,  
 Որ հանդիսանար Քրիստոնէութիւն:

Սակայն, ի՞նչ է միտքդ, ո՞վ դու Հռետոր,  
 Ի՞նչ պիտի տայ մեզ քո երկար քարոզ, —  
 Այդ յայտնի է քեզ, ո՞վ Աստուած հղօր,  
 Այդ սնտախախտ և գործ է գոռո՞ղ:

Թէ Հայերի մէջ Արօնը ծաղկած էր,  
 Մէք տասնիններորդ լուսաւոր դարին  
 Տեսնելու Հէինք վատ Միասիօններ,  
 Որ Հայի խիղճը բռնաբարէին:

Թէ Հայերի մէջ Արօնը ծաղկած էր  
 Որպէս գիտութեան այգի պտղաբեր, —  
 Գործ պիտի գործէր Հայոց արեղեան,  
 Եւ ոչ սերմանէր որում չարութեան:

Չէ՛, մեզ պիտոյ են ուսումնարաններ,  
 Այլ հնար չըկայ սորա փրկութեան;  
 Ազգային դպրոցք և պանսիօններ  
 Ար ծածկեն այդ ցեխ, այդ հողու զնգան:

Ուրիշ լըրժ-դիտ, ուրիշ հոտ-ու,  
 Գործի-բ-ի՛ և հան-ի՛ սերընդի,  
 Առի՛ի դիտ-յու՛ր հօր դե- հ-ի-ց-ու —  
 Յառաջ քան դպրոցն այդ պէտք է լինի:

Ուսում և ուսում մեզ հարկաւոր է,  
 Ուսումը լինի թող մեր թագաւոր;  
 Ուսումը Հային թող բուսուցանէ  
 Մի բարի վիճակ և կեանք փառաւոր:

Ա՛ր-ի-հ- հողւոր կեանքի,  
 Մի մեծ ասպարէզ, մի վերին Սիօն,  
 Որ արձակ բացուէր դռներն երկնքի,  
 Քրիստոնէութեան փայլէր հորիզոն:

Ահազեմիա Մայր — Էջմիածնում,  
 Նախագահ Վանքի գաւթին ու գրան,

Ուր ե՞ն է գալի այս ներկայ օրում  
Ընչասէր արիւն, ախտեր անարժան:

Քանի դար անցաւ, և մինչև այսօր  
Չունինք մեք դպրոց — այդ բանն առաջին;  
Գումար կազմեցաւ շատ նշանաւոր,  
Նորան սուրբ Հայրերն անպատու արեցին:

Խեղճ ժողովուրդը իւր յետին լուման  
Բերեց Աստուծոյ, գանձանակ ձգեց;  
Հոգեւոր ուսում չը տուեցին նորան,  
Նա չըմտածեց և չը բողոքեց:

Հասաւ ժամանակ — մեք բողոքումենք.  
Մեք ազգի անդամ և երեսփոխան;  
Ակադեմիա մեք պահանջումենք,  
Պահանջումէ ազգ, թէև կիսաձայն . . .

Եւ այդ կարելի, և ո՛չ երազ այդ,  
Միայն պիտոյ էր խնամք և վաստակ,  
Աղեր, ո՞ւմ ես դու լարում որոգայթ.  
Աղեր, քո տունը կործան, փլանակ:

Ո՛վ անբաղդ Աւոն, այսքան շրջեցի;  
Ի՞նչ օգուտ կամ դործ յառաջ բերեցի,  
Ո՛վ Հայ, քո ցաւով արդէն մաշեցայ,  
Ոչինչ փրկութիւն ցաւիդ չը տեսայ:

Բայց իրաւի է, ոչինչ անապա տ  
 Չէ կարող բերել պտուղ անարատ,  
 Յառաջ պիտոյ է նորան բարւոքել,  
 Եւ ապա առատ հունձի սպասել:

Որքան ցանել ես, նոյնքան կը հնձես.—  
 Այս մի օրէնք է համաշխարհական;  
 Չոր է, ցամաք է Հայի ասպարէզ,  
 Եւ դեռ չէ ծաղկել Ծռռ զիւրիւն:

Ուսման սէրն է, որ մեզ մշակումէ  
 Մտաւոր դաշտը, հոգու անդաստան;  
 Եւ առանց ուսման մեր կեանքը նոյն է,  
 Թէ անշարժու թեամբ կապուած գերեզման:

Ուրեմբն ուս՛ր, ուրեմն մտածիր;  
 Քննի՛ր խնդիրըդ խօրին հայեացքով;  
 Իրիւն իւրեւ իմաստասիրիր;  
 Ասածդ հաստատիր հազար փորձերով:

Մեծ օգուտ ունիս և մեծ հետեանք,  
 Եթէ ասածիդ զ՛րէ՛ւ յառաջէ.  
 Գ՛րէ՛ աչտու հետեւ, զ՛րէ՛ և ոչ իւրեւն,  
 Ասածըդ գործը թո՛ղ վարձատրէ:

Ես շատ խօսեցի, բայց քիչ գործեցի,  
 Գուցէ խօսքերըս ունայն գնացին:

Աստուած տայ, որ սիրտս նոր յուսով լցուի .

Այդ օրից կեանքըս կըտամ ես գործին :

Առատ է հունձը լուսաւորութեան ,

Բայց մէք մշակներ շունիք հնձելու ;

Կրթութեան գանձով լի է Եւրոպան —

Գանձըդ մեզ պէտք է առնել ձեռնառու :

Ա՛ղգ իմ , ո՛ղջ մնաս , — և ես կ'աղօթեմ ,

Որ քո բաղուկներ քեզ յարուցանեն ;

Ես Է՛մ Է՛րի—Բե՛մ Զ—Է՛լե և Է՛նեմ ,

Երբ Հայերն ազատ . . . մի օր ազատ են :

Եւ ահա՛ Լեոն , իմ ընթերցողներ ,

Վերջ դրեց արդէն ծանր արկածքին .

Նորա սիրտն լցուեց դառն մտած մտնեքներ ,

Որ նա չկարաց թաւալել Զ—Է՛ն :

Բայց ձգած է սերմ . թո՛ղ ծլեն , ծաղկեն

Այդ գաղափարքը հոգեկապ գործի ;

Թո՛ղ Հային մի նոր կեանք առաջարկեն ;

Այդ կեանքի հունձը թո՛ղ առատ լինի :

Նա ձեզ թողնումէ երկար միջոցով ;

Այո՛ , շատ երկար . . . բայց ո՛չ յաւիտեան ;

Մեկնեցէք ձեր ձեռն Լեռնին սիրով ,  
Յանկացէք նորան օրեր հանգստեան :

Թէև խանգարեց նա ձեր հանգիստը ,  
Բայց այդ խանգարումն չէր թշնամահան .  
Նա ցոյց տուեց ձեզ իւր սրտի վիշտը ,  
կամեցաւ Հայիդ լոյս պայծառութեան :

Նա չը գովեց ձեզ և այդ կարող չէր .  
Լուս աչք լուս է , ասումէր Լեռն ;  
Ցտտեցէ՛ք Իսրայէլ , որ լոյս ձեզ թագեր ,  
Այսպէս թող լինի ձեր Իսրայէլի օրեր :

Երբէք չը զգացի այնքան տրտմութիւն ,  
Երբ Լեռնի հետ ևս բաժանուեցայ . . .  
Ա՛հ , մի կապարեայ , ճնշող ծանրութիւն  
Եկաւ և նստեց իմ կուրծքի վերայ :

Ես Լեռնի հետ ճանապարհ գնալով ,  
Իմացայ , որ կեանքն չէ մի զբօսանք .  
Այլ պատերազմ է լի փորձութիւնով ,  
Ուր Նահապետի բաժինն է զըկանք :

Ես սովորեցայ ուղիղ գործել ,  
Յայտնապէս ազգիս արատքը գրել ;  
Եւ գովասանքից սաստիկ վախելով ,  
Ուսայ առաջին փշրել հարուածով :

Ես արհամարհել գեղեցիկ ուսայ  
 Նոցա, որ գիտեն երկզիմի լինել;  
 Խիղճը դնելով արծաթի վերայ,  
 Լկտի — — — — — անուանել:

Ո՛չ տխուր ցնորքը պատուասիրութեան  
 Շարժառիթ էր ինձ այս գործ ձեռնարկել;  
 Ո՛չ անմիտ խօսքերն ինքնագովութեան,  
 Ինչպէս սովոր են յիմարք կակաղել;

Կամ ձգտողութիւն մի նախատելի,  
 Որին հաւան է սևերես հոգին;  
 Ո՛չ, ո՛չ, չեմ սրտում — կախաղան չարին.  
 Սիրելիք, ախտ չէր այս փառամտի:

Այլ ազգիս վիճակ, տխուր բաղձն շայի,  
 (Եւ այստեղ խիղճըս ունիմ ինձ վկայ.)  
 Գրգռեց գործս այս — և ողջունեցի: —  
 Ներիր, ընթերցող, ես ափին հասայ:

Ափի վերայ եմ, Մանուկ նորածին,  
 Բարի՛ ճանապարհ, ժամ է թօթուկել;  
 Կեցցէ՛ Ազգասէրն: Ողջոյն Ոսոխին.  
 Մեզ խաղաղ հոգով հարկ է հրաժարուել:

ՋԱՆԱԶԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ



ՉԱՆՆԱԳՆԱԳՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲՏԱԼՈՐՔԻՔ ԵՎ ԲՏԱԼԱՅԻՔ.

(Յիշողութիւն դէպ ի անցածը)

I.

**Ի**նչո՞ւ, ինչո՞ւ խտալացիք  
Ձէ թնդում քաղցր երգեհոն;  
Ինչո՞ւ քնքուշ խտալուհիք,  
Թողել էք ձեր պիանոն,  
Մտացել են դոքա ասես  
Փափուկ սեռը կանացի.  
Սրտում վրէժ, կտրիճի պէս  
Գիմումեն վրա՛նը սսոխի:

Որպէս տան մէջ, նոյնպէս կուլում  
 կանգնած են հեղ և հպարտ,  
 Գնդակներին կուրծք են ուղղում,  
 Եւ շրթունքից շէ գնում վարդ:

## II.

Զարմանումէք, ինչ ասումեմ.  
 Թէ դուք նոյա տեսնէիք  
 Խաղաղ օրով, երբ քաղցրադէմ  
 Բռնած կիթառն գեղեցիկ,  
 Փափուկ մատներն արծաթելար  
 Նուագարանին դիպչելով,  
 Պարտէզի մէջ ծաղկադալար, —  
 Դուք կ'լսէիք անխառով  
 Սիրոյ ձայնը, սիրոյ հոգին,  
 Հիւսած սրտի թելերից.  
 Սիրելի գիտէ Իտալուհին,  
 Զրկուած բոլոր աշխարհից:

## III.

Հուրջ ճակատով շուշանագեղ  
 Ծանանվումեն թուխ մազեր;  
 Սև սաթի պէս յօնքեր շքեղ,  
 Վառ աստղի ջուխտ աչեր:  
 Դուք լսեցէք, երբ զրուցումեն.  
 Ամբողջ դրախտ փափկու թեան

Չեր սրտերը կախարդումեն  
 Որպէս տաւիղն Եօլեան :  
 Եւ սասիսի գոռող հողին  
 Մի՛թէ չ'պէտք է նուաճի ,  
 Եւ յաղթութեան արմաւենին  
 Գոցա առջև տարածուի :

## IV.

Իտալուհիք , և ձեզ նման  
 Արևելքում մի անդամ ,  
 Չեր քոյրերը զինուորեցան  
 Թշնամու դէմ անդդամ ;  
 Արեան գնով Հայաստանին  
 Գնեցին նոքա փրկութիւն ,  
 Եւ թաղեցին հողի ծոցին  
 Անմեղ ծաղկած կուսութիւն :  
 Մեռան նոքա . բայց կ'մեռնի՞  
 Նոցա գործի յաղթանակ ;  
 Դուք դէպ ի դաշտ . մէք կենդանի  
 Ունինք նոցա յիշատակ :

## V.

Իտալիա , աշխարհ փառքի ,  
 Դու , քո կուրծքը զրահով  
 Ամրապնդած , յաղթանակի  
 Կամիս պսակուել դափնիքով :

Մի՞թէ իսպառ պէտք է ճ'նշվի  
 Այդ ազգային զօրութիւն,  
 Եւ առուի պէս արիւնդ թափվի,  
 Հերոսներիդ սուրբ արիւն:  
 Մի՞թէ ձեռներն, մի՞թէ սրեր  
 Քո ռիսերիմ թշնամու  
 Պէտք է բերեն քեզ նոր աւեր,  
 Եւ ստրկանաս դարձեալ դու:

## VI.

Ինձ ասացէք. ո՞վ ձեզանից,  
 Որի մէջ մարդու սիրտ կայ,  
 Չ'խեղդուելով արտասուքից,  
 Կարող է մնալ անզգայ,  
 Տեսանելով այս ողբալի  
 Սրածութեան աւերած,  
 Եւ սրբութիւնն Կտալիայի  
 Նշաւակով անարգած:  
 Անիծումեմ չար ժամանակ,  
 Երբ Բուրբօնը գիշատիչ,  
 Տնկեց այստեղ իւր դրօշակ  
 Եւ խարերայ և մատնիչ:

## VII.

Մի կամք, մի շունչ ձեզ օգնական;  
 Առէք սուտեր — և յառաջ:

Գուք սիրտ ունիք ասպետական,  
 Յարձակուեցէք ձախ ու աջ :  
 Ազնիւ գործին ինքը Աստուած  
 Ուղարկումէ իւր վաճան,  
 Իտալիա՛, փառք անմոռաց .  
 Ա՛թնգայ ձայնը փրկութեան :  
 Նորից, նորից անուշահոտ  
 Ա՛րձակուի քո մրտենին ;  
 Նոր արշալոյս, նոր առաւօտ,  
 Եւ աւետեաց ձիթենին :

## VIII.

Եւ անցածիդ գեղեցկութիւն  
 Իւր դադաղից կ'զարթնի,  
 Միայն աւեր և պղծութիւն  
 Աւստրիան կրնգունի :  
 Իտալիա՛, դու զօրաւոր, —  
 Եւ կեցցեն քո զաւակներ ;  
 Իտալիա՛, ես հողևոր  
 Քերումեմ՝ քեզ իմ տաղեր .  
 Եւ Հայի մէջ կայ կենդանի  
 Ազատութեան արձագանգ ;  
 Եւ թող չասեն, որ Հայն չունի  
 Ո՛չ ազատ կամք և ո՛չ կեանք :

## ՄԲՋԻՆ ՏԵԳՐԱՆՆԵՐ

### I.

Տիգրան, փառահեղ Հայոց թագաւոր  
Եւ աշխարհակալ անթիւ աղգերի,  
Ո՛ր է կալուածքը քո հանդիսաւոր,  
Ո՛ր է պետութիւն քո հրաշալի,  
Ո՛ր Տիգրանակերտ, մեղ պատասխանիր, —  
Այդ ճոխ քաղաքը, առլցած գանձով,  
Որ յախշտակեց բաղուկդ յաղթակիր  
Եւ մի հազուագիւտ զարդարեց հրաշքով;  
Ո՛ր գնաց, ասա՛, քո կարողութիւն:  
Գու վնր կաց, կանգնիր, —ի՞նչ ենք տեսանում—  
Այստեղ փլատակ, այնտեղ պղծութիւն,  
Միայն բուերի ձայն ենք մեր լսում:

### II.

Ո՛ր արենարբու կարող քո սուսեր,  
Որով ճնշուեցաւ փոքրը Ասիան,  
Մեք շենք գտանում անգամ ինչ ստուեր,  
Բայց թէ սուերակ, տըւած կորստեան:

Եւ դո՛ւք, փառասէր որդիք Հռոմայ,  
 Գո՛ւք, ո՛վ Լուկուլլոս, Առաս, Պոմպէոս,  
 Ո՞ւր ձեր քաջութեան պսակը դափնեայ,  
 Որով պճ՛նումէր Հռոմը գոռոզ:  
 Գուք խրոխտալով թափեցիք արիւն,  
 Ծածկեցիք դաշտերն փշրած զէնքերով,  
 Որ այսօր մի ծանր և մի յաւերժ քուն  
 Ամիտիէ ձեր փառք, գազաղի փոշով:

## III.

Ահա ձեր զէնքի մեծ հանդիսարան,  
 Ուր ժողովելով վառ լէզոններ,  
 Կամէիք նուաճել զօրաւոր Տիգրան  
 Եւ նորա վերայ տարածել ստուեր:  
 Այստեղ Միհրդատ խորտակուած թոյնով,  
 Այնտեղ Բարդասիրան յաղթութեան փողով;  
 Այստեղ դուք իշխան և հրամայող. —  
 Բայց այժմ տեսէք . . . բլուրներ բարձրացած,  
 Շիրիմներ ճնշուած . . . այստեղ և յաղթող,  
 Եւ տէր, և ծառայ մի հողով ծածկուած;  
 Եւ Հայն և Պարթև՝ և Հռոմայեցին  
 Նո՞յն անարգ կորուստը ընդունեցին:

1864 թուին.

2 Յունիսի

Մ Է Է Բ Գ Ե Ս

I.

**Ա**հա գեղեցիկ մի թերակղզի  
Լի հարաւային տեսարաններով :  
Աչքիդ առաջև կապոյտ դաշտ ծովի, —  
Գաշտը ծածկուած է անթիւ նաւերով . . .  
Եւ ես տրտում եմ; բայց իմ տրտմութիւն  
Անհետանումէ չ'զխտեմ ինչո՞ւ.  
Ճակատս պարզեցաւ, և ուրախութիւն  
Տեսէք, գալիս է, կարծեմ, այցելու :  
Ծանօթ է այդտեղն մեզ պատմութենից .  
Ալեոր դարերն չեն համարձակվել  
Ջնջել յիշատակն երկրի երեսից  
Եւ աւերակի ոտի տակ դնել :

II.

Այստեղ Պոնտացին — փառաւոր հերոս,  
Նենգութեան նիւթը կարող չուովի;  
Մեծ հակառակօրդ, որով Աեսարոս  
Չկարողացաւ ստանալ դափնի;

Այստեղ Միհրդատ, նորա Աէգէոն,  
 Պատերազմի փառք և բաղդի հանձար,  
 Այստեղ մթնել է դոցա հորիզոն;  
 Եւ ահա սափորն և հետք շիրիմի:  
 Նայեցէք այստեղ, զարթնել կարող չեն;  
 Եւ հող են նորա, երկրպագեցէք,  
 Եւ թող ձեր սրտերն փոքրիկ հառաչեն, —  
 Հերոսի նշխարք, մարդիկ, պատուեցէք:

## III.

Անկաւ Միհրդատ, անկաւ և Պոնտոս,  
 Եւ ո՛ր է հետքը նախկին մեծութեան;  
 Ո՛ր է քո պարծանք, ո՛վ աշխարհ գոռող,  
 Երբեմն կեանքի դու բնակարան:  
 Ո՞ր փիլիսոփոս, կամ ո՞ր իմաստուն  
 Կարող են ժամ մի կենդանացնել;  
 Այս դամբանական խորին լռութիւն  
 Յարութեան կեանքի թնդիւնով լցնել, —  
 Անմիտ ցանկութիւն, և տխուր հոգով  
 Իմաստասիրել մնաց մեզ միայն,  
 Թէ և մե՛ք, և մե՛ք այս օրինակով  
 Պիտոյ է զրկենք հոգն ոչնչութեան:

ԲՈՒՆԱՐՈՐ ՍՈՐԷՐԱՆՆԵՐ

I.

**Ա**հա արևի արիւնտո զնդակ,  
Ոսկեզօծելով կողմն արևմուտքի,  
Ծածկվումէ խապառ: Երկնի կապուտակ  
Լցվումէ աստղով անշափ հրաշալի,  
Սպիտակափառ է երկնակամար,  
Երկրի վերայ զմթխտեսայ ամառ:  
Աստղը աստղի հետ խաղ է յօրինում,  
Ծաղիկը ծաղկին հանգիստ է ասում;  
Ո՞ր թշուառական, ո՞ր մահկանացուն  
Կարող է խախտել այդ անդորրու թիւն, —  
Պոչէտի հողին, որ վերաւորուած  
Ճեղքումէ շղթան, բունի կաշկանդած:

II.

Եւ այժմ պոչէտն այլ երազում չէ,  
Որ Եւրոպէ եւ Ամերիկէ,  
Եւ նորա հողին պիտոյ է լռէ,  
Ուր բան էր վատթար խեղճութեան աղբի:

Եւ թէ ծնել էր, որ լինի թարգման  
 Բարձր Բարձր-Բարձր և Բարձր-Բարձր,  
 Եւ, ողևորուած, քնարի հետ խօսէր  
 Երբ նա երգումէր միայն քնարի և եր, —  
 Ո՛չ, նա փոխել է այդ ծուռ գաղափար.  
 Նա բաժանորդ է ազգի ցաւի հետ;  
 Եւ ահա այս խօսքս թնդումէ քնար.  
 Նա՛նք Բարձր-Բարձր, և Բարձր Բարձր:

## III.

Ո՛հ, ստրկու թիւն և բանտ և դազաղ, —  
 Նոյն անարգ կորուստ, այլ միջոց չկայ;  
 Եւ թէ Բոնաւորն աներկիւղ, անլախ  
 Չգումէ իւր լուծ բոլորի վերայ,  
 Երբե թէ կամէր բարերախտու թիւն  
 Գորանով շնորհել իւր ժողովրդեան, —  
 Այդ փորձիչ — օձն է, այդ սոփեստու թիւն.  
 Մեք ճորտ ենք նորա, նա կամքիս իշխան:  
 Երանի՛ նորան, որ սուրբ ձեռին,  
 Ազատ գտել է և մահ և անուն.  
 Անմահ օրինակ եղաւ իւր թոռին;  
 Նա լաւ ըմբռնեց Չարի նենգու թիւն:

## IV.

Բայց երբ ազգերը ուսում կստանան,  
 Երբ այդ Բարձր-Բարձր կ'սկսէ մտածել, —

Այն ժամանակը կարող է միայն  
 Ազատութիւնը իւր զանձը հանել;  
 Այն ժամանակը միայն մարդկութիւն  
 կարող է Կոմունիստական  
 Եւ հասարակի բարեբախտութիւն  
 Անխախտ հիմքերով արարչագործել:  
 Ինքնակալութիւն Բանաւորների\*,  
 Որպէս թէ մի ծուխ ցնդելու է վեր.  
 Ինքնակալ է ազգ, ինքնակալ բարի;  
 Ինքնակալ նորա հոգու օրէնքներ:

## V.

Լուռ սենեկիս մէջ, ես կէս գեշերին  
 Նստած միայնակ, սովոր եմ քննել  
 Այսպիսի հարցեր, բայց միշտ վշտագին,  
 Եւք չ'զանելով, տխուր եմ մնացել.  
 Այս մտածմունքով իմ նուիրական,  
 Եւ այս հոգևոր ցաւի կսկիծով,  
 Կարծեմ, կ'իջանեմ յաւերժ գերեզման,  
 Մի բարի վիճակ մարդին ցանկալով.

\* Այն, այսպէս ձևով խօսքը անհոգի և անասունաձև Բանաւորների  
 մասին է: Թէ քանի տարեւ ին այդ բանակալութեան լուծը մեր  
 Տաճկաստանի հայ եղբայրակիցքը — գիտե՞ս ամէն օր:

Ես հաւատումեմ, ես հաստատումեմ,  
 Որ սեպհական էր այդ վիճակ մարդին,  
 Եւ գալու է ժամ, երբ ուրախագէմ  
 Նախանձելու թէ՛ այլ նա դրախտին:

1864 թուին.

Յուլիսի 11.

Բողոքող սկզբի դումը:

## ՄԱՍԻՍ.

### I.

**Մ**ասիս, քեզ միայն աղօտ երազով  
 Կարող էի ես երևակայել,  
 Եւ արուեստաւոր, սերտած տողերով  
 Քո գեղեցկութեան մեծութիւնն երգել:  
 Հեռու ցնորներ. ես ականատես  
 Նշմարումեմ լեռան, կանաչ ասպարէզ  
 Որպէս մի կապերտ ձգլումէ այստեղ,  
 Եւ Հայաստանի ես արիւնահեղ  
 Յիշումեմ վիճակ: Որքան ոսոխներ  
 Փորձել են այստեղ իւրեանց զօրութիւն.  
 Եւ Փակեղ, և Խաչ, և ասորւշաններ  
 Կարմիր առուակով ներկել է արիւն:

## II.

Այստեղ երկրորդ Հայրն մարդկեղէն ցեղի  
 Տնկեց բաղմաճիւղ ուռը խաղողի,  
 Որի տերևով խկոյն ծածկուեցաւ  
 Նոյն բոպէին, երբ որ թմրեցաւ:  
 Չեղ լաւ յայանի է, որ ես մի հերձուած  
 Սորանով կրօնիդ պատճառելու չեմ.  
 Աստուածաշունչի խօսքերն եմ կրկնում,  
 Եւ աւանդութիւն, դարերից եկած;  
 Թէև ատելի բան չեմ համարում,  
 Եւ մեծ յանցանք չէր այդ Նոյին, կարծեմ,  
 Թէպէտ և, — որդին Հօրն հետեւելով, —  
 Աշխարհքս լցուեց դոյն խկ արուեստով:

## III.

Թո՛ղ Քաջք, ո՛վ Մասիա, չ' թւապարեն  
 Որպէս այցելու քո քարայրներին;  
 Թո՛ղ մուզաները բնակիչ չ' լինեն  
 Անմարդարնակ քո մութ խորշերին;  
 Թո՛ղ այսուհետև, թողած բոլորից,  
 Մերկանդամ մնաս քո նախնի փառքից,  
 Ծունըր խոնարհած, ես ինձ բաղդաւոր  
 Այժմ կարծելով քան մի այլ երգիչ, —  
 Քեզ հարկ եմ տալի. դու մինչև այսօր  
 Սովոր ես ազգել հոգիդ թովիչ;

Եւ թաթովումնմ որպէս երեխայ ,  
Քեզ, Ազատ Մասիս, վերջապէս տեսայ :

## IV.

Տեսայ ահաւոր քո ստորոտներ ,  
Ամպի մէջ կորած քո ցոլուն կատար ,  
Եւ առողջացան քնարիս լարեր ,  
Եւ քեզ երգ հիւսեց խօսքերով յարմար :  
Որքան երկիւղած զգացումներով ,  
Աղօթք շրթունքին, դողդոջ ոտներով  
Մօտեցել է քեզ Հայ ազգի որդին  
Որպէս այցելու խեղճ Արտաւազդին :  
Արծեցէք, շներ, ժանգոտ շղթաներ .  
Թող լոյս տեսանէ անէնի՞ւմ ժամանկ\* .  
Այժմ Հայաստան չունի դարբիններ ,  
Որ զօրանային սոսկալի կապանք :

\* Մեր Պատմութեան մէջ կարգումներ հետագայ աւանդու-  
թիւնը. — Երբ Արտաւազդ II, ընդունելով թագաւորութեան  
կառավարութիւնը, սկսեց դանդառուել իւր հօր, Արտաշէս երկ-  
րորդի դէմ, ասելով, «Ես ինչպէս թագաւորեմ աւերակներին»  
(որովհետեւ Արտաշէսի մահին շատերը ևս մեռցրին իւրեանց ըստ  
սովորութեան), — այս պատճառով հանդուցեալ Արտաշէս անի-  
ծեց Արտաւազդը և ասաց. «Որս գնալու ժամանակ թող քեզ  
բանեն Քաջերը, (չար Ոգի, Գև) տանեն Մասիս սարի վերայ, այն-  
տեղ մասս միշտ և երբէք լոյս չ'տեսանեալ: Հայ պառւանները զըր-  
ուցումէին, թէ Արտաւազդ մի այրի մէջ կապուած է շղթաներով,  
և երկու շուն հանապազ կրծումն այդ շղթաները, որ նա ազատուի  
և վերջ տայ աշխարհին, բայց դարբինների երկաթ ծեծելու ձայ-  
նից դարձեալ զօրանումէին շղթայքը:

## ՃԵՄԱՐԻՑ ԳՐՕՒՄ

Мышление есть любовь.

*Спиноза*

Только свободное наслаждение созерцания и жизни, стремящаяся въ безконечное и къ безконечному направленное даетъ сердцу безграничную свободу; только религія спасаетъ его отъ тяготящихся оковъ мнѣнія и желаній.

*Шлейермахеръ*

*(Истор. Филос. Куно-Фишера.)*

### I.

Մտածումներ ես — և կարծիքս մտլար  
 Անհետանումներ; ես կամիմ գրկել  
 Այն մեծ Օրէնք, այն վեհ Նառափար,  
 Որ գիտէ տիեզերք գաշնաւոր կշռել:  
 Պարզ մտածութիւնք ինձ յայտ հանդիման  
 Յաւերժ օրէնքը յառաջ են բերում;  
 Իմ գոռող Եւելիւր ինքնահաւան  
 Եւ մնայլ ախտով է փլատակում;  
 Մեծ ուրախութիւն, և այն անվրդով,  
 Իմ ձգտողութեամբ ես գտանումեմ,  
 Եւ Աստուծոյ հետ մտածող հոգով  
 Եւ հաղորդվումեմ և միանումեմ:

II.

Եւ ներդգալով Մշտնջենաւորն,  
 Անմահանումէ Կրօնը հոգուս;  
 Եւ ծաւալումէ, այնքան փառաւոր,  
 Նորա չորս կողմին աստուածեղէն լոյս:  
 Եւ բաղխումէ սիրտս առաւել սիրով  
 Գէպ ի գոյական արարածները.  
 Ընչասէր կրքից նա աղատուելով,  
 Օրհնարանումէ Զօրաւոր Հայրը:  
 Բացվումէ այդտեղ —ն-ի-դ —բ-ի-բ-ն,  
 Ուր թագաւոր է խաղաղական Սէր;  
 Ուր անմահ Օրէնք համաշխարհական  
 Բուրումէ հոգուս հ-ը-դ —բ-ի-ն —է-ր-դ-ի-ր:

III.

Ես բարձրանումեմ . . . և ինձ փայլումէ  
 Սուրբ Ն-ի-դ-դ-ն —ն-ի-հ-ի-դ-ն —բ-ի-ն.  
 Ինձ Յ-ի-ր-ի-դ Կ-ր-ի-ց առ աջնորդումէ \*  
 Գէպ ի տաճարը Ի-ն-ի-դ-ն —բ-ի-ն:  
 Ես սկսումեմ նոր նարից ապրել,  
 Եւ դադարումեմ մտքով վշտանալ,  
 Եւ այդ վայրկենից ի-ն-ի-դ-ն —բ-ի-ն,  
 Այն է ճ-ն-ն-ի-ն Որ է՛ն — հ-ն-ն-ի-ն:

\* Յ-ի-ր-ի-դ Կ-ր-ի-ց ասելով, հասկանումենք նոյն խոյ Աստուած, որ ճարտարապետական պարճ-ա-ն-ի-ն-ի-ն-ի-ն արարչագործելով արեղ-բ-ի-ն, Ի-ն-ի-ց որպէս Կ-ր-ի-ց և Օրէնք աւտօրինումէ նոցա:

Ճանաչել Որ էն—է այն վերին Սէր,  
 Որ շաղկապումէ ընդհանուր տիեզերք,  
 Եւ պատրաստումէ մարդկեղէն սրտեր,  
 Քաղցր սաղմոսով հնչել նորան երգ:

## IV.

Զգումեմ Արօն ես ճշմարտապէս,  
 Եւ գիտակցութեամբ սերտումեմ նորան;  
 Եւ ինձ շնն ճնշում մի հաւատի ծէս,  
 Եւ ոչ կուսակիցք մի դաւանութեան,  
 Սուրբ է Արօնըս, և նա ոչ որի  
 Չէ բերում մնաս կամ նախանձ կամ ոխ,  
 Նա ծնանումէ մի մարութր ոգի,  
 Եւ խաղաղութեան է նա աւետող,  
 Նախանձ են նորա և չար ռխակալ,  
 Որոնց իշխումէ մի հրեշտակ;  
 Որոնք խախտեցին սրտեր անարատ,  
 Եւ մարդիկ դարձան դահիճ կատարեալ:

1864 թուին.

Յուլիսի 1.

Բողոքողսկ:

## ՀՈՎԻՏ ՏԲՏՄՈՐԲԵԱՆՆԵՐ

О роина моя! я вижу стѣны, вижу  
Колонны, арки, башни и дворцы,  
Что были нашихъ предковъ достояніемъ,—  
Но славы ихъ, но лавровъ ихъ не вижу,  
Но горе, горе изранена она!

(Стихотв. иностранныхъ поэтовъ.)

### I.

Տօվիտ տրտմութեան, անհոյր հայրենիք,  
Հին աշխարհների արգոյ ալևոր,  
Կապանքների մէջ — վայ քո վիճակիդ —  
Խեղդուել է կեանքըդ քնով դարձոր:  
Միժէ, ինձ ասա, նորա համար էր  
Քո արիւնասեղ նահատակութիւն,  
Քո Ընտրեալների զոհած դիակներ,  
Որ գոռոզանայ այժմ՝ բռնութիւն;  
Նորա համար էր, որ Աւարայրը  
Ընդունեց իւր ծոց քաջ քաջ վկաներ,  
Որ ճնշէ Հային գերութեան բեր,  
Որ դժոխք փոխուին նորա պարզ օրեր:

## II.

Այսպէս տրտմու թեանս միակ առարկայ ,  
 Աշխարհ Աարդանայ , աշխարհ Սահակայ ,  
 Բարբարոսների անյագ ձեռներից  
 Զրկուեցար վերջին ազատութենից ,  
 Անմեղ գաններից դադարեց արիւն ,  
 Որով ներկուեցան դաշտերն ամայի ,  
 Եւ անհետացաւ նետերի շաշիւն ,  
 Որպէս և յոժը բռնաւորների :  
 Մի դամբանական խորին լուսթիւն  
 Սփռել է վերագ մահի վարագոյր ;  
 Միայն երբեմնն ազուս սևաթոյր ,  
 Հերձելով անբնակ քո տարածութիւն ,  
 Խնդրումէ իւրեան այդտեղ կերակուր ,

## III

Այսպէս ոսկրներ , ազգութեամբ կնքած ,  
 Գարևոր փոշու թումբերով ծածկած ;  
 Մարտիրոսներից պայծառ մահարձան ,  
 Եւ հերոսներից պանծալի դամբան ,  
 Եւ վերջին շունչը հարազատ կեանքի , —  
 Բողոքը կորաւ առանց մի հետքի ;  
 Կորաւ արդարեւ Այսպէս Հայաստան  
 Աւճառեցին քեզ որդիք շարութեան ;  
 Որպէս անպատիւ մի կալանաւոր  
 Խաղալիկ դարձար ազգերի ձեռին ;

Որպէս խաւար բանտ սեւացաւ քո օր, —  
Աճօ՛թ առնողին, աճօ՛թ տուողին . . .

## IV.

Այժմ՝ կարող ես, որպէս դագաղում,  
Հանգիստ որոնել անընդմիջելի .  
Քո նաւը ջարդովեց — և ալիք ծովի  
Խեղոյն լռեցան. այլ չեն կատաղում :  
Ահա նենգաւոր Նախանձի ոգին,  
Մի դժոխային ծիծաղ երեսին,  
Նայումէ վերագ, — և փլատակներ  
Տխուր պատկերով յառաջ են գալի. —  
Հրով ու սրով ածել է աւեր,  
Եւ ոչինչ չ'կայ, որ նորից շար էլի ;  
Եւ Հայի կեանքի մեծամեծ շինուած  
Որպէս անապատ անշքեղացած :

## V.

Ս'ւարիւն հետքով ամենայն մի քար  
Նշանակուած է; տատասկով, փշով  
Ծածկած պալատներ, ապարանք, տաճար . . .  
Անգամ շները կատաղի հաչով  
Չեն խանգարելու նինջ քո ծանրադին .  
Մնաց քո մէջ գէշ, որ լսիլի զէին,  
Ո՛հ, թէ ձեր սիրտը խիստ տաղաւկացած է  
Մեծ-աշխարհային գործաւոր կեանքից ,

Եկէ՛ք Հայաստան . նա ձեզ կ'սփռուի ,  
 Թէպէտ և ձեր մէջ մի ծանրը թախիծ  
 Պիտոյ է եռայ ; թէ և , ո՛վ օտար ,  
 Պիտ' գոչես . ո՛վ ազգ , դու ի՞նչպէս ընկար :

## VI.

Դու տեսան՞ումես քո տխուր վիճակ ,  
 Դառն արտասուքի արժանի զաւակ ;  
 Դառն արտասուքի . . . շարագոյժ — — — ,  
 Անգիշատիչ քո ջուխտակ աչեր  
 Սրածայր ճանկով շուտով կ'փորեն ;  
 Եւ տարածելով յաղթական թևեր ,  
 Յիշատակիդ հետքն անգամ կ'տանեն :  
 Եթէ քո այգին դալար չ'ծաղկէ ,  
 Թէ չ'կանաչի ծառը դիտու թեան , —  
 Աւեր օրհասի քեզ պիտի ճ'նշէ .  
 Այսպէս է անբաղդ Հայիդ ապագան ,  
 Անհայր , անտերունչ և թախառական :

1864 թուին .

Օգոստոսի 10 .

Բողոքողսկ :

# XIX ՊԱՐԲ ԳՐՕՆԱՍԷՐԷ.

(Քիչերով)

I.

Համբ է լեզուս որպէս գիշերով  
Երկնքի կայքը և տարածութիւն;  
Ես մտածումեմ երկիւղած սրբաով, —  
Եւ հետզհետէ խորհրդածութիւն,  
Ամենտեղ կեանք է, ուր և անկանի  
Քո տեսութիւնը: Լեռների շղթան,  
Ծաղկազարդ բլուրներ, ժողովք ջրերի,  
Չեղ քարոզումեն Կրօնի բնութեան;  
Եւ շնջումեն մի խորհրդաւոր  
Ջոր—Քիւն վերայ. և շես շոշափում  
Այդ զօրութիւնը, միայն հոգևոր  
Քննութեան անջև է ներկայանում:

II.

Մի անգր—ի—ն անվերջ յօր—Քիւն  
Տիրումէ մարդուս այդ բոպէին,  
Նա տեսանումէ այն ճշմարտութիւն,  
Որ աւանդեցաւ դարերից դարին;

Այն սուրբ Գազարի Արարչութեան,  
 Գազարի հիւսիսեան զինքն զինքն հիւսիսեան հիւսիսեան:  
 Այն Յաւերթ Հոգին նահապետութեան,  
 Անյոյժ գաղանկիքին Տէր և Արարչութեան:  
 Գու լսումես ձայն — և շիտթիլումէ  
 Քո սուր զննութիւն, քո փորձող խելքը  
 Երկիւղածութեամբ հնազանդումէ, —  
 Այդտեղ հնազանդ և շրջակայքը:

## III.

Եւ մի՞թէ, մի՞թէ, երբ խանգարելով  
 Երկրի կապանքն ապականութեան,  
 Եւ հողեղէն նիւթը թօթափելով,  
 Պիտոյ է լինիմ որս զննութեան;  
 Մի՞թէ այն պարզ'ը, որ տուած էր մեզ, —  
 Պարզել շնորհը, ըմբռնել հաշտէտ,  
 Մի՞թէ, ասացէք, պէտք է ծուխի պէս  
 Անցանի մի օր, այդ ի նշապէս կարծիք:  
 Բայց ինչո՞ւ իմ մէջ յաւերթ խաղացքով  
 Խօսումէ քննողս զննութեան. —  
 Ո՛չ, բնութեան հետ ես միանալով,  
 Ես մեռնելու չեմ, — և ես անվախճան:

1864 թուին.

Յուլիսի 2.

Բողոքողս:

ՕՐՀՆԵԱԼ ՀԱՆԳԻՍՏՑ

Օրհնեալ Հանգիստ, ողջոյն, ողջոյն  
Քո կենսարևը դալատեան.

Կորաւ սև օձ — անյուսութիւն. —  
Ճնշող կապանքը բռնութեան.

Երկար միջոց ես թագուցի  
Եռուն ռիւր իմ հոգուս.  
Ես շներին նախանձեցի,  
Եւ չո՛ւնէի մի այլ յոյս:

Ահա այն տուն, այն բանտ խաւար...  
Քանի սև սև յիշատակ...  
Այնտեղ էր այն դահիճ վատթար.  
Տո՛ւն դու, դարձիր փլատակ:

Թող քո հիմը մինչև անգամ  
Փոխուի որպէս մի տխուր դաշտ:  
Թող անկասկած ես հաւատամ,  
Որ ճնշեցաւ Չարն անհաշտ:

Քանի՛ դառնն ես արտասուք  
Թափել եմ իմ աչքերից;  
Քանի՛ հոգոցք, ցուրտ որպէս բուք,  
Քանի՛ սրտի և կսկիծ:

Ո՛վ մանկութիւն, իմ կանաչ վարդ,  
Որպէս ծառայ վշտացար,  
Թառամեցար — և կորաւ զարդ . . .  
Քո հորիզոն չէր պայծառ . . . .

1864 թուին.

Յուլիսի 5.

## ԿԵՅՅԷ ՍՈՒՐԲԷ ԳՈՐԾԷ.

Եւ ես երբեմն երգումէի  
Անհոգ քնարիս լարերով  
Գեղեցկութիւն միայն սէրի,  
Վառուած նորա յուզմունքով;

Եւ իմ մուգաս ինքնահաւան  
Կամէր այդպէս ինձ պահել,  
Եւ միշտ երազ, ցնորք քաղցրութեան  
Հոգուս առջև ժողովել:

Ես զօրացայ . . . խորտակեցի  
 Այդ մուղայի բունութիւն;  
 Եւ սերտ սիրով ողջունեցի  
 Քրտնաջան աշխատութիւն:

Ես լսեցի խոր հառաչանք,  
 Եւ վիշտ հոգու, և գանգատ:  
 Եւ լաց, և սուգ, և աղաչանք,  
 Այն էր — քի՛նք է՛հ հարուշտ:

Ես ուխտեցի լինել մշակ  
 Հասարակաց պիտոյքի.  
 Երգել ուսայ քրտնէ և լուսայ,  
 Արտուր հոյս — յս իննէ:

1864 թուին.

Յունիսի 1.

## ԱՇՏԱՐԱԿ.

Քեղեցկանիստ է Աշտարակ.  
 Հատ այգիներ նա ունի;  
 Այնտեղ երկինքն է կապուտակ,  
 Այնտեղ օդն է քաղցրալի:

Մեծ, ընդարձակ, կանաչ դաշտեր  
 Լի են ծաղկով քաղցրահոտ.

Մարդահասակ, խնկանրուէր,  
 Բարձրանում է այնտեղ խոտ:

Այդ սիրուն գիւղն ունի մի դետ ,

Եւ այն լի է ձկներով .

Այնտեղ Իշխան և Կրտսերներ

Խաղ են կապում խայտալով :

Եւ հարազատ այգիներին

Տարածվումէ քաղցրութիւն ,

Եւ Քասախը ուրախալից

Բերումէ ձեզ իւր ողջոյն :

Բայց այդ բոլորն ստրկութեան

Կաշկանդած է կապանքով .

Ժողովուրդը թշուառական

Խեղդուած է մեծ խաւարով :

Եւ տխրութեամբ ես կանգնած եմ ,

Եւ ողբումէ իմ հոգիս .

«Ո՛վ Աշտարակ , քեզ սիրումե՛մ .

Ո՛վ քեզ սիրեց որպէս ես : »

Կէս գիշերին , երբ քնով խոր

Հանգստանումէ աշխարհ , —

Վեր եմ կենում ես սգաւոր :

Աղօթումեմ քո համար :

1864 թուին .

Յունիսի 2 .

Բողոքօղակ .

## Հ Ո Վ Բ Բ .

**Օ** առի հովանին, տերևի շրշուն,  
Տխուր ողբերգակ աղբիւրի շաշուն;  
Հաճելի դիրքը զմրուխտ կանաչով,  
Մի սքանչելի գեղեցկութենով, —  
Միշտ ասումեն քեզ, ո՛վ դու անցաւոր,  
Ո՛վ ինքնահաւան դու ճանապարհորդ,  
Ինչո՞ւ չես գալի այս հազարաւոր  
Բարութեան լինել մասնակից, կցորդ,  
Եւ ահա հովտից մի քաղցր քամի  
Բերումէ իւր հետ աննշան ձայներ. . .  
Լաւ ականջ դիր դու. . . այն խաշնարածի  
Թութակի երգն է, Եկել է գիշեր,  
Կանչումէ գառներն հանգչել խաղերից,  
Եւ պատսպարուել պատառող գայլից:

1864 թուին.

Յուլիսի 19.

Չերկիզով գիւղումը:

## ՄԲՏԲ ԳՍԳԲԾ

Քանի՛ ժամ է, օտարութեան,  
Տուել եմ անձս վշտալի;  
Ինձ թուումէ, որ յաւիտեան  
Ծածկուեցաւ հողն հայրենի:

Ես, համարեա՛, ցնորուած եմ;  
Ես հիւանդ եմ միշտ հոգով.  
Բարի՛ մարդիկ, հանդիստ չունեմ,  
Ես մեռնումեմ սիրելով:

Ա՛խ մայր, ասա՛, քանի՞ կսկիծ  
Գուրս է թափւում քո կուրծքից,  
Ո՛ւր այդ կսկիծ . . . դէպ ա՛յն աշխարհ . . .  
Այդ բողո՛ք է, ո՛վ մեծ Հայր:

1864 թուին.

Օգոստոսի 33.

## ԱՌ ԸՄ ԲՆԿԵՐԷ

### I.

**Ս**էր և մանկութիւն, — կայտառ երկորեակ,  
Միմեանց գրկող անմեկին ընկեր,  
Որպէս գարնան հետ և վառ ծաղիկներ,  
Որպէս պարզ օրով և վառ արեգակ . . .  
Սէրն է, սիրելիք, չկամիմ խարել,  
Որ ձեր տրտունջը մեղմացնումէ;  
Եւ, թէ ծերութիւնդ դեռ չէ ժամանել,  
Որպէս մի թռչնակ ձեզ միշտ ժպտումէ:  
Սորա համար չէ՞, երբ դուք տեսնելով  
Երկու սիրահար գգուած, ճնմելիս,  
Ըզգումէք ձեր մէջ մի ժամ անխռով,  
Իրրե բերումէր ձեզ մեծ աւետիս:

### II.

Թէ վերաբերել այդ ինձ կամէի, —  
Ես զմայլելով նայումեմ նոցա .  
Նոցա կեցութիւնն է նախանձելի .  
Բաղդաւոր ըրպէք թափումեն ահա . . .

Մեր մահկանացու աշխարհն անպակաս  
 Լի է ամենայն տհաճութիւնով,  
 Ուր մէկին մեծ շահ, միւսին մեծ վնաս,  
 Գանգատ, հայհոյանք զրախօս լեզուով,  
 Բայց այդ ամուլքը, — այդ սիրոյ որդիք,  
 Հեռու այս կեանքի շարութիւններից,  
 Միշտ բաւական են և միշտ երջանիկ,  
 Գոցա վերայ է ծաղկում Սէրն անբիծ:

## III.

Միայն երբեմնն նախանձի ոգին,  
 Որպէս մի շար դե մեր մէջ շրջելով,  
 Բերումէ կասկած սիրոյ աշխարհին,  
 Մինչ նորա կապը խապառ լուծելով:  
 Բայց դու, իմ ընկեր, զիտնս ինչ է Սէր, —  
 Երկու կողմերի համակրութիւն;  
 Իսկ թէ առաւել, — երբ երկու սրտեր  
 Ունին մի վերին զուգաւորութիւն:  
 Առանց այդ կապին սէրը կեանք չունի,  
 Եւ այսօր, էգուց պիտոյ է մեռնի.  
 Ուրեմն սիրի՛ր, քանի սիրումէ,  
 Եւ խեղդի՛ր քո սէրն, երբ նա մենակ է:

## IV.

Եւ դու այդ օրից կորուսանումես  
 Քո իրաւունքը, որ դու ունէիր,

Բայց անկման խաչը, — եթէ խելօք ես —  
 Եւ վերագ չ'առնել դու կարող էիր:  
 Միայն մտածիր, մէք բաղդաւոր ենք,  
 Երբ կառավար էր ազատ կամքը մեր;  
 Իսկ թէ մէք նորան բռնարարէինք,  
 Մեր կեանքը սաստիկ պէտք է նուազէր;  
 Եւ քո սիրածը բաղդաւոր իւրեան  
 Հաշվումէր մինչև սերտ սիրումէր քեզ:  
 Այդ սէրը անցաւ — և նա ինքնիշխան  
 Գնաց — նոր բաղդի կազմել ասպարէզ:

1864 թուին,

Յուլիսի 21

Բոգոբոզակ:

## ՍԻՐՈՅ ԿԵԱՆՔԸ.

**Ա**'վ իմ սիրելի, ես սիրող սրտով  
 Խաղաղ ժամանակս կամիմ քեզ զոհել,  
 Եւ հոգուս մաքուր, սուրբ զգացմունքով  
 Հրաշալի պատկերդ կենդանագրել:  
 Կամիմ հաւատալ, որ այսուհետև  
 Անունդ տուեցի ես ապագային;  
 Տուեցի, եթէ աշխարհիս առջև  
 Քեզ ճիշտ նկատեց պայտի մոծին:

Պոչէտ, դիցուք, դու փոքր ինչ յայտնեցիր  
 Նորա արտաքին գեղեցկութիւնը,  
 Բայց դու, ո՛վ պոչէտ, ինչո՞ւ լռեցիր  
 Եւ հոգու կեանքը և մեծութիւնը:

## II.

Ես խոնարհում եմ որպէս թէ յաղթուած,  
 Ծուներ եմ կրկնում որպէս յաղթողի,  
 Գափինի պսակով, երէք կարգ հիւսած,  
 Ես բողոքում ճակատն նոր Երգչի,  
 Թէ դա կարող էր երևան հանել  
 Այն աստուածեղէն հոգու յատկութիւն,  
 Եւ այն սրբութեան եղեմ նկարել,  
 Ար երբէք չ'մտաւ ոչինչ նենգութիւն,  
 Կոյսեր շի սիսի, ճանապարհ արէք.  
 Ահա ձեր պարծանք, — սա ձեր թաղուհին  
 Պէտք է ճանաչէք. մի թէ չ'գիտէք,  
 Ար Սիրոյ տաճար սորան ասացին:

## III.

Նա ման է գալի — և սիրոյ հասանք  
 Առատ թափումէ իւր ճանապարհին, —  
 Եւ ձեզ գրկումէ մի վերին հրճուանք,  
 Եւ յաղթական է շքել թաղուհին,  
 Բարձրագեղ հասակ, հրաշալի կազմուած.  
 Եւ օրօրումէ, և բեկբեկումէ

Որպէս մի ծաղիկ, զեփիւռից շարժած,  
 Եւ աչեր կեանքով փայլատակումէ,  
 Մանուկ դու սիրոյ և զեղեցկութեան,  
 Թող խաղաղ սահենք քո անմեղ օրեր;  
 Թող աճէ միտքըդ լուսով գիտութեան,  
 Մաքուր, անարատ որպէս պարզ եթեր:

## IV.

Նա ման է դալի — և մատաղ սրտերն  
 Ահա մաշվումեն սէրից կաթոգին;  
 Նա ծիծաղումէ — և սիրոյ մատներն  
 Գծագրումեն նորա շրթունքին  
 Մի ամբողջ գրախտ քաղցր համրոյրի,  
 Որ, ես կարծումեմ, ձեռք Արարչի  
 Միանգամ ստեղծեց Աղամի համար,  
 Որ Եւայի սեռն սիրով բարձրանար:  
 Գու զեղեցիկ ես, սվ թէ առաւել  
 Ուսման շնորհով զեղեցկանայիր,  
 Եւ քո քոյրերիդ, այդ քեզ խիստ վայել,  
 Առաջնորդու հի հանգիսանայիր:

## V.

Թէ սպիտակափառ շուշան ձեռներով  
 Անէիր այս թերթս — ո սիրով գրած,  
 Թէ հոգի բերող կապոյտ աչքերով  
 Նայէիր սորան, — ո՞վ իմ մեծ Աստուած,

Ո՛րքան հոգևոր ինձ հանդատութիւն,  
 Ո՛րքան բաղդ, և յոյս, և երանութիւն,  
 Կարող էիր դու ինձ հասուցանել,  
 Ո՛վ կոյս նազելի, թէ ցանկաս յիշել  
 Պոյէտի անուն, ինչպէս մտածեց  
 Եւ ինչպէս մեռաւ — կարդա՛ այս տողեր —  
 Թո՛ղ ևս հնչեն պապանձած լարեր.  
 Իմ քնարն կեանքըս քեզ ընծայ բերեց,

1864 թ. ա. ին.

## ՄԵՐՈՅ ԳՈՐՈՒՄՏԷ

**Ա**յն բոպէից, երբ Սէրըս մեռաւ,  
 Աշխարհիս վերայ շատ օրեր անցան,  
 Բայց երբէք հոգիս չ'ծիծաղեցաւ.  
 Տխո՛ւր երազներ ինձ երևեցան,  
 Եւ շնչեց զեփիւռ, — և սոխակն երգեց  
 Խոր լուծեան մէջ, և թնդաց անտառ.  
 Իմ անդամներից ցուրտ սարսուռ վազեց,  
 Եւ սոսկալի վիշտ և մաշիչ խաւճր...  
 Եւ այժմ շղթայքն անհաստատ կեանքի  
 Տանումեմ վերաս, հնազանդ նորան;

Եւ չեմ սպասում, որ ձեռն կոյր բաղդի  
Սփռէր առաջիս ոսկի մեծութեան:

Ոսկի մեծութեան... և ինչո՞ւ ինձ այդ,  
Մի՞թէ դորանով կ'զարթնի հոգիս;  
Ա՛խ, շուտով շուտով մահուան որոգայթ  
կ'ծածկէ ամպով հորիզոն կեանքիս:

Կ'հանգչի աստղըս... կ'ծածկուի արև  
Մայր մտանելով: Յաւիտենական  
Կ'յափշտակէ ինձ քուն ծանրաթեւ, —  
Եւ շուարվումեմ... որպիսի՞ վախճան...

Գիտեմ. կ'կանգնի կեանքիս զօրութիւն;  
Կ'մեռնի մարմին, կ'փափի դիակ,  
Եւ անվերջ է այս յեղափոխութիւն...  
Բայց դու ո՞ւր, Հոգի, «Քիչ» անգուշակ...

Կ'յիշե՞ս Երզնիշ, կ'տխրե՞ս ծածուկ,  
Հագանակահէ՛ր կոյս կապուտաչեայ;  
Կ'ուղարկե՞ս նորան երկու արտասուք,  
Իբր յաւերժ սիրոյ սուրբ առհաւատչեայ:

Մոսկուայի մէջ, մի դաստակերտում,  
Գուցէ, փայլում ես անհոգ հրճուանքով;  
Բայց դու չես զգում, բայց դու չես լսում  
Երզնիշ մրմունջը, շաղախուած թոյնով:

Ես այն օրից, երբ քո պատկեր

Շիջաւ որպէս մի ճրագ, —

Տաղտկանումեմ ողբանքեր.

Անմահ է քո յիշատակ.

Ես այց եկայ գերեզմանիդ,

Շատ արտասուք թափեցի; —

Թող ճաշակէ մաքուր հոգիդ

Խաղաղութիւն, ասացի.

Եւ թացումեն ինձ արտասուք,

Առատ որպէս մի առու;

Ախ, հասկանալ կարող չէք դուք,

Անիք սիրտ մի զգալու.

Եւ հնչումէ իմ ականջին.

Սիրոյ երգը կախարդիչ.

Ո՛ր ես հրեշտակ իմ երկնային, —

Իմ արամու թեա՛ն սիրտիչ.

1864 թուին.

Օգոստոսի 3.

Ե Չ Ո Ր Ա Տ Ե Թ Ե ր Չ Է Յ Բ Ո Ր Ն .

Ան՝ ձեզ դարաց և Փարիսեաց կեղծաւո-  
րաց. զի յաճիր ընդ ձով և ընդ ցամաք առ-  
նել և կամուտ մի. և յորժամ լինիցի, առնէք  
զնա որդի զեհննի կրկին և ս քան զձեզ :

Ա-Է-Բ-Ն:

I.

**Ա**նարդ ծառաներ, որ Քրիստոսի  
Աննախանձ ուսման խեղդել էք հոգին,  
Որ երանութիւնն հանդերձեալ կեանքի  
Տալիս էք միայն սուրբ Աթոլիկին;—  
Արդե՛ք, կ'րազխե՞ն կուրծքրդ կաշառած  
Մարդասէր դարիս առողջ հոսանքներ;  
Վ'փշրե՞ն մտքիդ կապանք ժանդոտած  
Եւ ժամանակը և նորա փորձեր:  
Բայց պատրաստ է նաւն, արդէն, լողալով,  
Ովկիանոսի հերձու մէ ալիք,  
Եւ սպիտակափայլ առազաստներով  
Թռչումէ ձեր հետ, — բայց ո՞ւր, չար մարդիկ:

## II.

Զէյթոն, սրբազան մնացորդ անցեալի,  
 Տաւրոս լեռների շայ ազգ բնակիչ,  
 Արթոն կաց. — գիտնս, վերադ է գալի  
 Եզուխ ամբոխը, գայլեր գիշատիչ,  
 Նոքա իւրեանց հետ շատ ոսկի ունին;  
 Նոքա կշռումեն դորանով կրօն . . .

Ականջ չ'դնես գետնաքարչ լեզուին,  
 Թքիր լրտեսին, — զինւորուիր, Զէյթոն,  
 Լայօլլի ստրուկ, բարեպաշտ քսուն,  
 Պիտի նախատէ քո Նուսաւոիչ,  
 Որ կեանքիդ համար չ'խնայեց արիւն,  
 Եւ բազմաչարչար եղաւ քեզ փրկիչ .

## III.

Հարազատ եղբայր, որդի քաջութեան,  
 Թո՛ղ չ'կաշառէ եզուխի ոսկին  
 Քո սուրբ հաւատը, քո նրւիրական  
 Աւանդութիւններ, քո Եկեղեցին  
 Կարմիր, եթէ Պապի արբանեակ,  
 Իւր ամօթապարտ որոգայթներով,  
 Կարաց քեզ որսալ . կարաց խայտառակ  
 Յաղթութիւն կանգնել, և, ծաղր առնելով,  
 Կործանել ամուր քո բնակարան,  
 Ուր հազարաւոր Սուլթանի զօրքեր

Սրով մաշեցան և սասանեցան;—

Այսպէս պիտ' լինի եզուխտի նետեր:

## IV.

Հատ ժամանակ է, որ Եւրոպայից

Այդ աղուէսները արտաքս հանուելով,

Եկել են ձեր կողմն — շահուել ձեզանից,

Արկածախնդիր եզուխտ մնալով:

Ո՛վ Զէյթուն, Զէյթոն, վերջին շունչ զոհիր.

Զոհիր քո երկիրն ո՛չ ամբարշտին,

Ո՛չ քո թշնամուն սատանայակիր;—

Սուրբ անկախութեան, ազգիդ պարծանքին

Բեր դորան, Զէյթոն;— թող գերեզմանի

Տարածուի վերադ ապականութիւն.

Ազատ ծնել ես, — թո՛ղ ազատ մեռնի

Զէյթունի որդին. քեզ անմահութիւն:

## V.

Վ'գտնե՛նք ձեր մէջ մէք Հայաստանի

Ախոյեանները, որ կեանք կնքեցին

Անմահ պարծանքով, և բռնաւորի

Շղթայք ու կապանք գոռոզ փշրեցին;

Ո՛վ արդեօք ձեր կո՛ւրծքն առաքինական

Վ'խանձէ հրով; կարո՞ղ էք մեզ տալ

Մի Աւարայրի նահատակ Վարդան,

կամ թէ մի Վահան, առիւծ կատարեալ,

Թէ սորա ինքեանք պէտք է դազաղից  
 'նորից գան հանդէս, որ ստրկութեան  
 Խորտակուին պարիսպք, որ Հայի կործքից  
 Բղխումէ յորդառատ աղբիւր քաջութեան:

## VI.

Ո՛վ ազատութիւն, դու սպառազէն  
 Տաւրոս լեռներից մեզ երևեցար,  
 Եւ արենարբու Ազիզն անօրէն \*  
 Տարաւ նշաւակ, անկաւ շարաշար:  
 Ա՛խ, պահի՛ր և այժմ՝ քեզ ծանօթ Ձէյթուն.  
 Տե՛ս, որքան վէրքեր և որքան հարուած  
 Իւր մէջքի վերայ տանումէ մաշուած,  
 Եւ չունի ոչ որ, ոչինչ օգնութիւն:  
 Եղե՞նազործ են իշխանք աշխարհի.  
 Գորքա շեն լսում մութերի զարկեր,  
 Որից գօսացած և արտասուալի  
 Փշումեն հոգին այդ անմեղ զոհեր:

## VII.

Երբ պէտք է լռես Անարդարութիւն,  
 Ճնշող, խարշամող մտքի ծաղիկներ;

\* 1862 թուին, օգոստոս ամսին, Ձէյթունցիք ջարդեցին տա-  
 ճիկ զօրապետ Ազիզ փաշայի կանոնաւոր զօրքը և շատ թնդա-  
 նօթներ խլեցին:

Այս յաղթութիւնը պիտոյ է աօնախմբուի հայրենասէր շրջան-  
 ներում, որպէս փառաւոր առհաւառչեայ հայկական քաջասը-  
 տութեան:

Ե՛րբ գոռոզների խօլամտութիւն  
 Պիտոյ է գրկէ կորստեան ստուեր;  
 Մինչև երբ պէտք է մնայ զօրաւոր  
 Չարութեան կողմը, որ վանդակներով  
 կապել է մեր խելքն, մեր հանճարն հզօր,  
 Որ պէտք է լցնէր աշարհ հրաշքով;  
 Մեզ, որ միութեամբ ձեռք ձեռքի արած,  
 Գիտութեան դրօշով մի սուրբ գունդ կազմած, —  
 Պէտք է լուծէինք անլուծանելին,  
 Եւ աստուածանոր մեր ազատ հոգին:

## VIII.

Բայց ահա շատ մօտ արձակ ասպարէզ  
 Բացվումէ աչքիս: Խռնու մեն ազգեր  
 Ուրախ կրկերով; նոքա պարզերես  
 Չը գիտեն. ի՛նչ է կապանք, շղթաներ, . . .  
 Ազատ են նոքա . . . և ամենայն բան  
 Շնչումէ միայն սուրբ ազատութիւն;  
 Եւ չէ երևում բռնութեան նշան . . .  
 Սէր, և լ՛հարհարում, և Եւրոպայի  
 Իշխումեն դոցա; — և առհասարակ  
 Ծաղկումէ Հանգիստ, և Բաղդ, և Աստուակ . . .  
 Այո՛, սերմերը, կարծեմ, աճումեն,  
 Երբ ազգերն իւրեանց պիտ՛ կառավարեն:

## ԲՆՁ ՄԲ՝ ՄԲԲԲ.

Բնձ մի սիրիր, ինձ մի սիրիր.

Ես շատ և շատ փոխուել եմ;

Ա՛ն թաշկինակդ — աչերդ սրբիր.

Ես քեզ սիրել կարող չեմ.

Գնացին անդարձ անհող օրեր,

Գնաց և վառ մանկու թիւն;

Կուրծքս ճնշվեց և մեռաւ սէր. .

Եւ նա չունի այլ դարուն:

Դու մի ողբար, իմ սիրելի,

Ինձ նոր դու սէր տալու չես.

Կապ է հոգիս կնիքով մահի,

Թէ և ողջ քեզ ինձ դահես:

Խաւար եմ ես, որպէս գիշեր,

Իմ չորս կողմին փոթորիկ;

Չունիմ քեզ սէր, չունիմ քեզ սէր,

Ես սիրումեմ հայրենիք:

1864 թուին.

Յունիսի 19.

Ամարանացում.





Թէև շարշարվեմ, թէ օրս հառաչէ.  
 Ազատ թող փայլէ իմ կեանքի արև:  
 Կեղծաւորութիւն, անարժան գործեր,  
 Հոգիս չըտէ ոսկով կամ գանձով, —  
 Ես պէտք է խեղդեմ այդ անարգ կիրքեր,  
 Որ կեանքին նայեմ համարձակ աչքով:  
 Հաստատ քայլերով գործըս կ'սկսեմ,  
 Թէև փշով լիք լինէր ճանապարհ:  
 Արդար քրտինքով ինձ հնց կ'ճարեմ, —  
 Եւ այնտեղ ինձ վարձ — Բռն և ոչ շոք:

1864 թուին. Երկրորդ գրքի 14-րդ գլուխ

Խ Ր Ա Ն .

Ես ձեզ ցաւումեմ. դուք մի հետևէք  
 Գիշերաշրջիկ անառակներին,  
 Որոնց մեռելոտ անձը կեսարիկ  
 Լողումէ անկեանք ախտերի ծոցին.

Որոնց արհեստն է նշաւակ յաղթութիւն, —  
 Խլել ամօթը ողջախոհ կուսի,  
 Եւ որոնց կեանքի գործունէութիւն  
 Անմիտ ցնորք է — հաւասար զրոյի:

1864 թուին.

Կուսկով դաստակերտում:

Սրբան և պերճ չ'զարդարուես,  
Բոլորն զուր է, սիրելի;

Որքան հասակդ չը ծլումբուես, —  
Այդ շորերն քեզ չեն գալի:

Գեղեցկութիւնը չէ կարօտում  
Փայլողութեան արտաքին;

Միայն չտեսն է պահանջում  
Որ աղջիկներն զարդարուին:

Եւ մեզ շուտով հաւանելի,  
Թէ ներկայ էր պարզութիւն,  
Թէ քղանցքը քո մենթանի  
Չլինէր այնպէս ոլորուն:

Եղի՛ր այնպէս, ինչպէս որ կաս.  
Քո գործը չէ հր-տէ:

Ապա թէ ոչ — ես հանապաղ  
Կամիմ ա'նձրդ պարսաւել:

1864 թ ու ին.

Ամարանոցում.

**ԻՌԲՅԲԳԱՌՈՐ ՔԻՇԵՐ.**

I.

**Ա**'խ, ես չեմ կարող չ'գովել այդ գիշեր,  
 Այդ անոյշ գիշեր, ուր խաղաղական  
 Գաշըն խուճերով զալիս են ժամեր:  
 Ահա լուսինը: — Ի՛նչ անմահական  
 Յիշումէ դա ինձ գաղտնիքն այն անգին,  
 Որ ամենայն մարդ, սրտի յատակում  
 Վարագուրելով, — զրախօս աշխարհին  
 Չկամի յայտնել և չէ հաւատում,  
 Բայց թէ երջանիկ այս անդորրու թեան,  
 Եւ անպատասխան այս միայնու թեան:  
 Ո՛վ, ի՛նչ մրմունջով այգալիտի գիշեր  
 Սովոր ենք խնկել մեր --- ջի՛ Սեր,  
 Թափել արտասուք, մաքո՛ւր արտասուք,  
 Հառաչել մենակ, որ չ'տեսնէ՛ք դուք:

II.

Ահա նոյն ուռին և նոյն իսկ թփեր, —  
 (Ես երկրորդ անգամ տեսնում զոցա.)

Փոքր ցած իջիր. նոր բացուած վարդեր,  
 վարող են ամբողջ սիւնել քո վերայ:  
 Մ'օտ գնա, իմ հիւր, նոքա անփուշ են;  
 Ա՛խ, տես դու, որքան ուրախ ժպտում են:  
 Գեռ անցեալ գարնան, Մայիսի հնգին,  
 ես այդտեղ էի, և հոգուս ընկեր  
 նշնալէս այդտեղ էր; նա նայեց վարդին —  
 եւ ես հիւսեցի փունջ նորան նրւէր:  
 Ա՛խ, առանց սիրոյ ի՞նչ է մանկութիւն;  
 Ասա՛, նոյն չէ, թէ խորին ծերութիւն:  
 Թէ սէրը գնաց, զրկանք աշխարհի  
 ես յանձն կառնում, և դալուստ մահի:

## III.

Ահա և հովիտ: Ի՞նչ պայծառ կանաչ  
 ճօճումէ նորա մակերևութին:  
 Ի՞նչ ծաղկի ազգեր և յետ և յառաջ ...  
 ես չեմ նախանձում այլ ևս դրախտին:  
 եւ կապուտակը շքեղ երկնքի  
 Իմ հաշտ հայեացքը փաղաքշումէ,  
 եւ երկու աչերն շիկահեր կուսի  
 եւ նկարումէ և ինձ յիշումէ:  
 Թէ չ'սիրէիք դուք ունայնութիւն,  
 Հարձերի աղմուկ, շռայլ պերճութիւն, —  
 Գուք կարող էիք, մարդիկ մոլորեալ,  
 Այս արբեցութեան մեծութիւնն զգալ:

## VI.

Պարտէ՛ղ հանգստեան և խաղաղութեան,  
 Ի՞նչպէս չ'գովեմ՝ քո առատ բերքեր;  
 Ի՞նչպէս չ'խաղամ՝ ներդաշնակաձայն  
 Քնարիս վերայ: Այդ պերճ պատկերներ,  
 Որով զարգարուած գեղեցկանումես,  
 Որ բնութիւնը կենսագործումես, —  
 Ինձ ընձեռումին և ոյժ, և կեանք նոր,  
 Որով կարող եմ լինել բաղդաւոր,  
 Քննել մեծութիւնն Ճարտարապետի,  
 Եւ արարչութեան գաղտնիքն ըմբռնել,  
 Եւ ոգևորուել հոգով պոյէտի,  
 Անհասի անուան սաղմոս տաղերգել:

## Ս Ո Ւ Ա Գ

Սոխակն երգեց և մոռացաւ

Քաղցր քունը գիշերի;

Նա ողջ գիշերն արտասուեցաւ

Որպէս սիրտը սիրողի:

Եւ նա չ'ասաց. ինչո՞ւ համար

Չ'կայ ոչինչ պատասխան.

Եւ նա գիտէր դորա պատճառ.

Սերը չէ բռնահասուն:

## ԱՆՏԱՌԻ ՄԷՁ.

Ա՛՛վ դու վաստակած օտար անցաւոր,  
 Ե՛կ, հանգստացիր. այստեղ կեցութիւն  
 կարող ես գտնել. քեզ հովանաւոր  
 կ'լինեն ծառեր, և մի զուարթուն  
 Ոգի կ'ստանաս: — Արբի՛ր, ներշնչի՛ր  
 Բարեխառն զեփիւռ և օդ քաղցրութեան,  
 Թէ հիւանդ ես դու — ինձ հաւատացիր —  
 Քո զգայարանքը և քո գոցութիւն  
 Եւ կ'նորոգուեն և կ'առողջանան;  
 Եւ մի բարի քուն այնքան անդորրիկ  
 կ'փակեն աչերդ, մինչ վարդանման  
 Այգը կը շողայ, և նորածաղիկ  
 կ'աւետէ քեզ օր: Այստեղ, սիրելի,  
 Թռչումեն ժամերն աննկատելի:

1864 թուին

Ամարանոցում:

**ԵՐ ԳՈՐ ԱՅԳՂԷՍ.**

**I.**

**Ա**'յ իմ մաերիմ բնկեր մանկութեան,  
 Գու մտածումես ինձ դու աճանկ,  
 Եւ իմ սերտ սիրոյ ոգիս առնութեան  
 Այլ եւ չ'կամիս համազգաց լինել :  
 Եւ ահա շրթունքդ «Եւրե» շնջեց —  
 Եւ ես աշխարհում մնացի մենակ;  
 Եւ իմ կուրծքիս մէջ սիրտըս նուաղեց . —  
 Իմ ծաղկա՛ծ այգի, դարձար փլատակ :  
 Կանայք, ձեր սիրտը ես լաւ զննեցի,  
 Եւ այսու հետեւ հազիւ թէ խարուեմ ;  
 Եւ թէ մանկութիւնս յաւիտեան ծածկուի,  
 Չեր նենգ արուեստը աշխարհին կ'սպասեմ :

**II.**

Ի դէպ է այստեղ, երիտասարդներ,  
 Որ դեռ նախուած չէք կնոջ սրտին;  
 Որ, դեռ ցնորուած, չէք ճանաչել սէր, —  
 Լսել խորհուրդըս : Թէ այդ խրատին  
 Ականջ զնէիք — դուք կարող էիք

Լինել բաղդաւոր և սիրոյ աշխարհ  
 Ոտք կոխել հաստատ: — Ո՛վ դուք պատանիք,  
 Խեղդեցէք կիրքը ձեր իշխանարար,  
 Թէ և բորբոքուէր սիրոյ կրակով  
 Ձեր բոլոր կեանքը: Արձակ նայեցէք  
 Սիրած ընկերիդ աչքերին; տեսէք —  
 Չվառուին նորա մեղմ աղաչանքով;  
 Եւ հաւատացէք. ախտեր կ'սկսեն  
 Ես գալ նոցա մէջ — և ձեզ կ'սիրեն:

1864 թուին.

Օգոստոսի 5.

Բողոքողսկ:

## ՄԱՐԵԼԻԱ

Մանր օրեր, գնացէք շուտով,  
 Գնա՛ Չմեռ շիւսիսի;  
 Գարուն, կանաչ եկ թևերով.  
 Թո՛ղ արձակուի ոստն վարդի,  
 Ես գարնան մէջ հոգուս սէրը,  
 Սրտիս լարերն թաղեցի,  
 Որ գարնան հետ քո պատկերը  
 Գովասանեմ, Սիրելի:

ՄԵՍ ՔԱՏԲՈՆԻ ՄԷՁ

I.

Մայեցէք աջ կողմ — առաջին յարկում,  
 Դէտակ ուղղեցէք . մաքուր աղանին  
 Անդոյգ շնորհով է գեղեցկանում .  
 Ծաղկումէ գարուն նորա շրթունքին,  
 Չ'կարծէք, որ սա լինէր նոցանից,  
 Արոնց բարբնումարքն է կասկածելի;  
 Ար խորհրդաւոր այն քօղի տակից  
 Աչքեր առնելով շատ անօթալի;

II.

Ար վաճառելով և խիղճը և սէր,  
 Աշխարհիս վերայ այլ արուեստ չունին,  
 Միայն զգուելի անպարկեշտ յոյսեր  
 Իւրեանց գլխի մէջ պտըտումէին;  
 Արոնք պատրաստ են որոգայթ լարել  
 Եւ փորձանքի մէջ ձեր անձը ձգել;  
 Ար ընդդէմ կոչման գեղեցիկ սեռի  
 Մեղքեր են գործել ձեզ անբուժելի: —

III.

Ա՛վ, թէ մէկի մէջ այս կարծիքս ծագի,  
 Նա ինքը պիղծ է և չունի հոգի.

Ազնիւ պատանիք, ատեցէք դորան —  
 Այդ գունատ ժառանգ հեշտասիրութեան,  
 Նա, աչքերը ցած, այնքան երկչոտ էր,  
 Որ թէ անցնելով հայեացք ձգէիր,  
 Որպէս մի սալոր շառագունումէր; —  
 Անբարբա՛ռ էին շրթուներ գեղալիր:

## IV.

Համեստ է բարբը և քաղցր շարժումած,  
 Նորա պարանոցն է շուշանագեղ;  
 Աչքեր կենդանի, սիրով ներշնչած;  
 Եւ նորա վերայ ամէն բան շքեղ  
 Հատ ախտաբորբոք երիտասարդներ,  
 Ծաղկած մանկութեան վառուն շնորհով;  
 Եւ շատ մեծատունք, և շատ հարուստներ,  
 Ոսկու բռնութեան դաւածանելով, —

## V.

Բաղդաւոր էին, թէ այդ կախարդիչ,  
 Այդ մաքուր կոյսը մի ժպտաւ բաշխէր;  
 Եւ նորա պատկերն, այնքան գրաւիչ —  
 Ամէն ո՛ր իւր մեջ դրոշմած ունէր,  
 Ահա վարագոյրն ընկաւ թատրոնի,  
 Ողբերգութիւնը վերջացաւ ահեղ,  
 Բայց ոչոքի սիրան ուրիշ վիշտ չունի,  
 Թէ և՛ քան տեսներ աղջիկը անմեղ:

ՊՈՅԷՏ, ՆԻՐՔԱՊԵՏԷՏ

ԵՐ ՔԱՂԱՔԱՅԻ

I.

**Բայց դուք իմացէք, որ այս օրինակ**  
Իմ սուխորութիւնս — անդադար չընել,  
Անընդել ձորին, անմարդարնակ,  
Որպէս սիրելուս այցելու լինել;  
Աղբիւրի կողքին նստել խոխոզիւն,  
Եւ լսել նորա տրտում շնջիւն,  
Արմանալ Հովուի սրտաշարժ սրնգին  
Եւ գգուել սիրով մայող գառներին;  
Հեռանալ մարդից, անտառ երագել,  
Օրով տաղտկանալ, գիշերով սթափուել, —  
Իմացէք. դեռ այդ է նշանակում  
Որ ես անգործ եմ, Դու՝ աշխարհում, —  
Ո՛չ, այդ այն է, որ վառ է միշտ հոգիս  
Եւ շատ ցաւումեմ քեզ, ծիծաղելիս:

III.

Բայց դու, որ անարգ ճանապարհներով  
Յուսահատուել ես աշխարհի կեանքից,

Որ կայենի պէս ահով ու դողով  
 Փախչումես արդար ընկերու թենից;  
 Որ օր ու գիշեր ցուրտ որպէս դամբան  
 Հաշիւների մէջ թաղուած ես հողով;  
 Որ անզգայ ես և որպէս անբան  
 Չկամիս գրկել ընկերդ ջերմ սիրով;  
 Կեղծաւոր, խաւար և արծաթասէր,  
 Գ՛ն ևս խորթ որդին, դ՛ն ևս անընկեր,  
 Տե՛ս, ի՛նչ անտառ է, ի՛նչ արձակ հովիտ,  
 Ի՞նչ անեմ, ո՛վ մարդ, անկեանք է հողիդ,  
 Ա՛խ, բնութեան հետ, և բաղդաւոր եմ —  
 Իմ տխուր տաղերս թ՛ող ես կցորդեմ.

## III.

Եւ նիւթապաշտը չունի պատասխան,  
 Մեռած է հողին; միտքը գոսացած  
 Խաւար ախտերից ընչասիրութեան,  
 Պատճառ, ի՛նչ է շուրճի Ա՛ռնուհի:  
 Նստած է Պոլեան և մտածումէ.  
 Առուի ալիքը, մեղմ թաւալուելով,  
 Նորա մտածմունքն յափշտակումէ, —  
 Եւ նա երգումէ առուի հետ սիրով.  
 Բայց ահա կեանքի գործերից քրտնած,  
 Եւ հասարակի օգտին պարապած,  
 Յառաջ է գալի ժիր քաղաքացին,  
 Առողջ, անտրտունջ և յաղթամարմին.

## IV.

«Ո՛չ Գու և ո՛չ Նա որդի բնութեան,  
 Եւ փայլելու չէ ձեր գլխի վերայ  
 Սուրբ արեգակը բարերախտութեան;  
 Չեր համար, ասեմ, պայծառ օր չ'կայ,  
 Ես եմ հարաւոր Մշի աշխարհի,  
 Եւ իմ կեանքի մէջ ամէն մի վայրկեան  
 Չափած կշռած է և իւր տեղն ունի.  
 Ես անձնազոհ եմ հարաւորս:  
 Ե՛կ, Պոյէտ, քաղաք, այնտեղ գործ գործիր,  
 Հասարակի բաղդն ու օգուտն երգիր.  
 Գու այն ժամանակ անդամ ես ազգի,  
 Եւ արժանի ես մեր սուրբ յարգանքի: —  
 Այս քաղաքացին ասաց Պոյէտին,  
 Հտնայ քայլերով գնաց իւր գործին:

1864 թուին

Քոզորոզսկ.

## Զ Ա Ն Գ Ա Գ

Արպէս գղրգոց բանտի դռների  
 Ինձ տաղտկալի է այդ զանգակի ձայն;  
 Գրել, մտածել ինձ անկարելի;  
 Լռի՛ր, ո՛վ զանգակ, կոյր ծիսի նշան:

Իմ հոգու լարերն թող ազատ շարժուին,  
 Արպէս ազատ է իմ մտածութիւն. —  
 Սրտիս լսելի ես իմ մեծ Փրկչին,  
 Ահա՛ երգումեմ օրհնարանութիւն:

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն ԵՐ Ե ՈՐԱ ՈՐԳԻՔԸ

Եւ գեղեցիկ է Հայաստան՝ աշխարհ,  
 Բայց գեղեցիկ չեն նորա բուն մարդիկ.  
 Հայաստան կանաչ, Հայաստան դալար,  
 Բայց չոր ու ցամաք նորա խեղճ որդիք:

Ահա սթափուած ազգեր ամենայն  
 Գիմումնն յառաջ հզօր քայլերով;  
 Ահա՛ բարձրացաւ դրօշը ազգութեան,  
 Բայց Հայն քնած է կորստեան քնով:

1864 թուին.

Ամարանոցում:

## ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՆՏ

Ես ձի նստայ, Գէպ ի Մոսկուա  
Ուղղեցի իմ ճանապարհ;

Մօրս արտասուքն այլ չտեսայ. —

Արագ գնաց երիվար:

Ո՛վ արտասուքդ, մայր իմ անգին,  
Պէտք է սրբէ, ասացի: —

— Ես կը մնամ այն սուրբ օրին,

Մինչև դառնաս, իմ որդի:

Եւ գնումն հետըհետէ

Եւ շատ օրեր, շատ տարիք,

Մօրս արտասուքն ծովանումէ.

Եւ չունի՛ր ժամ երգանիկ. . .

## ԿՐՕՆԱՍԻՐԻ ԱՂՕՐԻՔԷ

Ենհաս Ջօրու թիւն, որ ծաւալումես

Անթիւ շնչաւոր էակների մէջ,

Որ ամենայն բան տնօրինումես,

Որ իբրև կանթեղ վառվումես անշէջ;

Որ ստեղծել ես մարդը իմաստուն,  
 Քան այլ շնչաւորք քո հրամանի,  
 Որ բաշխել ես շուրք բնականի,  
 Մինչ հայեացք մխել անդունդք երկնքի;

Որ կարողապէս տուել ես Հանճարին  
 Թափանցել ստորինք, քննել և զննել  
 Ընդերք տիեզերքի, տիրել բոլորին, —  
 Տո՛ւր հոգուս գալոցքն այսօր գուշակել:

Եղեմի դրամիտ, թէ խաւար գեհնն  
 Պիտի հաստատես նորան օթեան,  
 Թէ այս վնտ դամբան... Ո՛վ ես հողերէն...  
 Ի՛չո՞վ բացեցի դուռն անմահութեան:

Այստեղ կ'մեռնեմ. այս բլուրն ահա  
 Կ'առնու դիակըս ցուրտ կամարի տակ,  
 Տարերք կ'փոխուին և աշխարհ կերթայ, —  
 Կ'երթան և բլուրն և իմ յիշատակ:

### Ա Ն Ա Յ Բ Տ

Ո՛վ դու Անահիտ, դուստր ոսկեծին,  
 Ո՛ւր է քո զարդերն, գործած գոհարից, —  
 Ճակատը սեղմած ծունկերի միջին,  
 Արիւնո՛տ շիթեր ծաղկումն աչքից:

Ո՛ւր թագաւորներ հարազատ զօրքով  
 Սուրբ հանգստութեանդ արթուն պահապան .  
 Նորա ծածկուեցան մահի խաւարով ,  
 Քեզ միայն մնաց թախիժ անվախճան :

Ա՛լ դուստր լուսոյ , չքնանղ արեգակ ,  
 Այդ ի՞նչպէս եղաւ , որ անին բաղդի  
 Գաւաճանեց թեզ , երկնի կապուտակ  
 Չլացաւ քո փառք — անկար գո՛ւր բանտի :

1864 թուին .

## ՈՒՒ ՀԱՅՏԱՍՏԱՆԻ

(Երեւակայական)

Ո՛ւլ կոյս մանկագեղ , կոյս արևելքի ,  
 Հրեշտակ սիրոյ — բայց ո՛չ թեւաւոր .  
 Մի հատիկ գոհար փշրուած թագի ,  
 Լոյս ես իմ հոգու , տաճար փառաւոր :

Անմեղութենով փայլումես պայծառ  
 Որպէս շուշանը Հայոց դաշոների ;  
 Քեզ այդ շուշանից , հոգո՛ւս սիրահար ,  
 Հիւսումեմ պսակ անթառամելի :

Առաջին անգամ ես այն անմարմին  
 Քերուշու թիւնը տեսայ կանացի ;

Ա՛խ, տեղատու է շրթունքիդ վարդին  
 Երբ ազնիւ քօղը արեարացի:

Ես շատ նայեցի խաղաղ աչքերով  
 Զմայլիչ Սէրիդ փայլատակութեան,  
 Վիշտրս փարատեց գարնան զնփիւռով  
 Վա՛ռ ծաղկահասը վա՛ռ գեղեցկութեան:

Ես աշխարհիս մէջ շատ կանայք տեսայ,  
 Եւ շատ կանանց հետ ես սիրանրուէր  
 Զգացմունքներով ոգեխառնեցայ,  
 Բայց այժմ նորա — նորա մի ստուեր:

1864 թուին.

Ամարանոցում.

### ԱՐՏԱՐՈՐ ԵՍՄ

Դնո՛ւ այդպէս արտասուալի  
 Դու նայո՛ւմես իմ վերայ.

Քեզ չե՛մ սիրում, իմ սիրելի,  
 Ի՞նչ է քո միտքը, ասա՛:

Ի՞նչ ես կարդում իմ աչքերում,  
 Մի՛թէ սիրոյ հաւաստիք: —

Ո՛վ խեղճ աղջիկ, ի՛նչ ես անում,  
 Ի՞նչ պիտ' ասեն քեզ մարդիկ:

Մազերը կախ, և շրթունքներ,  
 Լի ցանկութեամբ ախտաւոր,  
 Խոնարհումեն և համբոյրներ  
 Ինձ տալիս է նա անզօր . . .

Ո՛հ, փրկիչ եմ ես քո, ո՛վ կոյս .  
 Ես խնայում եմ քո տարիք . . .  
 Խեղդի՛ր այդ չար և անմիտ յոյս,  
 Յետո՛յ կ'լինիս երջանիկ . . . .

1864 թուին.

Օգոստոսի 8.

Չերկիզով գիւղումը:

## ԵՒ ՆԱ ՄԵՌԱՒ

Ո՛վ դու նազելի, որ Երզնն այնպէս  
 Այրվումէր ախտով գրկախառնել քեզ;  
 Որին անկաշառ պարզեւել էր սէր,  
 Անտե՛ս արեցիր քո ոսկի յոյսեր:

Երբեմն հրեշտակ, երբեմն չար դև  
 Չեացար նորան անհաստատ սիրով;  
 Շատ վշտացրիր աշխարհիս առջև;  
 Վշտացար և դու, բայց մահի գնով:

Մինչդեռ Փերոսը ոսկեւառ կառքով  
 Նոր արշալուսի բացումէ դռներ,

Գամբանիդ վերայ ջերմ արտասուքով  
Թացումէ երգիչն Բուրմա՛ն Վերեր:

Գու դագաղումն ես — քո պատկերն պայծառ  
Կրումեմ իմ մէջ որպէս սրբութիւն,  
Ո՛վ այսուհետեւ իմ սրտի համար  
Կարող է բերել նոր յիշողութիւն:

Ո՛վ նախամեծար ընկեր սիրելի,  
Ինչո՞ւ փոխեցար դու այս աշխարհից,  
Ինչո՞ւ իմ կուրծքը այնքան ցաւալի  
Ճնշումէ մի նոր, մի կծու թախիծ:

Գեղեցիկ է կեանքն, բայց, ա՛խ, նա չունի  
Ո՛չ հաստատուն կայք, ո՛չ տևողութիւն,  
Ա՛խ, թէ Նաղելիս մնար կենդանի,  
Եւ չ'ցամաքէր նորա դօրութիւն:

Սո՛ւրբ քեզ վերջին ընծայ,  
Եւ խոնաւ դամբան և մի յաէրժ քուն;  
Կարծեմ, սոցանից աւել բան չկայ,  
Թէ և, ասումեն, կայ այլ դրութիւն...

Եւ դո՛ւ, մեզ երգող այս տխուր խօսքեր,  
Շուտով կ'ստանաս քո կեանքի վախճան;  
Շուտով կ'լռեն քնարիդ լարեր,  
Որ այնքա՛ն հնչեց մեզ տա՛ղ տրտմութեան:

## Մ Ա Ն Կ Ո Ւ Ք Բ Ի Ն .

Մ'ուրբ արբեցութեան անմեղ տարիներ,  
 Մաք'ուր հրճուանքի դուք անհոգ օրեր,  
 Չեղ երգել եմ ես. երբ անուշահոտ  
 Ժպտումէիք ինձ որպէս առաւօտ :

Պայծառ մանկութիւն, ուր է ներդաշնակ  
 Քո մեղեդիքը, քո քնքուշ վիշտեր.  
 Եւ հով, և արև, և սէր անուշակ,  
 Եւ երջանկութիւն, և դուրս էրդեր :

Թէ դուք գնացիք, անցաք յաւիտեան,  
 Եւ դառնալու չես, է՛հ դուրս երդ,  
 Ա՛խ մի՞թէ, Աստուած, ալիք ծերութեան  
 Պէտք է ծածկեն ինձ, — ո՛վ դառն պատուհաս :

Ա՛խ, մի՞թէ և ես մահի զգեստով  
 Պիտոյ է կաղամ մի ոտի վերայ.  
 Մի՞թէ վիզըս ծուռ, դողդոջուն ձեռքով  
 Նեցուկ պիտ' առնեմ, որ փոքրիկ ոյժ տայ :

Արի՛ մանկութիւն, արի՛ և այսօր.  
 Թող մի ժամ ևս լինիմ բաղդաւոր.

Ծաղկազարդ գարնան ուռիների տակ,  
Թող դարձիդ կենաց լցնեմ ես բաժակ:

Յողացէք փոքր ևս, բոպէք անգին,  
Այցելու եկէք նուաստ ձեր երգչին;  
Հոգուս նպատակն փառքով կնքեցէք,  
Եւ այն ժամանակ բարեալ մնացէք:

1864 թուին.

### ՃԵՄԱԲՏԱԲՕՍ.

Եւ ինձ այն օրից, երբ շրթունքս յայտնի  
Օրհնեցին անունը արդարութեան,  
Ատեցին տղէտք, գատապարտելի  
Ինձ փոս փորեցին, — գործի շարութեան:

Ո՛հ ու նախանձը որպէս փոթորիկ  
Նոցա կուրծքի մէջ ալեկոծեցաւ.  
Կուրացան մարդիկ, սիրեցին մարդիկ  
Խաւարի դեր: — Լոյսը ծածկուեցաւ:

Հատ բան լսեցի նոցա բերանից,  
Հատ աքսորանքի տարայ ես հարուած;  
Բայց սուրբ Գատաւորն օրհնեց վերևից.  
Վահան հովանի ուղարկեց Աստուած:

Ես խօսք տուեցի — մարմնով և հոգով,  
 Արիւնով, սրով նորան կ'նքեցի;  
 Եւ խաչ առնելով և կուրծքս ծածկելով,  
 Երկինք և դժոխք վկայ կանչեցի:

Եւ այն վայրկենից դեի փորձութիւն  
 Իմ համար, եղբարք, շնչի՛ն խաղալիկ;  
 Այն ժամանակից քաջալերութիւն  
 Աջակից ունիմ. — անզօր են մարդիկ:

Ես լաւ հասկացայ կեանքի նպատակ,  
 Բարոյ եւ Չրի զանազանութիւն;  
 Ասացի. թող շարն առնէ ոտնատակ  
 Բարին . . . սա ունի մի այլ յաղթութիւն:

1864 թուին.

Ապրիլի 3.

## ԱՌ ՀՐԱԺԱՐՈՒԱԾԸ.

Մի՛նչ — գեղեցիկ պարզ և աշխարհում,  
 Եւ կեանքից հեռու ի՞նչ ճանապարհ կայ.  
 Ո՛վ մարդ, քո սիրտը ուր է վերանում,  
 Կապած, կաշկանդած երկրիս վերայ:

Ի՞նչպէս կարող ես նորա կապանքից  
 Եւ ծանրութենից դու ազատ մնալ .  
 Հող պիտի դառնաս, ծնել ես հողից,  
 Թէ Ստեղծողին կամիս հաւատալ :

Հողից կարող ես դու նորից փոխուել  
 Սփռուի, իմ գլխուս, ճշմի, իմ խիտի;  
 Տեցի պէս շարժուել, դարձեալ հող լինել,  
 Մեզ ցեխ պատրաստել — ծեփել պատուծակ :

Նայիր լուրջ աչքով, ահա անապատ,  
 Ի՞նչ պիտի գործես, որ Տիրոջ առջև  
 Ստանաս դու վարձ : — Անմիտ Յուսահատ,  
 Զուրկ ես աշխարհից և չունիս պարգև :

Հասարակ գործով հայն է հոճոյ,  
 Եւ առանց գործի չունիս դու հաւատ .  
 Քարողիր անխոնջ գործը Աստուծոյ,  
 Եւ մի հեռանալ անմարդ անապատ :

Կարգա՛, ակա՛նջ դիր Աւետարանին,  
 Եւ նորա տողերն ձգիր աչքիդ տակ .  
 Տես, ի՞նչ է ասում քեզ աստուածային  
 Արիւրով քրտնած Բազմաբար Մշակ :  
 Ա՛ռ փշեայ պսակ և մտիր աշխարհ .  
 Այդտեղ է, ո՛վ մարդ, Աստուծոյ Տաճար :

Այդտեղ քո կեանքը վաստակո՞ւմ վարժիր .  
 Այդտեղ սրբու թեամբ դու գո՞րծ կատարիր :

Այդտեղ ասպարէզ քրիստոնէութեան , —  
 Այդ կեանք բարւոքող մեծակշիռ ուսման ;  
 Թէ ունիս ականջ լսելու — լսիր .  
 Թո՞ղ ի՞նչ արե՛ս, ճգնաւոր , փախսիր :

1864 թուին .

Մայիսի 6 .

Ռուս ուխտաստեղու՛մ .

Ս Ի Ր Ա Ղ Է Պ .

Շա սեղմումէր , ժպտալով ,  
 Կուրծքի վերայ իմ ձեռք ,  
 Եւ խիստ ազնիւ դարձուածով  
 Պատմումէր . է՛նչ է՛ երբ :

Նա ասումէր . սէրն է կրակ ,  
 Որ , թէ վառիչ նիւթ չ'տան ,  
 Նոյնպէս հանգչումէ արագ ,  
 Արպէս կայծ մի էլէքտրեան :

Սէրն է աղբիւր քաղցրութեան ,  
 Սիրող սրտի արշալոյս .

Սէրն — վառ լապտեր մանկութեան,  
Մատաղ կեանքի ոսկի յոյս:

Սիրոյ ձայնն է կախարդիչ,  
Նորա հնչմունք խանդակաթ;  
Բայց առաւել զմայլիչ,  
Երբ լեզուով է հարազատ:

Սիրիւր, որքան կարողես;  
Որքան փայլումէ արև.  
Կեանքիդ օրերն նետի պէս  
Թռչումեն արագաթև:

Կ'գայ մի օր, մի սև օր,  
Երբ մեր այգը ոսկեշող  
Կ'խաւարուի, — և անգոր  
Մեզ կ'ծածկէ մի բուն հող:

Իմ սիրելի, զգո՛յշ կաց,  
Որ լեզուդ չար չ'խօսէ.  
Պատճառ, ոչինչ գեռ չ'ասած,  
Ընկերք — բռնակէ:

Ք Ա Ր Ա Մ Ա Ն .

Աւրդապետք տխմարք և ընդինքնահաճք ,  
անձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կո-  
չեցեալ , արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով :  
ոսկեսէրք , նախանձոտք , թողեալ զհեղու թիւն ,  
յորում Աստուած բնակէ , և գայլք եղեալ  
գիւրեանց հօտս գիշաակելով :

Մ-Վ-Է- Խ-Բ-Ն-Գ-Ի :

1.

**Տ**խուր է , եղբարք , տխուր է մեր դար .

Հայի վիշտերից և անարգանքից

Թառամել եմ ես . նա , որպէս թշուառ ,

Ազատուելու չէ երբէք կապանքից :

Նորան իւր Հովիւք , իւր առաջնորդներ

Մինչ հոգեվար ժամն պէտք է կեղեքեն ,

Եւ եղուխտական , անոխառք թակարթներ

Օտարի առջև այդ խեղճին դնեն ,

Հովիւ դառնալով ազգին հոգեոր ,

Մի սարսափելի նպատակ ունին .

Որպէս մոլեռանդ, դաճիճ թունաւոր  
 Զրկել, պատանել իւր ժողովրդին,  
 Եւ բողոք կարդալ և դաւաճանել,  
 Թէ այդ զրկեալքը կամէին խօսել:

## II.

Արդ՛ր դատաստան, ո՞ւր է քո պատիժ,  
 Ո՞ւր է երկնառաք վրէժխնդրութիւն;  
 Մի՞ թէ մի անմիտ, մի գարշելի իժ  
 Պէտք է նուաճէ քո արդարութիւն:  
 Մի՞ թէ դու այնքան թոյլ ես և անզօր  
 Այս աշխարհիս մէջ, այնքա՞ն անհաստատ,  
 Որ դէպ ի դագաղ պիտի գնաս այսօր,  
 Եւ խեղդես մեր մէջ ամենայն հաւատ:  
 Յոյց տուր մեզ, ջոյց տուր, որ կենդանի ես,  
 Կաշկանդիր ձեռներն այդ յանցաւորի,  
 Թո՛ղ այդ Աղուէսը, որպէս սևերես,  
 Ստանայ սև վարձ — վարձը Յուդայի:

## III.

Գգուած գորգմնաղարդ, փափուկ բարձերով —  
 (Ծածկոցն է թաւիշ, կապոյտ — ծիրանի)  
 Առօք և փառօք մօրուք շփելով,  
 Սերտումէ անուանք յարգոյ սրբերի.  
 Նա մտայոյզ է. ի՞նչպէս իմանանք,  
 Ո՞րպիսի ճ՛նշուած դաւի զղրդիւն,  
 Ո՞րպիսի եղեռն նենգութեան կապանք,

Սևամաճ թախիժ, մթին ցանկութիւն, —  
 Վարսգուրումէն խորամանկ ճակատ,  
 Ուր թագուցած է մահապարտ յանցանք  
 Եւ մի վասակեան ապերախտ զանգատ:

1864 թուին.

Յուլիսի 15.

Բողոքօղակ:

### Մ Ե Շ Ա Տ Ո Ւ Ն .

Այն ի՞նչ իշխան է և ի՞նչ մեծատուն,  
 Որ ճեղքեց իւր ազգն, մատնեց սուրբ արիւն;  
 Փոխեց կրօնից, պատառեց նորան;  
 Եւ գաւաղանի հարուածների տակ  
 Տուեց ժողովուրդը զայլին ինքնիշխան. —  
 Ստացաւ անիա՛նք գործի մրցանակ,  
 Եւ դառն արտասուք Հայ ճնողների  
 Բղխեց սրպէս ծով. նորա չ'գտան  
 Խորթ կրօնի մէջ իւրեանց հայրենի  
 Վարդապետութիւն — տխրեցան, մեռան:  
 Այդ ի՞նչ իշխան է, — ինձ դուք ասացէ՛ք, —  
 Հապա երեսին դորա թքեցէ՛ք:

## Մ Ա Յ Բ Ս.

Երկինքը պարզ, օրն մայիսեան.  
 Ես ճնմումեմ բուրաստանում:  
 Սիրտս ուրախ է. ես, ժպտալով,  
 Վարդ եմ քաղում, փունջ եմ հիւսում,  
 Թեթև զեփիւռ. կանաչ ամեր  
 Անուշուժեան հոտ են փշում,  
 Եւ սոխակի դայլալիկը  
 Քաղցր ականջիս է հասանում:  
 Նա մի վարդից գէպ ի միւսն  
 Ոստոստումէ ուրախալի;  
 Նա հնչումէ դաշնակաձայն. —  
 Ինձ իւր արունստն է ցոյց տալի:

1864 թուին.

ԱՐԱՐԱՏԻ ԶԲԱՄԱՅԻՆ ԵՒ ԾՈՅԱ  
ԱՂԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ.

I.

**Բ**աղցրը Բամբիումիլ այստեղ Ախպասանք —  
Այդ մեծ սոխակներ հին Հայաստանի —  
Երգեցին Հայի և փառք և պարծանք  
Եւ յաղթանակներ թագաւորների:  
Այդ վայրենացած քարանձաւներում,  
Ուր այժմ միայն բուեր են կենում,  
Լալումեր թնդիւն կորով նետերի  
Հայոց մեծափառ, դիւցազն Մեծերի:  
Ա՛հ, օրեր գնացիք և այդ խորշերին  
Մնաց մի տխուր տպաւորութիւն...  
Նորա յիշեցին իւրեանց ցանկալին...  
Բայց ձմեռն փչեց, ծածկուեցաւ դարուն:

II.

Այդ լուռ տեղերում կարող էք կարծել,  
Որ դեռ չէ անցել մարդկութեան համար  
Գիւթական դարը. և չէ՛ն առասպել  
Առասպելները, որ հրաշարար

Աւանդեցին մեզ անցածի մարդիկ,  
 Երբ գերբնական երևոյթներով  
 Երևան եկան հաղարաւոր Քիբ, —  
 Որոնց պաշտեցին երկիւղած սրտով :  
 Այստեղ բնութիւնը է ամենիշխան,  
 Եւ շատ նման է այն բռնաւորի,  
 Որ անգութ լախտով հարստահարութեան  
 Կամէր խլել կամք հպատակների :

## III.

Բարձր սարերի ձիւնապատ շղթան,  
 Որպէս մի տիտան երկինք վերուղղած,  
 Եւ խոր անդունդներ, ուր հաղարամեան  
 Անշունչ լուսութիւն թւեր տարածած  
 Թագաւորումէ, և քարուտ ձորեր,  
 Ուր, որպէս առիւծ բաշ ծածանելով,  
 Վաղումն արագ, փրփրաղէզ գետեր,  
 Դիպչելով ժայռին և փշուրելով, —  
 Այս բոլորն, ասես, յափշտակումն  
 Անկախութիւնը — և — է — ի — ի .  
 Նա պիտ' հաւատայ, պաշտէ կուրորէն, —  
 Այստեղից աղբիւր տգէտ խաւարի :

1864 թուին.

Ամարանոցում.

Բ Ե Բ Ե Ա Գ Բ Տ Ա Կ Յ Ո Ւ Բ Բ Ե

Ման բոպէք, երբ ամէն բան,  
 Ենթարկելով քննութեան,  
 Երկուստէ. և, համարեա,  
 Վարանմունքիս ելք չ'կայ:

Ես պնդումեմ, որ կանխակալ  
 Մտքիս կարծիքը հերքեմ,  
 Եւ գիտութեամբ հանդիսանալ,  
 Որ ի՞նչ ճշմարտութիւն:

Առանձնացած ես մտածում եմ,  
 Որ գոյութիւնս զարգանայ.  
 Այդտեղ ե՞տէ, այդտեղ ե՞տէ;  
 Այդտեղ ի՞նչ բան և ինչ:

Ես եմ ե՞տ, և իմ մէջ կայ  
 Տիեզերքի մեծութիւն,  
 Իմ մէջ Աստուծոյն գերակայ,  
 Այսինքրն ի՞նչ բան ինչ:

Ես մտնումեմ սուրբ տաճարը  
 Աստուծոյն հրաշքներէն;  
 Եւ քննումէ իմ հանճարը  
 Անլարժ օրէնք գոյութեան:

Ես չեմ նայում չի-բի վերայ,

Որպէս շնանք դիպանքի:

Ես խնդրումեմ պարճաւ նորա—

Ընդհանուր կապ տիեզերքի

Եւ տիեզերքն է բիւր-հոգին:

Ես սերտումեմ լի-բիւր:

Որ վանկ կապէ իմ սուր հոգին,

Որ զրուցեմ նորա հետ:

Մե՛ծ է իմաստն այդ մեծ գրքի,

Մե՛ծ է նորա Հեղինակ:

Ես անցաւոր — որդի հողի; —

Նա Անանց — անժամանակ:

Նա Պարճաւ է բիւր-բիւր,

Միշտ Ջոր-բիւրն բարձունից:

Նա Նիրդին շիւր է հարարան:

Եւ ես շինուած եմ նորա:

1864 թուին.

Ամարանոցում.

# ՄԲ ՉՈՒՄԲԲ ՄԱՆԳԱՆ.

Աւրախութիւն քեզ անպակաս,

Ո՛վ դու մանուկ սիրելի.

Ծընս, ծաղիկս և ծերանաս,

Տարւի պսուղ արժանի

Որպէս ծաղիկ, մանուկ, քաղցր ես,

Եւ շնորհապէղ որպէս օր:

Մանուկ, մանուկ, ինձ չխարեւ,

Միշտ կայ այդպէս լուսաւոր:

Նայիր վերս, տես ինչ սիրուն

Այնտեղ փայլումեն աստղեր,

Եւ անթիւ են, և շողշողուն,

Որպէս երկու քո աչեր:

Այնտեղ, հողեակ, բնակվումե

Մեր սուրբ Հայրը երկնքի,

Նա է, որ մեզ ուղարկումե,

Եւ կեանք, և Սէր, և Հոգի:

Նա ծագումե իւր արեգակ

Ամենայն օր քո վերայ,

Որ զուարճանաս որպէս թռչնակ; —

Օրհնիր Անուն սուրբ Նորա:

Ունի Որդի մի Միածին,

Նա է Փրկիչ աշխարհի.

Նա խաչ ելաւ, տուեց հողին . . .  
Որ դու լինիս մարդ բարի:

Նա սիրելով իւր թշնամիք,  
Օրհնեց խաչին և ներեց,  
Եւ մեղ գրեց իւրեան որդիք:  
Սիրել միմեանց պատուիրեց:

Նա հեղու-թեամբ յաղթեց Չարին,  
Եւ մեղ ասաց, որ և մեք  
Հետևենք այդ օրինակին, —  
Չհպարտանանք մեք երբէք:

Մանուկ սիրուն, աղօթք արա՛,  
Երբ դու գլուխդ խոնարհած,  
Համբուրումես պատկերդ աստ՛,  
Ոսկէնկար զարդարած:

Եւ ժպտումէ որպէս շուշան,  
Անհոգ մանուկն մօր գրկին . . .  
Այսպէս թռչնակը ճիւղի վերան,  
Օրհնումէ իւր հրեշտակին:

Եկէք Հայոց Եկեղեցի . . .  
Այնտեղ կ'տեսնէք զմայլուած  
Պայծառ Դէ՛ւռ այդ երկնացի,  
Գարնան վարդը կիսարաց:

## Մ Ն Բ Ա Ղ Գ

Մա աղջիկ էր այնպէս կայտառ,  
 Լի մանկական աշխուժով;  
 Նա նայումէր այնպէս պայծառ,  
 Մի շատ պարկեշտ հայեացքով:  
 Նա անմեղ էր. անդորրու թիւն  
 Միշտ ողջունումէր նորան;  
 Նա ծաղկումէր ուրախ, անհոգ:  
 Որպէս վա՛րդը մայիսեան:  
 Մինչ ծագումէր արեգակը:  
 Մինչ ժպտումէր առաւօտ,  
 Երգ երգելով նա ճեմումէր  
 Ծաղկոցի մէջ քաղցրահոտ:  
 Նա թափումէր շէ՛շուշուշ  
 Մանուշակների վերայ;  
 Անխորձ սիրտը թրթռումէր  
 Որպէս թռչնակն մտակայ:  
 Բայց այժմ տեսէք. ինչ հոգու վիշտ  
 Նշմարվումէ աչքերում.  
 Քնքո՛ւշ էակ, թառամել է  
 Այդքան մանուկ հասակում:  
 Գոյնը թռած, անբո զգու թեան  
 Կնիքը դրած է ճակատին;

Կեանք չեն խօսում անմահութեան  
 Շրթունքը այն երկնային,

Հատ կուսական, անմեղ յոյսեր  
 Խաւարուած են և շիջած;

Հատ պարզամիտ զգացմունքներ  
 Նորա մէջ թունաւորուած:

Այսպէս լինումէ մահապարտ,  
 Երբ, հանելով խոր հոգոց,

Գահճի կացնին նա լուռ, հանդարտ  
 Խոնարհումէ պարանոց:

Ա՛խ, ո՛ւր գնացին, իմ գեղեցիկ,  
 Խաղաղութեան վարդերը.

Այդ ի՞նչ բոպէք չարաբաստիկ  
 Խլեցին քո հանգիստը:

Եկեղեցում լուռ կանգնած է,  
 Անշարժ որպէս գերեզման;

Փեսայացուի խելքը գնումէ,  
 Չեռք բռնած աղջկան:

Այդ փեսան է, ա՛խ, այդ փեսան,  
 Որ տիրումէ աղջիկը.

Նորա երբ, նորա խեղճ  
 Վաճառել են շնորհ:

## ՀԵՆՐԻՍ ԲՄ.

Քու իմ Հանդիստ, Հաւատ և Յոյս,

Ծով անսահման բարութեան;

Գնի, դնի դարձեալ սառը հոգուս

Կեանք ես ցօղում յարութեան,

Տօղան, աղբիւր կենդանութեան,

Տօղան առատ հոսանքով;

Եւ իմ ժամերը դառնութեան

Թող խորտակուին քո շնորհով:

Ե՛կ պոչէտի անկեղծ աշխոյժ, —

Եւ ապագայ օրերին —

Ես կ'աւանդեմ անուն անոյշ

Կապուտաչևայ Գեղեցկին; —

Այն գեղեցկի, որին այնքան

Գափնի պսակ հիւսեցին,

Եւ պատանիք ախտարորդք

«Պ-ր-ե-լ + - - - -» կոչեցին:

Որի աչերն շողշողումն

Որպէս աստղերն երկնքում;

Հայեացքի մէջ աստուածեղէն

Բոլոր դրախտն է ցոլանում:

Մե՛ծ են երկինք, մե՛ծ է աշխարհ, —

Բայց -էր- մե՛ծ է նոցանից,

Եւ առաւել իմ սէրս պայծառ

Այն լուսաւոր աստղերից,

Հատ գանձեր կան, շատ և ակներ

Ուկիանեան յատակում;

Հատ զգացմունք կան, շատ խորհուրդներ

Սիրով վառուածի սրտում:

1864 թուին,

## ԵՐԳ ՄԵՌԱՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ.

Ազնիւ ընկեր, մեռանումեմ,

Բայց հանգիստ եմ ես հոգով,

Իմ թշնամիքս ես օրհնումեմ, —

Օրհնումեմ քեզ Աստուծով:

Հեռանումեմ, անգին ընկեր,

Չ'գնահատած ոչ որից.

Բայց հաւատաբար անձնանրուէր

Ազգիս մշակ կ'հաշուիմ:

Ազնիւ ընկեր, չը մտանաս.

Անդամաճան, ջերմ սիրով

Ես սիրել եմ իմ հայրենիք, —

Քննա և դու նոյն շաւղով:

Խեղճութիւնը Հայոց ազգի

Կարեկցարար մտածիր.

Ոսկէ գրքոյն Եղիշէի

Քաջ առաջնորդ քեզ ընտրի ր:

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան

Ազատ կամքով ու խիղճով;

Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,

Իւր խնկելի Քաջերով:

Հայրենիք, — սեղան սրբութեան —

Ես Աստուծոյ առաջև

Հատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ,

Որ ծագէ քեզ նոր արև.

Իմ մտերիմ, մահըս մտէ,

Բայց հանգիստ եմ ես հոգով.

Որովհետև խիղճս արդար է,

Ճշմարտութեան զատադով: —



Ուր նուիրական Նաճատակներ  
 Ինձ վիշապին զինուորեցան .  
 Պատերազմի կանաչ գաշտեր  
 Նոցա արիւնով ներկուեցան :

Ուր Հայրեր մեր երանելի .  
 Գրիգոր, Ներսէս, Մեմբուպ, Սահակ,  
 Մեծարեցին անուն ազգի,  
 Եւ ննջեցին ծաղկապսակ :

1864 թուին .

ԱՅՆ ԵՐԱՅ ԷՄ .

Եւ ծանր է վիշտս, և ես քնուեմ, —  
 Եւ ահա երազ խորին գիշերով .  
 Այն մեծ երազ է, ես տեսանումեմ .  
 Հայի մութ աստղը փայլեց մի լույսով,  
 Եւ ահա Հայերն, նախանձով վարուած,  
 Գիմումեն յառաջ, որպէս այլ ազգեր,  
 Եւ մտանումէ նոցա մեջ Աստուած,  
 Բերելով իւր Տէտ միաւորիչ սէր,  
 Եւ կարծես, այդ սէրն պէտք է հաստատուի,  
 Որ վարձատրէ արիւնով հոսած  
 Նոցա արտասուք, և սգևորուի  
 Անծաղիկ կեանքը Հայ-հազարակաց :

Զարթնումեմ քնիցս . — ինձ պաշարումեն  
 Նոյն իսկ հողեկան ցաւի սև օձեր,  
 Եւ Հային շար բաղդ ինձ դուշակումեն .  
 Ցաւեցէք, Հայեր . տեսաձս — երանգ էր :

Ես տխուր եմ և չգիտեմ,  
 Ի՞նչպէս կանցնէ իմ դարը .  
 Ես կարծումեմ, որ բանտում եմ . —  
 Հեղձամիճուկ է օրը .  
 Եւ հանդուժեմ կեանքիս հողին,  
 Իմ նազելի մանկու թիւն,  
 Եւ տալու չէ այս աշխարհին  
 Շնորհակալ իւր ողջոյն .  
 Նա կը մեռնի, և ոչ որ ձեռն  
 Պարզելու չէ դէպ ի նա .  
 Առէք իմ բեռն, իմ ծանր բեռն, —  
 Կամ հո՛ղ, մոխիր իմ վերայ,  
 Չէ, պայծառ չէ իմ հորիզոն,  
 Յառաջ նայել չկամիմ .  
 Այնտեղ միայն սև Ա. քերտն,  
 Բայց կաղմ նաւակ ես չունիմ :

Հողիս անգոր, Հողիս Համբր, —

Ե՛կ և սորան դիմացի՛ր .

Խաչրս դժուար, Խաչրս ծանրր .

Կեա՛նք, ինձ ինչու խաբեցի՛ր :

1864 Թուին,

Քոզորոզսկ .

### Ե Ր Ա Ջ .

Ես լսեցի մի անոյշ ձայն, —

Իմ ձերացած մօր մօտ էր —

Փայլեց նշոյլ ուրախութեան,

Բայց ափսոս, որ երազ էր :

Կարկաշահոս աղբիւր այնտեղ

Թաւալումէր մարգարիտ . —

Նա յստակ էր որպէս բիւրեղ,

Այն երա՛զ էր ցնորամիտ :

Եւ մեղեդին տխուր, մայրենի

Յիշեց մանկութեան օրեր .

Մօրրս Համբուրն ես զգացի ;

Ա՛խ, ափսոս, որ երազ էր :

Կուրծքին սեղմեց կարօտագին;

Աչքերս սրբեց — շատ թաց էր, —

Բայց արտասուքս գնումէին . . .

Ա՛խ, այդ ինչու՞ երազ էր:

1864 թուին

Յունուարի 3.

### Գ Ի Ը Ե Բ.

Սիրուն պատկեր: Պարզ գիշեր էր: —

Եւ օղեղէն ուկիանում

Փայլումէին անթիւ աստղեր,

Եւ ուրա՛խ էր սիրտըս զարկում:

Ամբոսական ծաղիկներ վառ

Անուշութիւն էին բուրում,

Եւ երկնքի ցօղ կենարար

Բնութիւնը էր զովացնում:

Եւ ես անխռով երգումէի, —

Եւ իմ երգըս խիստ մաքուր էր.

Ազատութիւն էի երգում,

Հայրենիքի պարծանք ու սէր:

## ՕՐԲՈՐԳԻ ԱՐՏԱՍՈՐԵԷ.

Հանգիստ իմ անոյշ,

Անցար, գնացիր,

Միայն վերք անբոյժ,

Սրտումս թողեցիր:

Սոխակ գեղեցիկ

Կանաչ պարտիզում

Երգելով քաղցրիկ,

Ինձ չէ գրաւում:

Քեզանով միայն

Երջանիկ էի;

Տիկին ինքնիշխան

Ինձ կարծումէի:

Ցերեկը մենակ,

Փակուած սենեկում,

Ողբումեմ անյագ, —

Աչ որ չէ լսում:

Գիշեր է գալիս —

Մահի՞ճ եմ մանեմ:

Տրտում է հոգիս,

Քունքս չէ տանում:

Ո՛հ սիրտըս այրուած ,

Ողջ քեզ է կանչում ,

Ողջ քո անմոռաց

Անունդ է յիշում :

Ծաղեր թո՛ւխ , երկայն ,

Աչեր գրաւիչ ,

Ի՛նչ հասակ , ի՛նչ ձայն ,

Ի՛նչ հոգի կտրիճ :

Անգո՛ւթ , ինձ խարեց . —

Ո՛ր յիշին սիրեց :

Ա՛խ , նա ինձ դեռ վաղ ,

Պատրաստեց դագա՛ղ :

1864 թուին .

### ԱՌԱՋԻՆ ՍԷՔ .

Երեկ տեսայ քեզ պարտիզում .

Ծաղկած էիր վարդի պէս , —

Եւ քո պատկերդ հոգուս միջում

Նկարուեցաւ լուսատես :

Այնտեղ , ո՛վ կոչս , ինձ գերեցիր ,

Այնտեղ ես քեզ սիրեցի ,

Այնտեղ հոգիս ջերմ , սիրալիք

Ես քեզ ընծայ բերեցի :

Այժմ չ'ունիմ մի ուրախ ժամ .

Տխուր է սիրտս իրր դազադ .

Ես մեռանել մինչև անգամ

Ցանկանումեմ , ո՛հ , աւա՛ղ :

Որպէս օձից ժանտ , թունաւոր ,

Գու ինձանից փախչումես ;

Տեսանելով ինձ սգաւոր ,

Ծիծաղումես , խնդումես . . .

1864 թուին .

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ .

Օրհնեալ լինի այն սուրբ օրը ,

Երբ նորա մօտ նստած էի ,

Եւ իմ սրտիս խորհուրդները

Մի մի նորան յայտնումէի :

Ես օրհնումեմ այն սուր նետը ,

Որ նա ցրցեց սրտիս խորքում ;

Եւ այն քաղցր սիրոյ թոյնը ,

Որ նա թափեց հոգուս միջում :

Օրհնեալ լինի այն ստեղծուած ,

Այն սիրուն կոյսն , հրեշտակ պայծառ ,

Որի առաջ , ծունրը դրած ,

Ողբումէի այնքան երկար :

**ԲՍ ՎԵՐԱԳԵՐ.**

Ես գրում եմ, կշտանքներով  
 Անխիղճ մարդի սև գործեր.  
 Մոլոր կարծիքն պարտաւելով,  
 Վկայել կամիմ նորան սէր:

Եւ փշեպ է իմ ճանապարհ.  
 Ամբողջ դժոխք և բողոք  
 Ինձ լարումեն կորուստ վատթար.  
 Ինձ բարեկամ — և ո՛չ ոք.

Հաստատ ոտով եւ գնում եմ,  
 Ճշմարտութեամբ զինուորուած;  
 Անկեղծ քնարով եւ օրհնում եմ  
 Եւ թշնամիքս և Աստուած:

1864 թուին

Սեպտեմբերի 11

Բ Ո Ր Ն Բ Գ Ե Մ Ո Ր Բ Բ Բ Ե  
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Է .

I.

**Ի**'նչ անուշութեամբ սահումն ժամր  
Գեղեցկատեսիլ, խնկահոտ դարնան,  
Որքան ոգելից վառվումն սլտեր,  
Անձնատուր եղած քաղցր անդորրութեան,  
Եւ բնութիւնը ռսկի ժպիտով,  
Զգեստաւորուած վարդապեղ քօղով,  
Հանդիպումէ օր: Նորեկ առաւօտ:  
Ցօլուն շաղ-գոհար. ճօճումէ արօտ:  
Եւ ծածանուելով կայտառ շատրուան,  
Ցայտումէ շիթերն իւր աղամանդեան,  
Եւ նորա տրտունջն այնքան սիրելի  
Գրաւումէ աչերդ և սիրտ և հոգի:

II.

Երկինք կապուտակ: Առողջ, զովարար  
Հնչումէ զեփիւս: Գառներ և որթեր

Խաղումեն դաշտում : Թնդումէ անտառ :  
 Երգումէ սոխակ : Գողումեն թփեր :  
 Ամէն մի թռչուն , ամէն մի էակ  
 Վերածնվումէ այս շնորհարեր  
 Աւաղանի մէջ , և ձոր ընդարձակ  
 Եւ հովիտ կանաչ և վառ բլուրներ :  
 Թէև խռոված լինիս , ո՛վ օտար ,  
 Հակառակ կամքիդ , այդ կանաչավառ  
 Տեսարանները քեզ կը հրաւիրեն ,  
 Ար քաղցր ստուեր վերադ տարածեն :

### III.

Չորս կողմրդ գարնէն : Անաչ կատարով  
 Հողաբլուրներ յառաջ են գալի :  
 Եւ խաղաղ , անոյշ , հանգուցիչ քնով  
 Մոռանումես դու վիշտը աշխարհի :  
 Վարսագեղ տնկած ծառերի շարքեր  
 Մեղմիկ շարժվումեն : Աւրախ և զուարթ  
 Վազումէ առուակ . — Սիրելի պատկեր .  
 Ճղած կոկոնից դուրս նայումէ վարդ .  
 Կ սրմբումէ վարդ , վառ արշալուսի  
 Չ քնաղ դուստրը , բայց համաձայն չեմ ,  
 Ար դա սքօղէր ամօթխած կուսի  
 Գեղեցկութունը , որին սիրել եմ :

## IV.

Սիրոյ համրոյրներ նորա շրթունքին  
 Ծաղկումեն դարնան հողելից կեանքով,  
 Կարծես, սաստումեն երիտասարդին,  
 Երբ կամէր քաղել դորանց հայեացքով .  
 Եւ մարմարիոնր նազուք ձեռների,  
 Եւ իբրև փրփուր լանջքը ձիւնափայլ,  
 Եւ այն շողշողուն մետաքս մազերի, —  
 Անհոգ թոյլտուած ուսերի վերայ —  
 Առնումեն նորան հրեշտակ կատարեալ,  
 Ար ամոքումէր վիշտերդ դժնեայ,  
 Եւ տղայական մաքուր ցնորքով  
 Բացումէր ձեզ կեանք անվերջ հոսանքով .

## V.

Ես կարող էի այն սիրողային  
 Յարմարել դորան խօսքերը Լօրդի,  
 Ար նա տալիս է Լեդի Նանթային\*,  
 Նախերգանքի մէջ պանդուխտ Հարօլդի.  
 Ո՛վ Բայրօն, Բայրօն, դա ոգևորեց  
 Քո կարող գրիչ, Գա քեզ ներշնչեց

\* Լեդի Հարլօտտէ, Հեշլէ Օքսֆօրդեան Կամսի դուստրը, որ  
 այդ ժամանակ (1812 թուակ.) դեռ ևս տասն և մի տարեկան էր:

Այն վերին թռիչքը բանաստեղծու թեան .  
 Երկիւղած սրտով քնարիդ մեծու թեան ,  
 Եւ անբռնադատ քո հոգու զեզման  
 Պէտք է նախանձեն բոլոր պոյէաներ ,  
 Որպէս հանձարիդ մի համեստ նուէր : —  
 Երկա՛ր կը պատուեն յիշատակդ սզգեր

## VI.

Համաշխարհակա՛ն պոյէտ պանծալի ,  
 Գու քեզ կանգնեցիր երկնահաս արձան .  
 Ի՛նչպէս մոռանանք , փա՛ռքդ Անդլիայի  
 Որ բարձրագոյն է , քան սարերն ալպեան ;  
 Փա՛ռք — որ ծնել է քո անգին քնար ,  
 Որ աւերակներ երգեց Յոյների , —  
 Ո՛րպէս Հելլադա է հրաշափառ :  
 Ո՛վ Բայրօն , ասա՛ , ո՛վ քո մէջ դրեց  
 Այն վսեմ Բ-ի-նն , Կ-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն ;  
 Ի՞նչ պէս քո հոգին խոր մէջ ամփոփեց  
 Այն Ի-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն ամենակործան :

## VII.

Եւ Լո զմայլած , շատ տեղ ման եկայ ,  
 Հանդիսարաններ շթողի մարդկան . —  
 Գեղեցկու թիւնը միանգամ գտայ ,  
 Երբէք չտեսայ Գեղեցկիս նման ,

Ոչ երազի մէջ, ուր վառուն հոգին  
 Հրաշագործումէ պայճառ տեսիլներ  
 Ո՛չ գարնան շունչը, ո՛չ հարաւային  
 Ինձ չստեղծեցին այդպիսի պատկեր:  
 Նորան աւանդել ես ձեզ չգիտեմ,  
 Գուք ինքեանք տեսնէք — ես ի՞նչպէս ասեմ:  
 Մեծ գեղեցկութեամբ — առաւել հոգով,  
 Եւ պայճառայած գիտութեան լուսով:

## VIII.

Լսեցի և ես խօսքերի հնչիւն,  
 Երբ ոգեխառնուած երկու սիրահար  
 Խօսակցումէին. բայց այն շնչիւն,  
 Գրաւ իչ լեզուն այն կենդանարար  
 Արդեօք, դոցա հետ կը հաւասարեմ:  
 Եթէ իմ կեանքում մի ևս նշմարեմ  
 Այն աստուածեղէն ներդաշնակութիւն, —  
 Խնցի՛ երկնքի ես արքայութիւն.  
 Այն խօսքերի մէջ կար ամենայն բան,  
 Եւ դրախտ անոյշ, և կեանք անսահման,  
 Ափսո՛ս, որ չունիմ խօսք բացայայտիչ.  
 Կարո՞ղ էք զգալ — ոչինչ է գրիչ:

## IX.

Գարուն է: Սիրտ իմ, ի՞նչ ես հառաչում,  
 Մի՛ թէ չկամիս ողջունել նորան;

Քանի՞ տարի է դու չես շոշափում  
 Նախկին օրերի շունչը քաղցրութեան .  
 Քանի՞ տարի է, որպէս թշնամի,  
 Չկամի՞մ հաշտուիլ քո վիճակի հետ .  
 Ինչո՞ւ կծու վիշտ — որպէս մտերմի,  
 Օրով, գիշերով է քեզ կարապետ .  
 Գարուն, ո՞վ գարուն, ո՞րքան ծանրութիւն  
 Ածումես վերաս, ո՞րքան տխրալի  
 Յիշումես բոպէք: — Ո՞վ դառն յայտնութիւն .  
 Նիրհած է հողին, նա կը նորոգուի ,

## X.

Բայց գիւղական կեանք բնութեան ծոցում ,  
 Քանի՞ պարզութիւն և գեղեցկութիւն .  
 Եղեմայ դրախտն է այնտեղ փայլում ,  
 Նորից ծնումես — և նոր մանկութիւն .  
 Մարդաշատ աղմուկ մայրաքաղաքի ,  
 Իմ բարեկամներ, չէք լսում այդտեղ .  
 Ոչ գղրղիւնը վազող կառքերի ,  
 Աչ խոշոր յիշոցքը ամբօխի տղեղ ,  
 Խորհուրդ եմ տալի, և այն փրկարար ,  
 Եւ այն մի խորհուրդ քաջառողջութեան ,  
 Երեք ամսով չափ — թէ ունիք հնար —  
 Գուրս գալ քաղաքից դէպ ի ծոց բնութեան .

## IX.

Այնտեղ ծաղիկներ թեթե շրշխնով  
 Թափումն ամբրոս և քուն փափկութեան;  
 Եւ ժրագլուխ մեղուն բղղալով,  
 Գնումէ գործել մեղր պատուական.  
 Այնտեղ մանկագեղ, ժամն առաւօտեան  
 Վարդեայ ձեռներով հանգիստ է սիրում,  
 Եւ սիրարդ հեռու աշխարհիս ունայն  
 Նենգից, կոյր բողբոց, սէր է ճաշակում,  
 Բայց աւանդ, կըրարք, չլինի կարծէք,  
 Որ ես իմ ներկայ կեանքն եմ նկարում;  
 Այդպէս չէ, կըրարք, ինձ հաւատացէք.  
 Անցած, գնացած օրերս եմ յիշում.

## XII.

Բօգորձակ, գիտես, ո՛վ գեղեցիկ գիւղ,  
 Ակամայ գործըս մի կողմ գնելով,  
 Երգ եմ բերել քեզ. թոյլ տուր ինձ մի ճիւղ  
 Քաղեմ քեզուէ քնարիս ձօնելով.  
 Նա միւսանգամ գուցէ կը վառուի:  
 Տեսնելով այդ շիւղն, Ո՛վ կանաչ թփեր,  
 Ստուեր տուեցէք մի օտար Հայի,  
 Որ այց է գալի ձեզ օր ու գիշեր:  
 Բայց, ո՛հ, չեմ տեսնում ես ուրախութիւն,  
 Ժամ մի չղգացի նորա արձագանք,

Ճեմումեմ ձեր տակ, բայց ո՛չ հաճութիւն  
Գրիումէ կուծքս, ո՛չ . ս'է օձ, կապա՛նք . . .

## XIII.

Գիտէ՞ք, ես կեանքից այլ չեմ սպասում  
Ոչ յաջողութիւն, ո՛չ պերճ ապագայ,  
Ես խանգարվումեմ և չեմ ափսոսում .  
Ոչե՛նչ չեմ թողնում աշխարհիս վերայ . . .  
Ես դեռ մատաղ եմ : Քայց մտածելով  
Մաշել եմ կեանքս, ունայն ապրելով,  
Արդէն իմ կուրծքը այլ բարձրանում չէ,  
Եւ առաջուայ պէս չգիտէ շնչել .  
Հանգիստ է խնդրում, բայց կը գտանէ  
Նորան հողի տակ . . . նա կամի՛ ննջել . . .  
Այսպէս նաւորդը կոծուելով երկար,  
Ալիքների մէջ գտնումէ դադար :

## XIV.

Վաղ առաւօտուց մինչև խոր գիշեր  
Ես թափառել եմ ուռիների տակ,  
Երբ բոլոր լուսին գեղեցկանումէր  
Ամպերի միջից : Հնչումէր սոխակ ;  
Երբ սոկենչոյլ ալիքն առուակի  
Թաւալվում էին մանկական խաղով,  
Քաղցր քան ձայնը արծաթի զանգի,  
Իւրեանց հասանքից խոխոզ հանելով ;

Եւ բնութիւնը այս պատկերներից  
 կարծես նոր ծնաւ Արարչի ձեռից:  
 Երկինք ու երկիր նոյնպէս գեղեցիկ,  
 Անտառի խորքում քնքուշ դայլալիկ:

## XV.

Եւ այստեղ ես շատ երգեր եմ հիւսել  
 Հայոց բարրառով և Հայոց խօսքով:  
 Ես Հայաստանի կսկիծն եմ լսել,  
 Այրուել եմ սրտով, այրուել եմ հոգով: —  
 Ես մտածել եմ, երկրիս երեսին  
 Թէ այս աղզը իւր պահեց գոյութիւն  
 Այնչափ վտանգից անչափ մոլեգին,  
 Ունի մի խորհուրդ վերին և թաքուն:  
 Ի՞նչ է, ո՞վ հայ մարդ, զարմանումես դու:  
 Որ հիւսիսային մութ երկնքի տակ  
 Հանդիսանումէ հարազատ լեզու:  
 Երբ քո գերութեան զգումեմ կապանք:

## XVI.

Երբ օրհասականդ դամբանի ծոցից  
 Ներկայանումէ հոգուս առաջի,  
 Երբ արտասուքը Հայիդ աչքերից  
 Թափումէ երկիր որպէս յորդ անձրև;  
 Երբ յուսահատուած սովից մահարեր,

Ժխտումես հրձ և Կի+ ազդի:  
 Երբ Վատիկանի հրապուրիչ սձեր \*  
 Առաջարկումեն քեզ թիւնտ ոսկի,  
 Լակի, որ գին է մարգասպանութեան  
 Վերջին հացի գին խեղճ ժողովրդեան, —  
 Եւ այդ անունով Աւետարանի:

## XIIV.

Ո՛վ կաթողիկեան կուրութեամբ խոցուած  
 Չար քարոզիչներ երկպառակութեան,  
 Ո՛վ մոլի Հոմ, ո՛վ Նեոն աւերած  
 Մեծին Պետրոսի առաքելութեան,  
 Ինչո՞վ, ասացէք, ձեր անմիտ ձէսեր,  
 Կարկատած շքով հեթանոսական,  
 Նախամեծար են, քան խաղաղասէր  
 Գաւանութիւնը Լուսաւորչական;  
 Եւ ամօ՞թ չէ ձեզ, ազդ խեղճ, ազդ անմեղ  
 Փոխել կրօնից, որ Յիսուսի էր: —  
 Չեզ խեղճելու չէ՞ արդեօք ջրհեղեղ:

## XVIII.

Ո՛չ քրիստոսի, այլ սատանայի  
 Գայթաղութեան էք աշակերտներ:

\* Այսպէս է կոչուում Պապի վեհաբանը:

Ի՞նչ է պատուիրում ձեզ Գողգոթայի  
 Անմահ Նահապետ — Ատելութիւն, թէ Սէր:  
 Եւ այդ Նահատակ, որ Աւետարան  
 Իւր մահի գնով կտակեց աշխարհին.  
 Եւ Լուսաւորիչն — զո՞հ ճշմարտութեան —  
 Ո՞չ գոյն իսկ ուսումն աւանդեց Հային.  
 Ո՞չ Թաղէօսի աթոռ նստելով,  
 Նմանեցաւ նորան խօսքով ու գործով.  
 Չարեր, լսեցէք ձեր խղճի ձայնին:

## XIX.

Բայց զգո՛յշ կացէք դուք Փարիսեցոց  
 Խճուհո՛ւ, այն է Ի՛շտ-ի՛շտ-ի՛շտ,  
 Որոնք բռնալով և կական և կոծ,  
 Կամին ցուցանել բարեպաշտութիւն,  
 Որ խոնարհումն առաջի մարդկան,  
 Արդար միամիտ ի բեանց կարծելով,  
 Բայց մեռեալների իսկ են գերեզման,  
 Լէ՛ր-դ-ի-ն-ի-ւ-լ, Դէ՛ք --ի-ն-ի-ւ-լ:  
 Այսպէս Քրիստոս կրբեմն վշտացած,  
 Գարձաւ կեղծաւոր Հրէից ցեղին;  
 Այսպէս և այսօր մէք վիրաւորուած,  
 Գառնումենք խարդախ Նզուխաներին \*

\* Մեր խօսքը Նզուխաների հետ է, շարահօդի Քարողիչների, և  
 ո՞չ ընդհանուր կաթուղիք քրիստոնէութեան:

## XX.

Գոցա բերանից մէք լսելու չենք  
 Սուրբ սիրոյ ուսմունք և ճշմարտութիւն .  
 Գոքա պիտոյ է — մէք այդ լաւ գիտենք —  
 Միշտ կեղծաւորութիւն և մնան սողուն .  
 Գոքա պատրաստ են առնել ամէն բան ,  
 Երբ զօրաւոր էր «չ»-ը և «ի» ,  
 Երբ փաղաքշելով , մի պատուի նշան  
 Պարգևեց գոցա Պապը Հռոմի .  
 Բայց ձեր լեզուքը թող չյանդգնին  
 Օրէնքը սիրոյ այլապէս հնչել .  
 Թող անմեղ զոհից երկինք չփակուին ,  
 Որպէս սովոր էք ձեզ աշակերտել .

## XXI.

Եւ դու , հայ Աղեր . բաւական է քեզ .  
 Նայիր դու , Հայր իմ , ինչ մեծակշիռ  
 Եկել են օրեր . դու այդ չգիտես .  
 Մի բնոց աւերդ և լաւ ըմբռնիր :  
 Թէ կենդանի է դեռ քո մէջ հոգի ,  
 Թէ քո կուրծքի մէջ չէ մեռել Աստուած :  
 Թէ դու տեսնումես լոյս արեգակի ,  
 Չէ , դու չես կարող մնալ քնէած .  
 Թէ կամակոր ես , քեզ կորսնաս թշուառ .  
 Իսկ թէ ուշադիր , քեզ կեանք մեծ ասիառ :

Գործ ենք պահանջում, գործ, արիութիւն,  
 Ոչ անփոյթ հանգիստ և զբոսանքիւն:

## XXII.

Բարձր քարոզիր սուրբ Աւետարան,  
 Որպէս ճանապահ դէպ ի գիտութիւն;  
 Թող լցուին սրտերն մտիթարութեան  
 Սուրբ աղաղակով: Եղևր դու արթուն,  
 Որպէս արթուն էր միածին Որդին,  
 Իւր անմեղ կեանքը աշխարհին:  
 Քեզ եմ բարբառում, որ աշակերտ ես  
 Այդ մեծ Աստուծոյն. դու ինձ լսումս:  
 Ո՛վ կղեր, կղեր, ծանր է քո բեռն  
 Աստուծոյ առջև, եթէ դու այսօր  
 Հոգի չզգենուս, չպարզես քո ձեռն  
 Դէպ ի սուրբ վաստակ, որ կեանք տայ քեզ նոր:

## XXIII.

Մի նայիր անբաղդ քո ազգի վերայ,  
 Տես, ի՞նչ ալեկոծ ծովի մէջ է նա.  
 Առազաստ պատռած, կայմը խորտակած,  
 Հանթեր, կայծակներ մահո՛վ զինուորուած:  
 Ղեր կաց հոգևոր Հայր վիրաւորի,  
 Ո՞ր ես դու, ձայն տուր, թող լսենք քո ձայն,  
 Լսենք քո քարոզ հայրենասիրի,  
 Որի համար սուրբ է խեղճ Հայաստան: —

Չայն չկայ, աւանդ, Եղբայրք, ի՞նչ անենք,  
 Ի՛նչպէս դարմանենք այս մեր վտանգիս,  
 Եւ հոգեորի սիրտը գղձօղենք,  
 Եւ հասարակին կարգա՛նք աւետիս:

1864 թուին

Յունիս, Յուլիս.

### ԱՐԳԱՅԻՆ ՎԲՄԵ.

Յառա՛ջ հայութիւն, յառա՛ջ ազգութիւն,  
 Լուսաւոր դարուս գաղափարներով .  
 Ատիր ազգ անգին, խաւար տգիտութիւն,  
 Մի՛ տար քեզ խարել խարդախ խօսքերով,  
 Կորի՛ր դու խաւար և տգիտութիւն,  
 Կորէ՛ք գարշելի ձեր ճնունդներով . —  
 Մինչ ե՛րբ մեր վերայ այս վայրենութիւն  
 Պիտի բռնանայ գոռոզ ճանկերով,  
 Եղբայր է՛ նա մեզ, որ ճշմարտութեան  
 Զինուորուած այսօր զօրաւոր սրով  
 Կամի քայքայել կապանք գերութեան,  
 Խաւարի բանտը փլատակելով,  
 Բաւական է՛ մեզ, որքան բժացած,  
 Արհամարհեցինք մարդկութեան բարիք . —

Այո՛, բաւական, որքան կուրացած,  
 Կտրեցին կեանքից մեզ անկեանք մարդիկ,  
 Այսուհետև Սէր դէպ ի գիտութիւն,  
 Որ առհաւատչեայ է բարօրութեան,  
 Այսուհետև Կամք և Աշխատութիւն,  
 Որ մի ծնունդ է առաքինութեան:  
 Հանդիսացէք Այս և Ճշմարտութիւն  
 Թո՛ղ փախչի գիշեր մնայլուած սրտերի:  
 Յաղթիր, խորտակիր, բանականութիւն,  
 Մոլար կարծիքներ, որդիք խաւարի:  
 Ա՛զգ բազմաչարչար, դու ա՛զգ Թորգոմեան,  
 Թո՛ղ անշարժութիւն այդ քո մահակիր:  
 Դէպ ի ասպարէզ առաքինութեան. —  
 Մօտենումէ քեզ աւետեաց երկիր:  
 Աստուածեղէն աջ մարդկութեան Փրկչին  
 Լինելու է քեզ առաջնորդ հզօր;  
 Դէպ ի կրթութիւն յանուն սուրբ Խաչին. —  
 Ա՛յդ է պահանջում դարբն լուսաւոր:  
 Մա՛հ Ջոյիլներին, նախանձով վառուած,  
 Աքսոր ու կորուստ Աւստ-Սարգիսներին:  
 Գոցա համար լոյս տգիտահալած  
 Գարձել է մի ժանտ դահիճ՝ դառնագին,  
 Գոքա անձնական օգտին պարապած  
 Իրաւունքն ազգի զարկել են գետին;  
 Եւ սուտ հայութեամբ դիմակաւորուած,  
 Փոսեր են փորում բարի մարդերին:

Առողջ մտածողն — աշխարհիս է :  
 Ճշմարիտ խօսողն — Հոյ՛ն Իրե՛ն :  
 Ինչ որ Հային է — այն երկնքից է ,  
 Գնա՛տ արա սոյա , Տէ՛ր իմ , Աստուած իմ :  
 Միայն կաշառուածն անարգ արծաթից ,  
 Կարող էր այդպէս խորհել ու մտածել :  
 Միայն մոլորուածն կեղտոտ ախտերից  
 Կարող է այդպէս իւրեան փայփայել :  
 Կըզու՛նալ է նա և միշտ նըզու՛նալ ,  
 Որ քարոզել է սուտ ազգայնութիւն :  
 Որ ազգի առջև դարբս լուսափայլ  
 Խաւար է կոչել և տղիտուի իւն :  
 Թունաւորուած են օրերս իշտալի  
 Ազգիս անզգայ շահամոլներից :  
 Տեսնելով ձեր գործք , ո՛վ ճնունդ խժի ,  
 Արիւն է կաթում իմ խարշած սրտից :  
 Սրբութիւն պղծած , հաւատ կաշառած ,  
 Ազգ ու հայրենիք անարգ վաճառուած :  
 Կորգ , օրէնք , պատիւ — բոլորն օտնակոխ ,  
 Ամէն տեղ դժօխք , մատնութիւն ու ռիս :  
 Յուսահատութեան սևամած ամպեր  
 Ալէկո՛ծ վումեն իմ սրտի վերայ :  
 Ո՛հ , ինչ դառն վիճակ , ինչ տխուր ժամեր ,  
 Անիծեալ լինիք , մարդիկ անզգայ :  
 Ո՛ր որդիական արտասուք ու սէր ,  
 Ո՛ր ցաւակցութեան դառն հառաչանքներ :

Մի՞թէ ձեր խեղճ մօր գերութեան շղթան,  
 Զգալի չէ ձեզ, որդիք չարութեան:  
 Ա՛խ եթէ, հայ ազգ, մի օր կամ մի ժամ,  
 Աստուած պարգևէր քեզ միտք եխլացի —  
 Գու կ'տեսնէիր յորքան անզգամ  
 Մարդիկ կան քո մէջ, անկեանք, անհոգի:  
 Գու կ'տեսնէիր, որ քո չորս կողմում  
 Օձեր են բնակւում, դահիճք կորստեան,  
 Որ անխիղճ որդիքդ արիւնդ են ծծում,  
 Մա՛հ քեզ խնդրելով, անբա՛ղդ Հայաստան:  
 Նիւթապաշտութիւնն մահու կապանքով  
 Խեղդել է զոցա ծանրը լծի տակ:  
 Չեռներն ու ոտներ պինդ կաշկանդելով,  
 Վարումէ անգիւտ կորստի յատակ:  
 Ո՛րք — որք — որք, — որք — — —  
 Ահա՛ մտածմունք քո բնտրեալների.  
 Սոքա են նոցա էութեան կենդրոն,  
 Կեանքի նպատակ, Աստուած ու կրօն:  
 Ո՛վ ազատութիւն, սուրբ աքսորական,  
 Զոհելու եմ քեզ իմ անձս յաւիտեան:  
 Թո՛ղ ստրկացած դարերով մարդիկ,  
 Գնեն իմ վերայ նզովքի կնիք:  
 Թո՛ղ սրէ շար լեզուն անզօր թշնամին,  
 Թափելով վերաս թունաւոր սլաքներ.  
 Ես պիտի խնդրեմ, ա՛զգ իմ լալազին,  
 Ոտնակոխ եղած քո իրաւունքների:

Ոչ որ չէ կարող հոգուս նպատակ  
 ճնշել, խորտակել բռնութեան զէնքով .  
 Ոչ սուր, ոչ արիւն, ոչ բանտ, ոչ կայծակ,  
 Ոչ նոյն իսկ զեհն մշտաւառ բոցով .  
 Թող անմիտ մարդիկ փրփրան ու գոչեն —  
 Անվեհեր հոգին կ'մնայ միշտ ազատ .  
 Թող ալիք ժայռը զարկեն ու կոծեն —  
 Նա, ծաղր առնելով, կ'մնայ միշտ հաստատ .  
 Բայց սպասեցէք, որդիք խաւարի,  
 Ա՛զայ ձեր վերայ ահեղ դատաստան .  
 Նորան դրաւելու չեն ոսկելի  
 Գանձերն ու պարկերն սև հարստութեան .  
 Ա՛երթան, կ'անցանեն այս դառն օրերը, —  
 Ա՛զայ երևան նոր ազգ, նոր կեանքով .  
 Նա կ'դատէ ձեր վատթար գործերը,  
 Ամօ՛ թու արձան ձեզ նուիրելով .

1861 թուին .

Վ Ե Ր Զ



**ՈՏԱՆԱԿՆԻՈՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ**





## ՈՏԱՆԱԽՈՐՆԵՐԻ ՅԱՆԿԸ.

Նուէր Յորեւեանի . . . . .	5
Առ ընթերցողը . . . . .	7
Նախերգանք . . . . .	9

### ԼԵՒՈՆԻ ԱԻՇՏԸ .

Գլուխ I . . . . .	21
— II . . . . .	55
— III . . . . .	79
— IV . . . . .	107

### ԲԱՆԱՍՏԵՂ ԾՈՒԹԻՒՆՆԵՐ .

Խտալու Տիք և Խտալացիք . . . . .	135
Մեջին Տիգրան . . . . .	140
Միհրդատ . . . . .	142
Բռնաւոր Սուլթան . . . . .	144
Մասիս . . . . .	147
Ճշմարիտ Արօն . . . . .	150
Հովիտ Տրամուլթեան . . . . .	153
XIX դարի Արօնասէրը . . . . .	157
Օրհնեալ Հանգիստ . . . . .	159
Կեցցէ՛ սուրբ գործը . . . . .	160
Աշտարակ . . . . .	161
Հովիւ . . . . .	163

Սրտի կսկիծ . . . . .	164
Առ իմ ընկերը . . . . .	165
Սիրոյ կեանքը . . . . .	167
Սիրոյ կորուստը . . . . .	170
* * * . . . . .	172
Եղու խոնկեր և Զէյթուն . . . . .	173
Ինձ մի սիրիր . . . . .	178
Անուսու մնասիրութիւն . . . . .	179
Խրատ . . . . .	181
* * * . . . . .	182
Խորհրդաւոր Գիշեր . . . . .	183
Սոխակ . . . . .	185
Անտառի մէջ . . . . .	186
Եւ դու այդպէս . . . . .	187
Սիրելի . . . . .	188
Մեծ Թատրոնի մէջ . . . . .	189
Պոյէտ, Նիւթապաշտ և Քաղաքացի . . . . .	191
Զանգակ . . . . .	194
Հայաստան և նորա որդիքը . . . . .	194
Վերջին Հրաժեշտ . . . . .	195
Կրօնասիրի Աղօթքը . . . . .	195
Անահիտ . . . . .	196
Ոգի Հայաստանի . . . . .	197
Ախտաւոր ժամ . . . . .	198
Եւ նա մեռաւ . . . . .	199
Մանկութիւն . . . . .	201

Ճշմարտախօս . . . . .	202
Առ Հրաժարուածք . . . . .	203
Սիրամէլաց . . . . .	205
Գաւաճան . . . . .	207
Մեծատուն . . . . .	209
Մայիս . . . . .	210
Արարատի շրջակայքը և նոցա ազգեցու թիւեր . . . . .	211
Ինքնագիտակցութիւն . . . . .	213
Մի զուարթ Մանկան . . . . .	215
Անբաղդ . . . . .	217
Հանգիստ իմ . . . . .	219
Երգ մեռանող Հայրենասիրի . . . . .	220
Գերի Հայի աղօթքը . . . . .	222
Այն Երազ էր . . . . .	223
* * * . . . . .	224
Երազ . . . . .	225
Գիշեր . . . . .	226
Օրիորդի արաստուքը . . . . .	227
Առաջին Սէր . . . . .	228
Առաջին տեսութիւն . . . . .	229
Իմ Վիճակը . . . . .	230
Բանաստեղծի խորհրդածութիւն . . . . .	231
Ազգային վիճակ . . . . .	244

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՈՒՍԱԼՆԵՐԸ

Էջ.	Գլ.	Գր.	Գր.
38—14	—	կա հացու . . . . .	մա հացու .
50—14	—	խորթ . . . . .	խորթ .
54—4	—	թիւր . . . . .	թոյլ .
60—17	—	վերջին . . . . .	վրին .
63—19	—	վէպք Չայլդ-Հարօլդի .	արկածքն Հարօլդի .
73—22	—	դիւանակ . . . . .	դրանակ .
74—20	—	գելիկոն . . . . .	Հելիկոն
147—4	—	թէ . . . . .	չէ .
149—1	—	թաթուկակ . . . . .	թոթուկակ .
150—2	—	ТОЛКО . . . . .	ТОЛЬКО .
150—4	—	серцу . . . . .	сердцу .
174—10	—	Լուսաւորիչ . . . . .	Լուսաւորիչ .
222—22	—	քրիստոսական . . . . .	քրիստոսական .



